N° 30

Միջազգային
միգրացիոն
իրավունք

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

2-րդ հրատարակություն

International Organization for Migration (IOM)

ՄՄԿ–ը հավատարիմ է այն սկզբունքին, որ քաղաքակիրթ ու կանոնակարգված միգրացիան շահավետ է միգրանտների և հասարակության համար: ՄՄԿ–ի՝ որպես միջկառավարական մարմնի փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ ուղղված է միգրացիայի ոլորտի գործառնական մարտահրավերների լուծմանն աջակցելուն, միգրացիայի հետ կապված խնդիրներն առավել խորը ըմբռնելուն, միգրացիայի միջոցով սոցիալ–տնտեսական զարգացմանը խթանելուն, ինչպես նաև միգրանտների մարդկային արժանապատվությունը պահպանելուն ու բարեկեցությունն ապահովելուն:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն
Մորիյոնզ փող., 17
1211 Ժնև 19
Շվեյցարիա
Հեռախոս՝ +41.22.717 91 11
Հեռապատճեն՝ +41.22.798 61 50
Էլ–փոստ՝ hq@iom.int
Համացանց՝ http://www.iom.int

ISSN 2310-5771

© 2013 International Organization for Migration (IOM)

Բոլոր իրավունքները պահպանված են: Սույն հրատարակման ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական–որոնողական համակարգում, կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, լուսապատճենահանման, գրառման կամ այլ կերպ, առանց հրատարակչի նախնական գրավոր համաձայնության:

07_11

N° 30

Միջազգային
միգրացիոն
իրավունք

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

2–րդ հրատարակություն

Խմբագիրներ՝ Ռիշար Պերուշո
Ջիլիան Ռեդֆաթ–Քրոս

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԲԱՆ

Մարդկանց միգրացիայի երևույթն առաջացել է մարդկության պատմության սկզբից, և միգրացիան գրեթե միշտ կապված է եղել առավել բարեկեցիկ կյանքի ձգտումների հետ: Ներկայումս միգրանտների թիվը գնալով աճում է և դա պայմանավորված է զանազան գործոններով՝ սկսած մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությունից մինչև գլոբալիզացիա: Այդ իսկ պատճառով միգրացիայի երևույթը պետությունների և միջկառավարական կազմակերպություն-ների կողմից ընկալվում է որպես համաշխարհային նշանակության հիմնախնդիր, մեծ կարևորություն ունեցող բազմակողմ իրողություն և համալիր երևույթ, որն այժմ օրակարգային հարց է բարձր մակարդակներում իրականացվող միջազգային զարգացմանը նվիրված քննարկումներում, որոնց նպատակն է ձևավորել ընդհանուր մոտեցումներ միգրացիայի կառավարման հարցերի շուրջ: Վերջինս հնարավոր է միայն միգրացիային առնչվող տերմինների և սահմանումների ընդհանուր ընկալման շնորհիվ:

Միգրացիայի տերմինաբանական բառարանը կազմելու հիմնական նպատակը ընդհանուր կիրառման տերմիններ ու սահմանումներ օգտագործելու միջոցով միգրացիայի կառավարման հարցերի շուրջ ընդհանուր մոտեցումներ ձեռք բերելն է:

Միգրացիայի տերմինաբանական բառարանը, որն արդեն թարգմանվել է տասնյոթ լեզուներով և լայն տարածում ստացել ամբողջ աշխարհում, համարվում է ՄՄԿ ուղենշային հրապարակումներից մեկը:

Հուսալով, որ «Միջազգային միգրացիոն իրավունք. միգրացիայի ոլորտի տերմինների բառարանի» հայերեն տարբերակը կնպաստի Հայաստանում միգրացիայի կառավարմանը, ՄՄԿ-ի Հայաստանի առաքելությունը ձեռնամուխ է եղել դրա մշակմանը հետևյալ մեթոդաբանությամբ: Բառարանի թարգմանությունը հանձնարարվել է «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին: Հայերեն բառարանի առաջարկված տարբերակի փորձագի-տական վերանայման համար հրավիրվել է տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ: Բառարանում տեղ գտած տերմինների ու սահմանումների շուրջ ձեռք է բերվել փորձագետների համընդհանուր համաձայնությունը: Աշխատանքային խումբը քննարկել և առաջարկել է մի շարք նորաստեղծ հայերեն տերմիններ՝ ելնելով հայերենի լեզվամտածողությունից:

Բառարանում տեղ գտած տերմինները համահունչ են միջազգային իրավունքին: Հայաստանի կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերից մեջբերումներ կատարելիս օգտագործվել է տվյալ միջազգային իրավական փաստաթղթի հայերեն տարբերակը:

Տերմինները դասավորված են հայերեն այբբենական կարգով. յուրաքանչյուր տերմինի կողքին փակագծերում տրված է անգլերեն տերմինը: Եղել են դեպքեր, երբ անգլերեն երկու տերմինին հայերենում համապատասխանել է մեկ տերմին (այսպես՝ «Family members» / «Members of the family» – «ընտանիքի անդամներ», «National» / «citizen» – «քաղաքացի», «alien» / «foreigner» – «օտարերկրացի», «frontier» / «border» /

«boundary» – «սահման») և ընդհակառակը (օրինակ, անգլերեն «adoption» տերմինին հայերենում համապատասխանում են «որդեգրում» և «ընդունում» տերմինները):

Հայերեն տարբերակում առաջին անգամ կազմվել է բառարանի տերմինների անգլերեն և ռուսերեն ինդեքս, որը կօգնի արագ գտնել հայերեն տերմինը, եթե ընթերցողը դժվարանում է գտնել այն, սակայն հիշում է տվյալ հասկացության անգլերեն կամ ռուսերեն տերմինը:

Բառարանի հայերեն տարբերակի մշակման աշխատանքը համատեղ և բարդ գործընթաց էր, և այդ կապակցությամբ կցանկանայինք երախտիքի խոսքեր հղել փորձագիտական աշխատանքային խմբի անդամներին՝ Անահիտ Աբրահամյանին (ՀՀ ոստիկանություն), Մանուշակ Առաքելյանին (ՀՀ արտաքին գործերի նախարարություն), Գոռ Ավագյանին (ՀՀ ոստիկանություն), Զարուհի Բաղալյանին (ՀՀ Կառավարության աշխատակազմ), Նաիրա Բաբուշյանին (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն), Լուիզա Ծատուրյանին (ՀՀ սփյուռքի նախարարություն), Լևոն Հակոբյանին (ՀՀ ազգային անվտանգության ծառայություն), Լիանա Ղալթախչյանին (ՀՀ արդարադատության նախարարություն), Լիլիթ Վիրաբյանին (ՀՀ Նախագահի աշխատակազմ): Կուզենայինք առանձնահատուկ շնորհակալություն հայտնել ՀՀ կրթության և գիտության նախարարության Լեզվի պետական տեսչությանը՝ ի դեմս փոխտնօրեն Մարինե Հովյանի և պարոն Եսայի Թաղևոսյանի՝ իրենց արժեքավոր դիտողությունների և առաջարկությունների համար:

Մենք նաև ցանկանում ենք շնորհակալություն հայտնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ–ի թիմին, որն աշխատել է թարգմանության վրա, ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի և ՄՄԿ–ի կենտրոնակայանի միջազգային միգրացիոն իրավունքի վարչության աշխատակիցներին: Բառարանի հայերեն տարբերակը ստեղծվել է ՄՄԿ-ի զարգացման հիմնադրամի և Եվրոպական հանձնաժողովի կողմից տրամադրված ֆինանսավորման շնորհիվ:

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելությունը հուսով է, որ բառարանը կծառայի որպես արժեքավոր գործիք մասնագետների, պետական պաշտոնյաների, ուսանողների և միգրացիայի ոլորտով հետաքրքրվող այլ անձանց համար: Կարծում ենք, որ տերմինաբանական բառարանը կնպաստի միգրացիոն տերմինների միատեսակ գործածմանը, որը մեծապես կխթանի հետազոտական աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի և այլ պետությունների միջև տեղեկությունների փոխանակումը: Առանցքային տերմինների փոխադարձ ընկալումն առաջին կարևոր քայլն է համաշխարհային միգրացիայի մարտահրավերներին դիմակայելու ուղղությամբ, որն էլ պետությունների և միգրացիայի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների առաջնահերթ խնդիրներից մեկն է:

Քրիստինա Գալստյան
Արթուր Մարգարյան
Հայերեն հրատարակության
խմբագիրներ

FOREWORD TO THE ARMENIAN EDITION

History of human migration dates back to the dawn of mankind and migration has almost always been tied to hope for a better life. Today, due to various factors ranging from better protection of human rights to globalization, the number of migrants is steadily increasing. The new migratory patterns have led to migration being recognized by the states and intergovernmental organizations as one of the defining global issues, a multidimensional reality of major relevance and a cross-cutting phenomenon, which is now included in high-level international development agendas.

The latter call for cooperative approach to migration management, which can be possible thanks to common understanding of migration related terms and definitions. The Migration Law Glossary was initiated with the ultimate goal of contributing to common approached to migration management through commonly acceptable terms and definitions.

The Migration Law Glossary is considered as IOM's landmark publication, which has already been translated into seventeen languages and is widely used all over the world.

Believing that the Armenian version of the "International Migration Law. Glossary on Migration" will contribute to management of migration in Armenia, the IOM Mission in Armenia undertook this task with the following methodology. A working group comprising representatives of various state bodies was convened for expert review of the Armenian draft Glossary, which was translated by the "Translation Centre of the Ministry of Justice of the Republic of Armenia" State Non Commercial Organisation. The terms and definitions in the Glossary are the result of compromise and consensus of the expert working group. The working group has discussed and suggested a number of new terms in Armenian in compliance with the metalinguistics of the Armenian language.

The terms in the Glossary are in compliance with the international law. In case of quotations from the international legal instrument ratified by the Republic of Armenia (RA), the Armenian text of the given instrument was used.

The terms are listed in Armenian alphabetical order with the English term next to it in brackets. In certain cases there was determined one Armenian equivalent term for two English terms (for instance, "ընտանիքի անդամներ" for "Family members" and "Members of the family"; "քաղաքացի" for "national" and "citizen"; "օտարերկրացի"

for “alien” and “foreigner”; or “սահման” for “frontier”, “border” and “boundary”) or vice versa (for example for “adoption” there are two Armenian equivalent terms: “որդեգրում” and “ընդունում”).

In the Armenian version an index of terms in English and Russian was introduced to help locate the Armenian term in case the reader knows its English or Russian equivalent.

The elaboration of the Armenian Glossary was a participatory and compound process and in this regard we would like to express our gratitude to the expert working group: Ms Anahit Abrahamyan (Police of the Republic of Armenia (RA)), Ms Manushak Arakelyan (RA Foreign Ministry), Mr Gor Avagyan (Police of RA), Ms Zaruhi Badalyan (RA Cabinet Administration), Ms Naira Bubushyan (RA Ministry of Labour and Social Issues), Ms Liana Ghaltaghchyan (RA Ministry of Justice), Mr Levon Hakobyan (RA National Security Service), Ms Luiza Tsaturyan (RA Ministry of Diaspora), Ms Lilit Virabyan (Administration of the President of the Republic). Special thanks should go to the State Language Inspectorate at the RA Ministry of Education and Science represented by Ms Marine Hovyan and Mr Yesai Tadevosyan for their valuable comments and suggestions.

We would also like to thank the team of the Translation Centre of the Ministry of Justice working on the translation, the Project Development and Implementation Unit of IOM Mission in Armenia and the IOM Headquarters International Migration Law Unit. The Armenian version was produced with generous funding from the IOM Development Fund and the European Commission.

The IOM Mission in Armenia hopes that the Glossary will serve as a valuable tool for practitioners, government migration officials, students and others. It is expected that Glossary will secure uniformity of usage of terms, which serves to greatly enhance research and statistics gathering, and the exchange of information between Armenia and other States. The mutual and common understanding of critical terms is an important first step in achieving coordinated responses to the challenges of global migration, which in its turn is a priority issue for the states and intergovernmental organizations dealing with migration.

Kristina Galstyan
Artur Margaryan
Editors of the Armenian Glossary

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆ

ՄՄԿ–ի մշակած՝ Միգրացիայի վերաբերյալ բառարանի մեկնարկային հրատարակությունը լայն տարածում է ունեցել 2004 թվականին անգլերենով հրատարակվելուց ի վեր, իսկ այժմ այն թարգմանվել է ռուսերեն, տաջիկերեն, արաբերեն, իսպաներեն, սլովեներեն, ֆրանսերեն, ալբաներեն, բոսնիերեն, չինարեն, թուրքերեն, հունարեն, պորտուգալերեն, իտալերեն և մակեդոներեն: Բառարանը շարունակում է ծառայել իր նպատակներին, այն է՝ արժեքավոր գործիք լինել մասնագետների, միգրացիայի հարցերով պետական պաշտոնյաների, ուսանողների և այլ անձանց համար, ու արդյունավետ կերպով օգտագործվում է միգրացիայի վերաբերյալ հարցերին նվիրված տարածքային և միջազգային քննարկումներում: ՄՄԿ–ն գոհ է իր կողմից առաջացրած դրական արձագանքի համար. այն միանշանակորեն բավարարել է ստեղծված անհրաժեշտությունը, և մշտապես առկա է այլ լեզուներով թարգմանության անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, դեռ սկզբնական հրատարակման ժամանակ գիտակցում էինք, որ դա առաջին փորձն էր՝ հետագա կատարելագործման, սահմանումների վերանայման և տերմինների ավելացման հնարավորությամբ: 2004 թվականի հրատարակության նախաբանում մեր կողմից հիշատակվել է հետագա՝ առավել ավարտուն հրատարակության հնարավորության մասին: Այժմ գոհունակությամբ ներկայացնում ենք ՄՄԿ–ի՝ Միգրացիայի վերաբերյալ բառարանի երկրորդ հրատարակությունը, որը մեր համոզմամբ առավել համապարփակ է, և որում հաշվի է առնվել բառարանն օգտագործողների ունեցած անգնահատելի ներդրումը: Մեծ ուշադրություն է դարձվել սահմանումների վերանայմանն ու ավելացմանը, և ջանքեր են ներդրվել սահմանումները համահունչ դարձնելու ուղղությամբ՝ այն գործընկեր կազմակերպությունների կողմից օգտագործվող սահմանումների միատեսակ կիրառելիությունն ապահովելու համար, որոնք ՄՄԿ–ի հրատարակումից ի վեր նույնպես կազմել են բառարաններ միգրացիայի և հարակից թեմաների վերաբերյալ: Այդուհանդերձ, համոզված ենք, որ բառարանը «կենդանի փաստաթուղթ» է, որը ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ կլինի թարմացնել՝ հաշվի առնելով միգրացիայի փոփոխվող բնույթը, և այդ առնչությամբ շարունակում ենք ողջունել օգտագործողներից ստացվող արձագանքը:

ՄՄԿ–ն հուսով է, որ այս կատարելագործված հրատարակությունը կշարունակի ուղղորդել միջազգային հանրությանը դեպի միասնական լեզվաշերտ՝ միգրացիայի վերաբերյալ քննարկումներում: Տերմինների օգտագործման

միասնականությունը ծառայում է ուսումնասիրություններ կատարելը և վիճակագրական տվյալների հավաքելը մեծապես ընդլայնելուն, ինչպես նաև պետությունների միջև և դրանց շրջանում տեղեկությունների փոխանակման գործընթացները կատարելագործելուն։ Ուստի, չափազանց կարևոր տերմինների փոխադարձ ընկալումը էական քայլ է՝ միգրացիայի համընդհանուր մարտահրավերներին համակարգված արձագանքելու համար։

Եվ վերջում, անհրաժեշտ է երախտագիտություն հայտնել ՄՄԿ–ի անձնակազմին՝ տվյալ վերանայման աշխատանքներում ցուցաբերած նվիրվածության համար, և այդ կապակցությամբ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել մեր գործընկերներ Շայլա Վոհրային, Պաոլա Պաչեյին, Քարա Վուլֆին, Աննա Լիլլիքրափին և Ռիշարդ Խոլևինսկուն այս կարևոր գործում իրենց ունեցած ներդրման համար։

Ռիշար Պերուշո
Ջիլիան Ռեդփաթ–Քրոս
Խմբագիրներ

FOREWORD TO THE SECOND EDITION

The inaugural edition of the IOM Glossary on Migration has been widely disseminated since its publication in English in 2004 and it has now been translated into Russian, Tajik, Arabic, Spanish, Slovenian, French, Albanian, Bosnian, Chinese, Turkish, Greek, Portuguese, Italian and Macedonian. The Glossary continues to meet its objectives in being a valuable tool for practitioners, government migration officials, students and others and has been effectively utilized in regional and international fora discussing migration issues.

IOM is pleased with the positive response that it has generated; it has clearly met a need and there is ongoing demand for translations into other languages.

However, even at the time of its initial publication, we recognized that it was a first attempt, with room for improvement, revisions of definitions and additions of terms. In the Foreword to the 2004 edition, we alluded to the possibility of a subsequent, more complete, edition. We are pleased now to be able to introduce a second edition of the IOM Glossary on Migration which we consider to be more comprehensive and which takes into account invaluable input from users of the glossary. Great care has been taken in revising and adding definitions and an effort has been made to streamline definitions to ensure consistency with partner organizations who have, since IOM's publication, also issued glossaries on migration and related topics. Nevertheless, we consider the glossary to be a "living document" which will continue to need to be updated from time to time with the evolving nature of migration and, in this respect, we continue to welcome feedback from users.

It is IOM's hope that this improved edition will continue to move the international community toward a common language when discussing migration issues. Uniformity of usage of terms serves to greatly enhance research and statistics gathering, and the exchange of information between and among States. Mutual understanding of critical terms is therefore an important first step in achieving coordinated responses to the challenges of global migration.

As a final point, acknowledgement needs to be made of the dedication of IOM staff who have worked on this revision, and in this respect, we wish to thank our colleagues Shyla Vohra, Paola Pace, Cara Wulf, Anna Lillicrap and Ryszard Cholewinski for their contributions to this important work.

Richard Perruchoud
Jillyanne Redpath-Cross
Editors

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆ

Աստիճանաբար միգրացիան ընկալվում է որպես մի խնդիր, որը պահանջում է համընդհանուր մոտեցում և համակարգված արձագանք: Միգրացիայի հետ կապված հիմնահարցերը պետությունները քննարկում են ոչ միայն երկկողմ համագործակցության մակարդակում, այլ նաև տարածաշրջանային, իսկ վերջերս էլ՝ համաշխարհային ասպարեզում: Ընդհանուր հասկանալի լեզվի առկայությունն անհրաժեշտ է, որպեսզի այդպիսի համակարգումը և միջազգային համագործակցությունը լինեն հաջողված: Միգրացիայի ոլորտում առկա տերմինների և սահմանումների բազմազանության մեջ այս բառարանը փորձում է ծառայել որպես ուղեցույց՝ այդպիսի միջազգային համագործակցությանը նպաստելուն ուղղված օգտակար գործիքների ապահովման ջանքերում:

Այս բառարանը կազմելու համար որոշակի ժամանակ է պահանջվել: Յոթանասունական թվականներին ՄՄԿ–ի կողմից մշակվել, և դրա անձնակազմի կողմից օգտագործվել են ոչ պաշտոնական նախագծային տարբերակները: ՄՄԿ–ի՝ Վիեննայում գտնվող տեխնիկական համագործակցության կենտրոնում կրկին համակարգման փորձեր են արվել ութսունականների վերջերին, և ստացված արդյունքը 2001 թվականին տպագրվել է Պ.Յ. Վան Կրիկենի խմբագրությամբ հրատարակված «Միգրացիայի ձեռնարկ»-ում: Միջազգային միգրացիոն իրավունքի բնագավառում իր մասնակցությունն ամրապնդելու և ընդլայնելու՝ ՄՄԿ–ի վերջերս կատարած նախաձեռնության համատեքստում որոշում կայացվեց լույս ընծայել այս բառարանը, և միգրացիայի ոլորտում գործածվող տերմիններն ու սահմանումները համախմբել միասնական վերջնական տեքստում՝ մասնագետներին, միգրացիայի հարցերով պետական պաշտոնյաներին, ուսանողներին և այլ անձանց համար վստահելի աղբյուր ապահովելու նպատակով: Չի կարելի պնդել, որ բառարանի ներկա տարբերակը սպառիչ է, ուստի երկրորդ ու առավել ամբողջական հրատարակության համար ողջունելի կլինի ցանկացած դիտողություն կամ առաջարկություն:

Բառարանը կազմելու ընթացքում անմիջապես պարզ դարձավ, որ այս ոլորտին առնչվող սահմանումները շատ հաճախ անորոշ են, վիճելի ու հակասական: Բացակայում են համընդհանուր ճանաչում գտած սահմանումները, ինչը մասնակիորեն բխում է այն փաստից, որ միգրացիան այն երևույթն է, որին ավանդաբար անդրադարձել են ազգային մակարդակում, որի արդյունքում միգրացիայի վերաբերյալ տերմինները տարբեր կիրառություն են ստանում տարբեր երկրներում: Ավելին, նույնիսկ մեկ երկրի ներսում տերմինները կարող են

տարբերվել իմաստային և կիրառության առումով։ Սահմանումները (և, իրավամբ, ամբողջ տերմինաբանությունը, այլ ոչ միայն միգրացիային առնչվող տերմինները), կարող են տարբեր լինել՝ կոնկրետ դիտանկյունից կամ մոտեցումից կախված։ Միգրացիան մտահոգում է մի շարք մարմիններին, այդ թվում՝ թե՛ ուղարկող, և թե՛ ընդունող երկրների կառավարություններին, ոստիկանությանը և սահմանային մարմիններին, պետական ու հասարակական կազմակերպություններին և ինքնին միգրանտներին։ Համընդհանուր ճանաչում գտած սահմանումների բացակայության պայմաններում, յուրաքանչյուր խմբի համար առկա է հնարավորություն պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես բնորոշելու իր սեփական սահմանումը՝ իր դիտանկյանը համապատասխան։ Որպես օրինակ կարելի է նշել, որ «թրաֆիքինգ» տերմինի համար առկա է սահմանումների մեծ ընտրանի, որոնք միայն վերջերս են համախմբվել՝ միջազգային մակարդակում պաշտոնապես ընդունված պայմանագրում նախատեսվող սահմանման ներքո, մինչդեռ մի շարք այլ տերմիններ դեռ միջազգայնորեն չեն համաձայնեցվել։ Տերմինների սույն բառարանի շրջանակներում ջանք է ներդրվել նաև ներկայացնելու, առկայության դեպքում, միջազգային սահմանումը, մյուս դեպքերում տրվել է ընդհանուր սահմանումը և հղում է արվել այլընտրանքային սահմանումներին։

Բառարանը կազմելու ընթացքում առաջացած մյուս մարտահրավերը կապված էր միևնույն կամ համանման երևույթը նկարագրելու համար գործածվող տերմինների բազմազանության հետ։ Օրինակ՝ «անօրինական միգրացիա», «լատենտային միգրացիա», «փաստաթղթային խնդիրներով միգրացիա» և «անկանոն միգրացիա» տերմիններն ունեն որոշակի նրբերանգներ, սակայն դրանք մեծամասամբ օգտագործվում են մոտավոր ու հաճախ փոխադարձ փոխարինելի իմաստով։ Այդ իսկ պատճառով որոշ տերմիններին արված խաչաձև հղումներն անհրաժեշտ են եղել՝ ընթերցողին դեպի այլընտրանքային կամ փոխադարձ փոխարինելի տերմիններ ուղղորդելու համար։

Եվ վերջում, բայց ոչ պակաս կարևորությամբ, կցանկանայի երախտագիտութան ու գնահատանքի խոսքեր ուղղել Իրավաբանական ծառայությունից իմ գործընկերներ Շայլա Վոհրային, Ջիլիան Ռեդփաթին և Կատարինա Տոմոլովային, ովքեր ջանք չեն խնայել այս գործում. իրենց փորձառությամբ, բարեհաճ նվիրվածությամբ և համբերատար ջանասիրությամբ գլխավոր դերակատարում են ունեցել այս բառարանը կյանքի կոչելու հարցում։

Ռիշար Պերուշո
Խմբագիր

FOREWORD TO THE FIRST EDITION

Migration is increasingly being acknowledged as an issue that needs a global approach and coordinated responses. States are not only discussing migration issues at the bilateral level, but also regionally and lately in global arenas. A commonly understood language is indispensable for such coordination and international cooperation to be successful. This glossary attempts to serve as a guide to the mire of terms and concepts in the migration field, in an effort to provide a useful tool to the furtherance of such international cooperation.

This glossary has been some time in the making. Informal drafts were prepared by IOM in the seventies and used by its staff. A renewed attempt to a consolidation was made in the late eighties by IOM technical cooperation centre in Vienna and its output was published in 2001 in the "Migration Handbook" edited by P. J. Van Krieken. In the context of IOM's recent initiative to strengthen and enhance its involvement in the field of international migration law, the decision was taken to produce this glossary and to consolidate into one definitive text the terminology used in the migration field in order to provide a reliable reference for practitioners, government migration officials, students and others. The present product cannot be said to be exhaustive and any comments or suggestions for an eventual second, and more complete, edition will be welcome.

When compiling the glossary, it became quickly apparent that definitions in this field are often vague, controversial or contradictory. There is an absence of universally accepted definitions, which stems partially from the fact that migration is something which has traditionally only been addressed at the national level; the result is that the usage of migration terms varies from country to country. Further, even within a country, terms can vary as to the meaning or implication. Definitions – and this is true of all terminology, not only that related to migration – may vary according to a given perspective or approach.

Migration is of concern to a number of bodies, including governments of both sending and receiving countries, police and border authorities, governmental and non-governmental organizations, migrants themselves. Where there are no universally accepted definitions, the potential exists for each group to decide, formally or informally, on its own definition, according to its perspective. By way of

example there was a wide array of definitions for the term “trafficking”, which have only recently been consolidated with a definition being provided in a formal treaty at the international level; many other terms have not yet been internationally agreed upon. Within this glossary, care has been taken to provide the international definition where it exists; in other cases, a general definition is provided and mention made of alternative definitions.

Another challenge faced in this compilation was the variety of terms used to describe the same or similar phenomenon. For example, there may be nuances between the terms “illegal migration”, “clandestine migration”, “undocumented migration” and “irregular migration”; however, to a large extent they are used loosely and often interchangeably. To this end, some cross-referencing of terms has been inevitable in order to guide the reader to alternative or interchangeable terms.

Last but not least, I wish to express my gratitude and appreciation to Shyla Vohra, Jillyanne Redpath and Katarina Tomolova, my colleagues in Legal Services, who contributed to this endeavour and made it happen: their competence, smiling dedication and untiring efforts were instrumental in bringing the glossary to life.

Richard Perruchoud
Editor

Ա

ազատությունից զրկելու օրինականությունը վիճարկելու իրավունք (habeas corpus)

Կալանքի կամ ազատազրկման օրինականությունը ստուգելու նպատակով դատարան ներկայացվող հայց: Ի լրումն ձերբակալելու կամ անազատության մեջ պահելու օրինականությունը ստուգելու նպատակով օգտագործվելուն՝ արձակած կարգադրությունը կարող է օգտագործվել արտահանձնման գործընթացի բնականոն ընթացքի, գրավի իրավունքի կամ չափի կամ էլ քրեական պատիժ նշանակած դատարանի իրավազորության նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու համար:

ազգային տարածք (national territory)

Պետության իրավազորությանը պատկանող կամ իրավազորության տակ գտնվող աշխարհագրական տարածք:

ազգերի իրավունք (law of nations)

Տե՛ս միջազգային իրավունք (հանրային)

ազնվություն (good faith)

Համոզմունքներում կամ նպատակներում անկեղծության մասին վկայող հոգեվիճակ՝ առանց խաբելու կամ անարդարությամբ օգուտ քաղելու մտադրության:

Տե՛ս նաև բարեխիղճ, իրավաչափ, անբարեխիղճ

ածխաթթու գազ հայտնաբերող սենսորներ (carbon dioxide sensors)

Սարքավորում (ստացիոնար կամ շարժական), որն օգտագործվում է փակ կոնտեյներներում, ինչպես օրինակ՝ երկաթուղային վագոնում կամ բեռնատարի թափքում ածխաթթու գազի առկայությունը որոշելու համար: Այդ սենսորներն օգտագործվում են՝ մարդկանց կողմից սահմանը լատենտային կերպով անցնելու հանգամանքը ստուգելու համար:

Տե՛ս նաև սենսորներ

ակկուլտուրացիա (համամշակութավորում) (acculturation)

Բարոյամշակութային արժեհամակարգի տարրերի (գաղափարների, բառերի, արժեքների, նորմերի, վարքագծի, ինստիտուտների) փոփոխություններ, որոնք առաջանում են տարբեր խմբերի մշակույթների միջև ուղղակի և շարունակական շփումների, հատկապես՝ միգրացիոն տեղաշարժերի կամ տնտեսական բնույթի փոխանակումների արդյունքում: Ակկուլտուրացիան կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ որևէ խումբ որդեգրում է՝ հանրային կյանքում հասարակության մեջ գերիշխող մշակույթի առանձնահատկությունները՝ միևնույն ժամանակ մասնա-

վոր միջավայրում պահպանելով սեփական մշակույթը: Ակկուլտուրացիան կարող է հանգեցնել նաև նոր մշակույթի ձևավորմանը, երբ մեկ մշակույթի շրջանակներում համակցվում են երկու սկզբնական մշակույթների տարրեր:

Տե՛ս նաև ասիմիլյացիա (համաձուլում), մշակույթ, ինտեգրում

ահաբեկչություն (terrorism)

Միջազգային իրավունքում համընդհանուր ճանաչում գտած սահմանման բացակայության պայմաններում, «ահաբեկչություն» տերմինը կարող է սահմանվել որպես հանրությանն ահաբեկելու համար նախատեսված միտումնավոր և պարբերական գործողությունների կատարում՝ որպես որոշակի նպատակներին հասնելու միջոց: Ահաբեկչություն կարող է համարվել որպես ինքնուրույն կամ պետության աջակցությամբ գործող անձի կամ անձանց խմբի կողմից կատարվող գործողությունը: Այն կարող է լինել նաև պետության կողմից բնակչության դեմ (մարդու իրավունքների խախտումներ, ինչպես, օրինակ՝ հարկադիր աշխատանք, վտարում, պայմանագրերում: Այդ նույն կոնվենցիայով «ահաբեկչություն» է որակվում «ցանկացած արարք, որն ուղղված է քաղաքացիական անձին կամ զինված հակամարտությունների ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին մահ կամ ծանր մարմնական վնասվածք պատճառելուն, երբ այդպիսի արարքի նպատակն իր բնույթով և համատեքստով բնակչությանն ահաբեկելը կամ կառավարությանը, կամ միջազգային կազմակերպությանն ստիպելն է որևէ գործողություն կատարելը կամ ձեռնպահ մնալը դրա կատարումից:» *(2(1)(բ) հոդված)*:

Տե՛ս նաև հանցագործություն՝ միջազգային

այլատյացություն (xenophobia)

Միջազգային մակարդակում գոյություն չունի «այլատյացություն» տերմինի համընդհանուր ճանաչում գտած սահմանում, սակայն այն կարող է նկարագրվել որպես վերաբերմունքի դրսևորումներ, նախապաշարմունքներ և վարքագիծ, որոնց միջոցով մերժվում, բացառվում և հաճախ վատաբանվում են անձինք՝ ելնելով այն համոզմունքից, որ նրանք կողմնակի մարդիկ են կամ օտարներ՝ համայնքի, հասարակության համար և ազգային ինքնության տեսանկյունից: Սերտ կապ գոյություն ունի ռասիզմի ու այլատյացության միջև, և դժվար է տարբերակել այդ երկու տերմինը:

Տե՛ս նաև խտրականություն, ռասա, ռասայական խտրականություն, ռասիզմ

այցելու (visitor)

Միգրացիայի համատեքստում՝ այս տերմինն օգտագործվում է որոշ երկրների ազգային օրենսդրությամբ քաղաքացի չհանդիսացող այն անձանց բնութագրելու համար, որոնց թույլատրված է ժամանակավոր հիմունքներով գտնվել որևէ պետության տարածքում՝ առանց որևէ մասնագիտական գործունեության մեջ ներգրավված լինելու:

Տե՛ս նաև մշտական բնակություն, մշտական բնակություն հաստատող անձինք, զբոսաշրջություն, ճանապարհորդող

անազատ վիճակ (servitude)

Վիճակ, որում գտնվում է ազատությունից զրկված և մեկ այլ անձից կախվածության մեջ գտնվող անձը:

Տե՛ս նաև պարտքի պատճառով կախվածություն, շահագործում, ստրկություն, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր

անբարեխիղճ (mala fide)

Անազնվորեն. մոլորեցնելու կամ խաբելու մտադրությամբ:

Տե՛ս նաև բարեխիղճ, պայմանագիր

անդրազգային հաղորդակցություն (transnationalism)

Գործընթաց, որը հնարավորություն է տալիս մարդկանց աշխարհաքաղաքական սահմանների շրջանակներում հաստատել և պահպանել սոցիալ–մշակութային կապեր:

անընդունելիության հիմքեր (grounds of inadmissibility)

Միգրացիայի իրավունքով կամ կանոնակարգերով նախատեսված այն հիմքերի սահմանումները, որոնց ուժով քաղաքացի չհանդիսացող անձանց արգելվում է մուտք գործել համապատասխան պետություն: Նույնիսկ եթե անձն այլ կերպ իրավասու է ստանալու վիզա կամ իմիգրացիոն [ներգաղթային] կարգավիճակ, և նրա նկատմամբ տարածվում են անընդունելիության հիմքերը, վիզայի կամ այլ կարգավիճակի տրամադրումը մերժվում է: Անընդունելիության հիմքերը հիմնականում նախատեսված են քաղաքացի չհանդիսացող այնպիսի անցանկալի անձանց մուտքը կանխելու համար, ինչպիսիք են՝ վավեր ճամփորդական փաստաթղթեր չունեցող անձինք, դատվածություն ունեցող անձինք, հանրային առողջության կամ անվտանգության համար հիմնավոր վտանգ ներկայացնող անձինք, նախկինում վտարված անձինք:

Տե՛ս նաև մերժում ստացած դիմող, հրաժարում [waiver]

անկանոն կարգավիճակով միգրանտ (irregular migrant)

Մուտքի թույլտվություն չունենալու, մուտքի պայմանները խախտելու կամ վիզայի ժամկետը լրանալու հետևանքով տարանցման և հյուրընկալող երկրում իրավական կարգավիճակ չունեցող անձ: Տվյալ սահմանումը տարածվում է նաև այն անձանց վրա, ովքեր օրինականորեն մուտք են գործել տարանցման կամ հյուրընկալող երկիր, սակայն մնացել են այնտեղ թույլատրված ժամկետից ավելի երկար կամ հետագայում առանց թույլտվության անցել են աշխատանքի (կոչվում են նաև լատենտային/փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ կամ անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ): «Անօրինական» տերմինի փոխարեն նախընտրելի է օգտագործել «անկանոն» տերմինը, քանի որ առաջինն ունի քրեաիրավական երանգավորում և դիտվում է որպես միգրանտների մարդկային հատկանիշներին հակասող:

Տե՛ս նաև լատենտային միգրացիա, օրինական փաստաթղթեր ունեցող միգրանտ, անօրինական մուտք, անկանոն միգրացիա, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ

անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ (migrant in an irregular situation)

Տե՛ս վարչական կալանք, անկանոն կարգավիճակով միգրանտ, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ աշխատող/անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ աշխատող

անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ աշխատող (migrant worker in an irregular situation)

Տե՛ս փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ աշխատող/անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ աշխատող

անկանոն միգրացիա (irregular migration)

Տեղաշարժ, որը տեղի է ունենում ուղարկող, տարանցման և ընդունող երկրների նորմատիվ իրավական դրույթների գործողությունից դուրս: «Անկանոն միգրացիա» տերմինի համար հստակ կամ համընդհանուր ճանաչում գտած որևէ սահմանում չկա: Նպատակակետ երկրների դիտանկյունից՝ դա երկիր մուտք գործելը, մնալը կամ աշխատելն է առանց անհրաժեշտ թույլտվության կամ իմիգրացիոն [ներգաղթային] կանոնակարգերով պահանջվող փաստաթղթերի: Ուղարկող երկրի դիտանկյունից՝ անկանոն բնույթն ակներև է այն դեպքերում, երբ, օրինակ, անձը հատում է որևէ միջազգային սահման առանց վավեր անձնագրի կամ ճամփորդական փաստաթղթի կամ չի կատարում երկրից դուրս գալու համար սահմանված վարչական պահանջները:

Այնուամենայնիվ, նկատվում է՝ «անօրինական միգրացիա» տերմինի գործածությունը մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխման և մարդկանց թրաֆիքինգի դեպքերով սահմանափակելու միտում։

Տե՛ս նաև լատենտային միգրացիա, անկանոն կարգավիճակով միգրանտ, կանոնավոր միգրացիա, չթույլատրված/ապօրինի մուտք/ընդունում, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ աշխատող/անկանոն կարգավիճակում գտնվող աշխատողներ

անհատի միգրացիա (individual migration)

Դեպքեր, երբ անձինք միգրացիայի են դիմում անհատապես կամ ընտանիքով։ Այդպիսի տեղաշարժերը, ի տարբերություն լայնամասշտաբ ծրագրերի, ընդհանրապես իրականացվում են ինքնաֆինանսավորմամբ կամ որևէ անհատի, կազմակերպության կամ կառավարության հովանավորությամբ։

Տե՛ս նաև զանգվածային/կոլեկտիվ միգրացիա

անհատույց հիմունքներով (pro bono)

«Հօգուտ հանրային շահի»՝ անվճար իրավաբանական ծառայություններ, որոնք մատուցվում են հատկապես հօգուտ հանրային շահի։

անձնագիր (passport)

Պետության ներսում իրավասու մարմնի կողմից տրվող փաստաթուղթ, որով անձը նույնականացվում է որպես այն տրամադրող պետության քաղաքացի, և որը վկայում է դրա իրավատիրոջ՝ այդ պետություն վերադառնալու իրավունքի մասին։ Արևմտյան ավանդույթներում անձնագրերն օգտագործվել են արտերկրում ճանապարհորդելու նպատակով, այլ ոչ թե որպես ներպետական շրջանակներում ինքնությունը հաստատող փաստաթղթեր։ Անձնագիրը քաղաքացիությունը հաստատող՝ ընդունված միջազգային վկայական է կամ հավաստագիր, թեև դրա ապացուցողական նշանակությունը միայն առերևույթ բնույթ է կրում։

Տե՛ս նաև ժամանման/մեկնման քարտ, ինքնությունը հաստատող փաստաթուղթ, ճամփորդական փաստաթղթեր, ճամփորդական փաստաթղթեր (Կոնվենցիա), վիզա

անձնական տվյալներ (personal data)

Ցանկացած տեղեկություն, որ կարող է օգտագործվել տվյալների սուբյեկտի ինքնությունը պարզելու կամ նրան վնասելու համար։

Տե՛ս նաև տվյալների պաշտպանություն, տվյալների սուբյեկտ

անձի նկատմամբ իրավազորություն (personal jurisdiction)

Անձին դատական գործընթացի մեջ ներգրավելու՝ դատարանի իրավասությունը. իրավազորություն պաշտպանյալի անձնական իրավունքների, այլ ոչ զուտ գույքային շահերի նկատմամբ: Դա կարող է վերաբերել նաև պետության՝ օտարերկրյա պետությունում գտնվող իր քաղաքացիների առնչությամբ գործելու իրավասությանը՝ կարգավորելով նրանց կարգավիճակը և նրանց առաջարկելով պաշտպանություն:

Տե՛ս նաև իրավազորություն, քաղաքացիություն [nationality], ինքնիշխանություն

անձին վերադարձնելու անթույլատրելիություն (non-refoulement)

Փախստականներին առնչվող միջազգային իրավունքի սկզբունք, որով պետություններին արգելվում է որևէ եղանակով փախստականներին վերադարձնել այն երկրներ կամ տարածքներ, որտեղ կարող է վտանգվել նրանց կյանքը կամ ազատությունը: Շատ հեղինակներ *անձին վերադարձնելու անթույլատրելիության* սկզբունքը համարում են միջազգային սովորութային իրավունքի մաս, մինչդեռ այլ հեղինակների կարծիքով՝ սովորութային նորմի առկայության համար անհրաժեշտ երկու պահանջները բավարարված չեն:

Տե՛ս նաև ապաստան, լրացուցիչ պաշտպանություն, ինքնիշխանություն

անձին վերադարձնելու թույլատրելիություն (refoulement)

Տե՛ս վտարում, արտաքսում, հարկադիր վերադարձ, ոչ կամավոր հայրենադարձություն, անձին վերադարձնելու անթույլատրելիություն, հետապնդում, վերադարձ

անմարդկային վերաբերմունք (inhuman treatment)

Մտավոր կամ ֆիզիկական ծանր տառապանքներ պատճառող վերաբերմունք: Դա մարդու իրավունքների *(«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (1966 թվական) 7–րդ հոդված)* և միջազգային քրեական իրավունքի խախտում է *(«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիա (1984 թվական), Ժնևի կոնվենցիաների (1949 թվական) ընդհանուր 3–րդ հոդված)*:

Տե՛ս նաև խոշտանգում

անչափահաս (minor)

Անձ, ում չափահասության տարիքը չի լրացել, համապատասխան երկրի իրավունքի համաձայն, այսինքն՝ ով դեռևս օժտված չէ որոշակի քաղաքացիական և քաղաքական իրավունքներով:

Տե՛ս նաև երեխա, ընտանիքից առանձնացված երեխաներ, առանց չափահասի ուղեկցության երեխաներ

անվտանգ երրորդ երկիր (safe third country)

Որևէ երկիր, որտեղ ապաստան հայցողի համար կարող էր հասանելի լինել ապաստանի արդյունավետ ռեժիմը և որտեղ նա ֆիզիկապես գտնվել է՝ նախքան այն երկիր ժամանելը, որտեղ նա դիմում է ապաստան ստանալու համար:

Տե՛ս նաև ծագման երկիր, առաջին ապաստանի երկիր, ընդունող երկիր, անվտանգ ծագման երկիր

անվտանգ ծագման երկիր (safe country of origin)

Ապաստան հայցողների ծագման երկիրը համարվում է անվտանգ, եթե այդտեղից առհասարակ կամ, որպես կանոն, չեն գոյանում փախստականներ: Ընդունող երկրները հաճախ որպես հիմք են ընդունում «անվտանգ ծագման երկիր» հասկացությունը՝ ապաստան հայցողների առանձին խմբերին կամ կատեգորիաներին ամփոփ ձևով (առանց ըստ էության քննություն կատարելու) մերժելու համար:

Տե՛ս նաև ծագման երկիր, անվտանգ երրորդ երկիր

անցագիր (laissez-passer)

Բացառիկ հանգամանքներում երկրի հյուպատոսական պաշտոնատար անձանց կողմից ծագման երկրի քաղաքացիներին (օրինակ՝ նրանց անձնագրի կորստի կամ գողության դեպքում) կամ համապատասխան պետության կողմից պաշտպանություն ստացած օտարերկրացիներին (օրինակ՝ պետությունների այն քաղաքացիները, ովքեր դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական պաշտոնատար անձանց բացակայության պարագայում գտնվում են տվյալ պետության պաշտպանության ներքո՝ նրանց անձնագրի կորստի կամ գողության դեպքում) տրվող ճամփորդական փաստաթուղթ: Դա կարող է լինել նաև միջազգային կազմակերպության կողմից իր գործակալներին տրվող ճամփորդական փաստաթուղթ: *«Արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին» Միավորված ազգերի կազմակերպության 1946 թվականի կոնվենցիայի 24-րդ բաժնի VII հոդվածի* առնչությամբ «Միավորված ազգերի կազմակերպությունը կարող է անցագիր տալ իր քաղաքացիական ծառայողներին: Այդպիսի անցագիրը ճանաչվում և ընդունվում է անդամ պետությունների իշխանությունների կողմից»:

Տե՛ս նաև ժամանակավոր ճամփորդական փաստաթղթեր, ճամփորդական փաստաթղթեր

անցակետ (checkpoint)

Վայր (ցամաքային սահմանի վրա կամ օդանավակայանում կամ նավահանգստում), որտեղ սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձանց կողմից անհատները կանգնեցվում են՝ պետություն մուտք գործելու նպատակով ստուգման և մաքսային ձևակերպումների համար:

Տե՛ս նաև ժամանման/մեկնման քարտ, սահման, սահմանային հսկողություն, սահմանի հատում, սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձինք

անցանկալի անձ (persona non grata)

«Անընդունելի անձ»: Անընդունելի կամ անցանկալի անձ: Դիվանագիտական համատեքստում՝ անձ, որը մերժում է ստանում հյուրընկալող կառավարության կողմից:

անօտարելի (inalienable)

Մարդու իրավունքների համատեքստում գործածվելիս նշանակում է այնպիսի իրավունք, որից չի կարելի անհատին զրկել, կամ որը չի կարելի փոխանցել, պատվիրակել, կամ որից հնարավոր չէ հրաժարվել:

անօրինական կարգավիճակով միգրանտ (illegal migrant)

Տե՛ս նաև անկանոն կարգավիճակով *միգրանտ, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ*

անօրինական կարգավիճակով օտարերկրացի (illegal alien)

Տե՛ս նաև անկանոն կարգավիճակով *միգրանտ, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ*

անօրինական միգրացիա (illegal migration)

Տե՛ս անկանոն միգրացիա

անօրինական մուտք (illegal entry)

«Սահմանների հատումն առանց ընդունող պետություն օրինական մուտք գործելու համար անհրաժեշտ պահանջների պահպանման» *(«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» ՄԱԿ-ի 2000 թվականի արձանագրության 3(բ) հոդված)*:

Տե՛ս նաև անկանոն միգրացիա, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ, մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխում, չթույլատրված/ապօրինի մուտք/ընդունում

աշխատանքային միգրացիա (labour migration)

Անձանց տեղաշարժը մեկ պետությունից մեկ այլ պետություն կամ իրենց բնակության երկրի ներսում՝ աշխատանք գտնելու նպատակով: Շատ պետությունների կողմից աշխատանքային միգրացիան կարգավորվում է իրենց միգրացիոն օրենքներով: Բացի դրանից՝ որոշ պետություններ ակտիվ մասնակցություն են ունենում արտագնա աշխատանքային միգրացիան կարգավորելու և սեփական քաղաքացիների համար արտերկրում հնարավորություններ փնտրելու հարցում:

Տե՛ս նաև աշխատանքային միգրացիայի մասին երկկողմ համաձայնագրեր, շրջանառու միգրացիա

աշխատանքային միգրացիայի մասին երկկողմ համաձայնագրեր (bilateral labour migration agreements)

Պաշտոնական մեխանիզմներ, որոնց շուրջ պետությունների միջև համաձայնություն է ձեռք բերվել, և որոնք ըստ էության իրենցից ներկայացնում են աշխատանքային միգրացիայի շուրջ միջպետական համագործակցությանը վերաբերող իրավաբանորեն պարտադիր պարտավորություններ: Տերմինն օգտագործվում է նաև պետությունների միջև աշխատողների տեղաշարժը կանոնակարգող՝ պետությունների, ինչպես նաև մի շարք այլ դերակատարների, այդ թվում՝ առանձին նախարարությունների, գործատու կազմակերպությունների և այլ սուբյեկտների միջև հաստատված, ավելի նվազ պաշտոնական բնույթ ունեցող կարգավորումների համար:

Տե՛ս նաև երկկողմ, աշխատանքային միգրացիա, պայմանագիր

աշխատանքի թույլտվություն (work permit)

Իրավական փաստաթուղթ՝ տրամադրված այն պետության իրավասու մարմնի կողմից, որը հյուրընկալող երկրում միգրանտ աշխատողներին տալիս է աշխատանքի թույլտվության իրավունք նշված թույլտվության վավերականության ժամկետի ընթացքում:

Տե՛ս նաև դիմող, թույլտվություն

աշխատանք տրամադրող պետություն (State of employment)

«Պետություն, որտեղ, կոնկրետ դեպքից կախված, միգրանտ աշխատողը զբաղվելու է, զբաղվում է կամ զբաղվել է վճարովի գործունեությամբ» (*«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 6 (բ) հոդված*)

Տե՛ս նաև միգրանտ աշխատող, ընդունող երկիր

ապահով հանգրվան (safe haven)

Պատերազմի հետևանքով «հիվանդ և վիրավոր մարտիկներին և ոչ մարտիկներին» և «ռազմական գործողություններին չմասնակցող քաղաքացիական բնակչությանը» պատսպարելու համար նախատեսված չեզոք գոտիներ: (*«Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» Ժնևի 1949 թվականի կոնվենցիայի 15–րդ հոդված*):

Տե՛ս նաև ապաստան, չեզոք գոտիներ

ապաստան (asylum)

Պաշտպանության տեսակ, որը տրվում է պետության կողմից իր տարածքում՝ փախստականին *վերադարձնելու անթույլատրելիության* սկզբունքի և փախստականների՝ միջազգային կամ ազգային մակարդակով ճանաչված իրավունքների հիման վրա: Այն շնորհվում է այն անձին, որը, հատկապես, ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդումների զոհ դառնալու հիմնավոր երկյուղի պատճառով չի կարող պաշտպանություն հայցել իր քաղաքացիության և (կամ) բնակության վայրի պետությունում:

Տե՛ս նաև ապաստան հայցող, ապաստանի իրավունք, փախստականի՝ վերադարձնելու անթույլատրելիության կարգավիճակի որոշում, ապաստարան տրամադրող պետություն

ապաստան (դիվանագիտական) (asylum (diplomatic))

Ապաստարան, որը պետությունների կողմից իրենց տարածքի սահմաններից դուրս, իրավազորության նկատմամբ անձեռնմխելիություն ունեցող վայրերում, կարող է տրամադրվել այն անձին, որն իրեն հետապնդող կամ իր վերադարձը պահանջող մարմնի գործողություններից պաշտպանություն է հայցում: Դիվանագիտական ապաստանը կարող է շնորհվել դիվանագիտական առաքելություններում և առաքելության ղեկավարների անձնական բնակավայրում, ռազմական նավերի կամ օդանավերի վրա, սակայն ոչ միջազգային կազմակերպությունների կամ հյուպատոսարանների տարածքներում: Որևէ այլ անձ իրավունք չունի ստանալու դիվանագիտական ապաստան, և ոչ էլ որևէ պետություն պարտավոր է այն շնորհել:

Տե՛ս նաև ապաստան (տարածքային), ապաստան հայցող, փախստականին վերադարձնելու անթույլատրելիություն, ապաստանի իրավունք

ապաստան (տարածքային)
(asylum (territorial))

Իր քաղաքացին չհանդիսացող անձին պետության կողմից իր տարածքում տրամադրվող պաշտպանություն ծագման երկրի իրավազորության իրականացման նկատմամբ՝ հիմնվելով փախստականին *վերադարձնելու անթույլատրելիության* սկզբունքի վրա, որը հանգեցնում է միջազգայնորեն ճանաչված որոշակի իրավունքներից օգտվելու հնարավորությանը:

Տե՛ս նաև ապաստան (դիվանագիտական), ապաստան հայցող, փախստականին վերադարձնելու անթույլատրելիություն, ապաստանի իրավունք, ապաստարան տրամադրող պետություն

ապաստանի իրավունք
(right of asylum)

Երկու իմաստով օգտագործվող ընդհանուր տերմին՝ ապաստան տրամադրելու իրավունք (յուրաքանչյուր պետություն կարող է իր տարածքում սեփական հայեցողությամբ ապաստան տրամադրել ցանկացած անձի), ինչպես նաև ապաստան ստանալու իրավունք այն պետությունից, որի տարածքում հայցվում է ապաստանը, կամ ընդդեմ հետապնդող պետությանը:

Տե՛ս նաև ապաստան, առաջին ապաստանի երկիր, ապաստարան տրամադրող պետություն

ապաստան հայցող
(asylum-seeker)

Անձ, որը հետապնդումից կամ լուրջ վտանգից պաշտպանություն է փնտրում իր սեփական երկիրը չհանդիսացող այլ երկրում և սպասում համապատասխան միջազգային և ազգային փաստաթղթային գործիքների հիման վրա փախստականի կարգավիճակ ստանալու համար ներկայացված դիմումի կապակցությամբ որոշում ընդունելուն: Բացասական որոշման դեպքում, անձը պետք է լքի երկիրը, և կարող է վտարվել այնպես, ինչպես անկանոն կամ ապօրինի կարգավիճակում գտնվող՝ քաղաքացի չհանդիսացող անձը, եթե մարդասիրական կամ հարակից այլ հիմքերով գտնվելու թույլտվություն չի տրամադրվում:

Տե՛ս նաև դիմում, քաղաքացի չհանդիսացող անձ, փախստական, ապաստանի իրավունք

ապաստարան տրամադրող պետություն
(State of refuge)

Տարածքային ապաստան տրամադրող պետություն:

Տե՛ս նաև ապաստան (տարածքային), ապաստանի իրավունք

ապացուցելիության չափանիշ (standard of proof)

Կոնկրետ դեպքում պահանջվող ապացույցի՝ համոզիչ լինելու աստիճանը կամ մակարդակը: Օրինակ, փախստականների համատեքստում՝ «պատշաճ հիմնավորված» տերմինն օգտագործվում է որպես ապացուցելիության չափանիշ՝ հետապնդման զոհ դառնալու երկյուղի աստիճանը գնահատելիս:

ապացուցման պարտականություն (burden of proof)

Վիճարկվող պնդումը կամ մեղադրանքն ապացուցելու՝ կողմի պարտավորությունը: Միգրացիայի համատեքստում՝ օտարերկրյա պետություն մուտքի թույլտվություն հայցող՝ քաղաքացի չհանդիսացող անձն է սովորաբար կրում ապացուցման պարտականությունը, այսինքն՝ քաղաքացի չհանդիսացող անձը պետք է ապացուցի, որ նա ունի մուտքի իրավունք, ինչը չի արգելվում տվյալ պետության օրենսդրությամբ: Փախստականի կարգավիճակի վերաբերյալ ընթացակարգերի համատեքստում, դիմողը պետք է հիմնավորի իր դրությունը, այսինքն՝ ապացույցներ ներկայացնի այն մասին, որ նա ունի հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ:

Տե՛ս նաև բարեխիղճ դիմող

ապօրինի մուտք (unlawful entry)

Տե՛ս նաև անօրինական մուտք, չթույլատրված/ապօրինի մուտք/ընդունում

աջակցվող կամավոր վերադարձ (assisted voluntary return)

Վարչական, նյութատեխնիկական ապահովման, ֆինանսական և վերաինտեգրման բնույթի օժանդակություն՝ մերժում ստացած ապաստան հայցողներին, մարդկանց թրաֆիքինգից տուժածներին, դժվարին կացության մեջ հայտնված միգրանտներին, մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացիներին և այլ միգրանտների, որոնք չեն կարող կամ չեն ցանկանում մնալ հյուրընկալող երկրում և որոնք կամավոր կերպով ցանկություն են հայտնում վերադառնալ իրենց ծագման երկիր:

Տե՛ս նաև հայրենադարձություն, վերադարձ, ինքնաբուխ միգրացիա, ինքնաբուխ վերադարձ, կամավոր հայրենադարձություն, կամավոր վերադարձ

աջակցվող միգրացիա (assisted migration)

Միգրանտների տեղաշարժ, որն ուղեկցվում է պետության, պետական մարմինների կամ միջազգային կազմակերպության աջակցությամբ՝ ի տարբերություն ինքնաբուխ, առանց օգնության միգրացիայի:

Տե՛ս նաև աջակցվող կամավոր վերադարձ, ինքնաբուխ միգրացիա, ինքնաբուխ վերադարձ

առանց ուղեկցության անչափահասներ (unaccompanied minors)

Տե՛ս նաև առանց ուղեկցության երեխաներ

առանց ուղեկցության երեխաներ (unaccompanied children)

Իրենց քաղաքացիության երկիր չհանդիսացող երկրում չափահասության տարիքի չհասած անձինք, որոնք մնացել են առանց ծնողի, խնամակալի կամ որևէ այլ չափահաս անձի ուղեկցության, որն օրինականորեն կամ սովորույթի ուժով պատասխանատվություն է կրում նրանց համար: Առանց ուղեկցության երեխաներն առանձնահատուկ խնդիրներ են առաջացնում սահմանային վերահսկողության ստորաբաժանման ծառայողների համար, քանի որ փաստաթղթային խնդիրներ ունեցող՝ քաղաքացի չհանդիսացող չափահաս անձանց նկատմամբ կիրառվող կալանքը և մյուս գործելակերպերը կարող են նպատակահարմար չլինել երեխաների դեպքում:

Տե՛ս նաև երեխա, անչափահաս, ընտանիքից առանձնացված երեխաներ

առաջին ապաստանի երկիր (first country of asylum)

Առաջին երկիրը, որտեղ փախստականը կամ տեղահանված անձն իր երկրից դուրս օգտվում է կամ կարող է օգտվել պաշտպանությունից: «Առաջին ապաստանի երկիր» հասկացությունը հաճախ օգտագործվում է որպես ապաստանի որոշման ընթացակարգից օգտվելու հնարավորության պայման:

Տե՛ս նաև ապաստան (տարածքային), Դուբլինի II կանոնակարգ, փախստական, ապաստանի իրավունք, անվտանգ երրորդ երկիր

առաջնային ստուգում (primary inspection)

Միջազգային պրակտիկայում՝ անցակետերում ընդունման համար դիմողին ստուգման ենթարկելն իրականացվում է երկու փուլով՝ առաջնային և երկրորդային ստուգման միջոցով: Ընդունման համար դիմողների մեծամասնությունը նախքան ընդունումն անցնում է միայն կարճ զննում՝ առաջնային ստուգման անցակետերում: Ցանկացած դիմող, ում առնչությամբ միգրացիայի հարցերով պաշտոնատար անձը կասկածներ ունի, կամ ով գրանցված է պետության հսկողական համակարգում, անցնում է երկրորդային ստուգում, երբ դիմողն անցնում է հարցազրույց կամ ենթարկվում է լրացուցիչ քննության: Երկու փուլից բաղկացած այդ մեթոդի կիրառումն ավելի արդյունավետ է և նվազեցնում է հետաձգման դեպքերը օրինական ճանապարհորդողների համար:

Տե՛ս նաև ընդունում, անցակետեր, հարցազրույց, հսկողական համակարգ, երկրորդային ստուգում

առերևույթ (prima facie)

Լատիներեն արտահայտություն, որ նշանակում է «առաջին հայացքից». առաջին տպավորության հիման վրա, որի համար, սակայն, հետագայում ներկայացվում են փաստաթղթեր կամ տրամադրվում են տեղեկություններ: Դա բավարար ապացույց է՝ փաստն արձանագրելու կամ կանխավարկած առաջ քաշելու համար, եթե հակառակը չի ապացուցվում կամ հերքվում:

Միգրացիայի համատեքստում՝ իմիգրանտի (ներգաղթողի) կարգավիճակի համար դիմումը կարող է ենթարկվել նախնական վերանայման, որպեսզի հնարավոր լինի որոշել, թե արդյոք կա բոլոր հիմնական պահանջների մասին վկայող առերևույթ հիմք (հաճախ որպես ֆինանսական օժանդակություն կամ աշխատանքի թույլտվություն ստանալու պայման):

Տե՛ս նաև փախստական, փախստական (մանդատի ներքո), փախստական (առերևույթ), զննում

առողջություն (health)

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրություն (1946 թվական) նախաբանի համաձայն՝ առողջությունը լիարժեք ֆիզիկական, մտավոր ու սոցիալական բարեկեցության վիճակ է, այլ ոչ թե պարզապես հիվանդությունների կամ ֆիզիկական թերությունների բացակայություն:

առողջության գնահատում

(health assessment)

Միգրացիայի համատեքստում՝ ընդունող երկրների վրա բնակչության շարժունության՝ հանրային առողջապահական ազդեցությունը նվազեցնելու ու առավել արդյունավետ կառավարելու գործառույթ, ինչպես նաև միգրանտների ինտեգրումը դյուրացնելու գործառույթ՝ առողջական վիճակի ու բժշկական փաստաթղթերի հայտնաբերման և ծախսարդյունավետ կառավարման միջոցով: Նախքան մեկնումն իրականացվող առողջության գնահատումը թույլ է տալիս խթանել աջակցություն ստացող միգրանտների առողջությունը՝ տրամադրելով կանխարգելիչ և բուժական միջամտություններ նախաձեռնելու հնարավորություն այն պարագայում, երբ առանց բուժում ստանալու երկրից դուրս գալը կարող էր բացասական ազդեցություն ունենալ միգրանտի առողջական վիճակի և (կամ) ընդունող համայնքների հանրային առողջության վրա:

առևանգում

(abduction)

Որևէ մեկին բռնություն գործադրելու կամ խաբեությամբ համոզելու միջոցով այլ վայր տանելու գործողությունը: Երեխաների առևանգման հետ կապված գործածության դեպքերում, այս տերմինը նշանակում է խնամակալության իրավունքների խախտմամբ երեխային հեռացնելը կամ պահելը:

Տե՛ս նաև երեխաների շահագործում, առևանգում (շահադիտական նպատակով), թրաֆիքինգ

առևանգում (շահադիտական նպատակով)

(kidnapping)

Անձին կամ անձանց խմբին բռնության միջոցով ապօրինաբար առևանգելը կամ պահելը, ինչը սովորաբար կատարվում է՝ շահադիտական նպատակով առևանգման տուժողից կամ երրորդ անձից տնտեսական կամ քաղաքական շահ շորթելու նպատակով: Շահադիտական նպատակով առևանգման վրա սովորաբար տարածվում է առանձին պետություններում գործող ազգային քրեական օրենսդրությունը, թեև շահադիտական նպատակով առևանգման որոշ ձևերի դեպքում գործում է միջազգային իրավունքը (օրինակ՝ ծովահենության դեպքում):

Տե՛ս նաև առևանգում, մարդկանց թրաֆիքինգ

ասիմիլյացիա (համաձուլում)

(assimilation)

Որևէ էթնիկ կամ սոցիալական՝ սովորաբար փոքրամասնություն կազմող խմբի հարմարեցումը մեկ այլ խմբի հետ: Ասիմիլյացիան ներառում է լեզվի, ավանդույթների, արժեքների, բարոյական նորմերի և վարքագծի կամ նույնիսկ կենսական շահերի ներընդգրկում և համաձուլում: Չնայած խմբի ավանդական մշակութային

գործելակերպից ամբողջական հրաժարումը քիչ հավանական է, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, ասիմիլյացիան հանգեցնում է նրան, որ մի խումբը սոցիալապես չի տարբերակվում հասարակության մյուս անդամներից: Ասիմիլյացիան համամշակութավորման ամենածայրահեղ դրսևորումն է:

Տե՛ս նաև ակկուլտուրացիա (համամշակութավորում), մշակույթ, ներառում, ինտեգրում

ավելի նվազ/ցածր մասնագիտական հմտություններ և միջին մասնագիտական հմտություններ ունեցող միգրանտ աշխատող (Less/low skilled and semi- skilled migrant worker)

Չկա միջազգային մակարդակով համաձայնեցված որևէ սահմանում ավելի նվազ կամ ցածր մասնագիտական հմտություններ կամ միջին մասնագիտական հմտություններ ունեցող միգրանտ աշխատողի համար: Ավելի լայն իմաստով՝ միջին մասնագիտական հմտություններ ունեցող աշխատող է համարվում այն անձը, ով նախքան առավելագույն/օպտիմալ արդյունավետությամբ գործելու հնարավորություն ունենալը պետք է անցնի որոշակի աստիճանի վերապատրաստում կամ ծանոթանա տվյալ աշխատանքին, թեև այդպիսի վերապատրաստումը որոշակի հմտություններ (կամ արհեստ) ունեցող աշխատող համարվելու համար պահանջվող տևողություն կամ ինտենսիվություն չունի. ընդ որում՝ այդպիսի վերապատրաստումը չափվում է ոչ թե տարիներով, այլ շաբաթներով կամ օրերով, և ոչ էլ սովորաբար իրականացվում է բուհական մակարդակով: Բազմաթիվ, այսպես կոչված՝ «ֆիզիկական աշխատանք կատարող անձինք» (օրինակ՝ արտադրության, շինարարության ոլորտի աշխատողներ) պետք է դասակարգվեն որպես միջին մասնագիտական հմտություններ ունեցող աշխատողներ: Մյուս կողմից՝ ավելի նվազ կամ ցածր մասնագիտական հմտություններ ունեցող աշխատող է համարվում այն անձը, ով ավելի քիչ վերապատրաստում է անցել, քան միջին մասնագիտական հմտություններ ունեցող աշխատողը, կամ ով թեև չի անցել որևէ վերապատրաստում, սակայն ձեռք է բերել այդ աշխատանքը կատարելու մասնագիտական կարողություն:

Տե՛ս նաև որակավորում ունեցող միգրանտ

արգելանքի տակ գտնվելը (custody)

Միգրացիայի համատեքստում՝ անձ, որը ազատությունից զրկվել է իշխանությունների կողմից և արգելանքի տակ է գտնվում:

Տե՛ս նաև վարչական կալանք, կալանք

Արդար դատաքննություն (fair trial)	Դատարանի կամ տրիբունալի կողմից իրականացվող դատավարություն՝ ինչպես ինստիտուցիոնալ կանոնների (որոնցով պահանջվում է օրենքով ստեղծված անկողմնակալ և գործով չշահագրգռված տրիբունալի առկայություն), այնպես էլ դատավարական իրավունքների (այսինքն՝ առերեսման, դռնբաց դատաքննության, գործի անհապաղ քննության, քրեական գործում ինքնամեղսագրումից խուսափելու, որոշումների հրապարակայնությունն ապահովելու և կրկնակի դատապարտումից խուսափելու իրավունքներ) պահպանմամբ: Համաձայն օրենքի՝ յուրաքանչյուր ոք ունի արդար դատաքննության իրավունք: *Տե՛ս նաև պատշաճ ընթացակարգ, վճիռ/դատավճիռ*
արդարադատությունից խուսափել (absconding)	Գործողություն, որով անձը փորձում է խուսափել իրավական ընթացակարգերից՝ չենթարկվելով դատարանի խափանման միջոցներին:
արմատներից կտրված մարդիկ (uprooted people)	Անձինք, ովքեր հարկադրաբար լքում են իրենց համայնքները, ովքեր փախչում են հետապնդման կամ պատերազմի պատճառով, ովքեր հարկադրաբար տեղահանվում են բնապահպանական ավերածությունների պատճառով և ում ստիպել են այլ համայնքում կամ արտերկրում փնտրել գոյության միջոցներ, քանի որ նրանք չեն կարող գոյատևել իրենց հայրենի երկրում: *Տե՛ս նաև էկոլոգիական հիմքերով միգրանտ, էկոլոգիական պատճառներով տեղահանված անձ, արտաքին տեղահանության ենթարկված անձինք, ներքին տեղահանության ենթարկված անձինք, փախստական*
արյան սկզբունք (*jus sanguinis*)	Սկզբունք, որի համաձայն երեխայի քաղաքացիությունը որոշվում է նրա ծնողների քաղաքացիությամբ՝ անկախ երեխայի ծննդյան վայրից: *Տե՛ս նաև հողի սկզբունք (jus soli)*
արտաբնակ (expatriate)	Օտար երկրում բնակվող անձ: *Տե՛ս նաև արտաբնակություն, քաղաքացիությունը կորցնելը*

արտաբնակություն (expatriation)

Անձի կողմից հայրենի երկրում բնակությունից կամ դրա հպատակությունից կամավոր հրաժարվելը, ով այլ վայրում բնակվելու նպատակով լքում է հայրենի երկիրը: Եթե այն տեղի է ունենում մեկ երկրի հպատակությունը մեկ այլ երկրի հպատակությամբ փոխարինելու մտադրությամբ, ապա նման գործողության կատարման ամսաթվի դրությամբ բացարձակապես դադարեցվում են բոլոր քաղաքացիական և քաղաքական իրավունքները:

Տե՛ս նաև արտաբնակ, քաղաքացիությունը կորցնելը

արտապատվիրում (outsourcing)

Որևէ սուբյեկտի կողմից կոնկրետ գործարարական գործընթացների, ինչպես օրինակ՝ նախագծման կամ արտադրության համար ենթապայմանագրի կնքումը մեկ այլ ընկերության հետ: Նաև վերաբերում է համընդհանուր կադրային ապահովմանը:

Տե՛ս նաև օֆշորային գործունեություն

արտաքին տեղահանման ենթարկված անձինք (externally displaced persons)

Անձինք, որոնք փախուստի են դիմել իրենց երկրից հետապնդման, համատարած բռնությունների, զինված ընդհարումների կամ այլ մարդածին աղետների հետևանքով: Այդ անձինք հաճախ դիմում են զանգվածային փախուստի: Նրանք երբեմն անվանվում են նաև «դե ֆակտո փախստականներ»:

Տե՛ս նաև դե ֆակտո փախստականներ, տեղահանված անձ, ներքին տեղահանման ենթարկված անձ, արմատներից կտրված մարդիկ

արտաքսման հրաման (expulsion order)

Պետության կողմից արձակված դատական կամ վարչական հրաման, որով քաղաքացի չհանդիսացող անձին պարտադրվում է լքել իր պետության տարածքը:

Տե՛ս նաև վտարում, արտաքսում, զանգվածային արտաքսում, անձին վերադարձնելու թույլատրելիություն

արտաքսում (expulsion)

Պետության համապատասխան մարմնի կողմից իրականացվող գործողություն՝ պետության տարածքից անձի կամ անձանց (քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող)՝ իր կամ իրենց կամքին հակառակ հեռացումն ապահովելու մտադրությամբ և հետևանքներով:

Տե՛ս նաև վտարում, զանգվածային արտաքսում, արտաքսման հրաման, անձին վերադարձնելու թույլատրելիություն, հեռացում

Բ

բազմակողմ (multilateral)

Պայմանագրերի և բանակցությունների առնչությամբ բազմակողմ (կամ բազմաթիվ կողմերի միջև բաժանված) նշանակում է համապատասխան գործընթացում երկուսից ավելի պետությունների ներգրավում:

Տե՛ս նաև երկկողմ, պայմանագիր

Բազմամշակութայնություն (multiculturalism)

Ինտեգրացիոն մոտեցում, որով ճանաչվում, կառավարվում և առավելագույնին են հասցվում մշակութային բազմազանության ձեռքբերումները: Միգրանտներն առանձնանում են բնակչության մեծ մասից իրենց լեզվով, մշակույթով և սոցիալական վարքագծով՝ չվտանգելով իրենց ազգային ինքնությունը:

բարեխիղճ (bona fide)

«Ազնվորեն»՝ առանց խաբելու կամ մոլորեցնելու, անկեղծ, ճշմարիտ: Միջազգային հանրային իրավունքում այս տերմինը նշանակում է միջազգային իրավունքի սուբյեկտների պարտականությունը՝ իրենց ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ: Դա ներառում է պայմանագրերի կատարում այնպիսի եղանակով, որ դրանց չի զրկում իրենց էությունից, պայմանագրերի մեկնաբանում դրանց ստեղծման ոգով, օրենքի չարաշահման արգելք, և դավաճանության արգելք՝ զինված ընդհարումների ժամանակ գործող միջազգային իրավունքում:

Տե՛ս նաև բարեխիղճ դիմող, ազնվություն, իրավաչափ, անբարեխիղճ

բարեխիղճ դիմող (bona fide applicant)

Միգրացիայի համատեքստում՝ անձ, որը իրական մտադրություն ունի մուտք գործել տվյալ պետություն օրինական նպատակներով, և ում կողմից անօրինական մնալը և մուտքի պայմանները խախտելը, հյուպատոսական կամ իմիգրացիայի (ներգաղթի) հարցերով մարմնի աշխատակցի կարծիքով, հավանական չէ:

Տե՛ս նաև դիմող, բարեխիղճ, ապացուցման պարտականություն

բարձր մասնագիտական հմտություններ/ որակավորում ունեցող միգրանտ (highly skilled/qualified migrant)

Միջազգայնորեն համաձայնեցված սահմանման բացակայության պարագայում հաճախ նկատի են ունենում իրենց նշանակությամբ համընկնող երկու իմաստ: Չափազանց լայն իմաստով՝ բարձր մասնագիտական հմտություններ ունեցող միգրանտ է համարվում այն ան-

ձը, ով ունի բուհական կրթություն, հիմնականում՝ չափահաս անձ, որը ստացել է առնվազն երկու տարի տևողությամբ հետմիջնակարգ կրթություն։ Ավելի նեղ իմաստով՝ բարձր մասնագիտական հմտություններ ունեցող միգրանտ է համարվում այն անձը, ով բուհական կրթական մակարդակի կամ մասնագիտական փորձի շնորհիվ ձեռք է բերել ճիշտ տվյալ մասնագիտությամբ զբաղվելու համար անհրաժեշտ որակավորման մակարդակ։

Տե՛ս նաև մասնագիտական հմտություններ ունեցող միգրանտ, մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացի

բացառման մասին դրույթներ (exclusion clauses)

Իրավական դրույթներ, որոնցով մերժվում է փախստականների միջազգային պաշտպանության արտոնությունների տրամադրումն այն անձանց, որոնք այլ պայմաններում կբավարարեին փախստականի կարգավիճակին ներկայացվող չափորոշիչները։ *«Փախստականների կարգավիճակի մասին»* 1951 թվականի *կոնվենցիայում* բացառման մասին դրույթները կարելի է գտնել 1–ին հոդվածի Դ, Ե և Զ կետերում։

Տե՛ս նաև դադարման մասին դրույթներ, պատերազմական հանցագործություններ

բացառում (exclusion)

Քաղաքացի չհանդիսացող անձի՝ պետություն ընդունելու պաշտոնական մերժումը։ Որոշ պետություններում սահմանային ծառայությունների պաշտոնատար անձինք կամ այլ մարմիններ իրավասու են մերժել քաղաքացի չհանդիսացող անձանց. այլ պետություններում բացառման մասին հրամանը տրվում է իմիգրացիոն [ներգաղթային] հարցերով դատավորի կողմից գործի լսումից հետո։

գործարարական նպատակով այցելու (business visitor)

Անձ, որին մուտքի թույլտվություն է տրվում բիզնես վիզայի հիման վրա կամ գործարարական գործունեություն իրականացնելու համար։

գործարար միգրանտ (business migrant)

Անձ, որին տրվում է սահմանափակ ժամկետով մուտքի թույլտվություն՝ հաստատված ազգային հովանավոր–գործատուի մոտ այնպիսի պաշտոն (որպես կանոն՝ մասնագիտական կամ ղեկավար պաշտոն) ստանձնելու համար, որում նախապես է նշանակվել։

բնակության (կացության) թույլտվություն

Պետության իրավասու մարմինների կողմից քաղաքացի չհանդիսացող անձին տրված փաստաթուղթ, որով հաստատվում է նրա՝ թույլտվության վավերականության

(residence permit)	ժամկետի ընթացքում տվյալ պետությունում ապրելու իրավունքը: *Տե՛ս նաև թույլատրված ժամկետից երկար գտնվելը, թույլտվություն, բնակություն (կացություն)*
բնակություն (կացություն) (residence)	Կոնկրետ վայրում որոշ ժամանակ ապրելը կամ ապրելու փաստը. այն վայրը, որտեղ անձը փաստացի ապրում է՝ ի տարբերություն հիմնական բնակության վայրի: Բնակությունը սովորաբար ենթադրում է պարզապես տվյալ վայրում անձի ֆիզիկական ներկայությունը՝ որպես բնակիչ, մինչդեռ հիմնական բնակության դեպքում պահանջվում է ֆիզիկական ներկայություն տվյալ վայրում՝ այն հայրենի տուն դարձնելու մտադրությամբ: Այսպիսով, անձը միաժամանակ կարող է ունենալ մեկից ավելի բնակության վայր, սակայն միայն մեկ հիմնական բնակության վայր: *Տե՛ս նաև սովորաբար բնակվելու վայրի երկիր, հիմնական բնակության վայր, սովորաբար բնակվելու վայր, բնակության (կացության) թույլտվություն*
բնակություն հաստատելու մտադրությամբ միգրանտներ (migrants for settlement)	Երկար կամ անսահմանափակ ժամկետով համապատասխան վայրում մնալու թույլտվություն ունեցող օտարերկրացիներ, որոնց նկատմամբ ըստ էության չի կիրառվում որևէ սահմանափակում՝ կապված տնտեսական գործունեություն իրականացնելու հետ (օրինակ՝ աշխատանքի, ընտանեկան, ծագման հիմքերով միգրանտներ, ազատ հիմնադրման իրավունք ունեցող միգրանտներ կամ օտարերկրյա թոշակառուներ):
բնակչության տեղահանում (population displacement)	*Տե՛ս տեղահանում*
բողոք/հայց (claim)	Պետական մարմին կամ դատարան ներկայացվող պնդում, որով հայցվում է որոշակի գործողությունների իրականացում կամ որոշակի իրավունքի կամ արտոնության, ինչպես օրինակ՝ փախստականի կարգավիճակի կամ քաղաքացիական վարույթում փոխհատուցման կամ իրավական պաշտպանության իրավունքի որոշում: *Տե՛ս նաև դիմում*
բողոքարկում (appeal)	Որոշումը վերանայելու նպատակով նախաձեռնվող գործընթաց՝ այն առավել վերադաս մարմին ներկայացնելու միջոցով. հաճախ վերաբերում է ստորին ատյանի դատարանի կամ մարմնի կայացրած որոշումը վերին

ատյանի դատարան՝ վերանայման և հնարավոր բեկանման համար ներկայացնելուն:
Տե՛ս դատական վերանայում

բռնաբարություն (rape)

Ուժ գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով, հարկադրաբար, օգտվելով հարկադրանքի համար նպաստավոր միջավայրից՝ տուժողի մարմնի ցանկացած մասի մեջ սեռական օրգանի միջոցով, կամ տուժողի հետանցքի կամ սեռական օրգանի անցքի մեջ որևէ առարկայով կամ մարմնի որևէ այլ մասով ներթափանցում, կամ նման գործողությունները իրական համաձայնությունը տալու հնարավորություն չունեցող անձի նկատմամբ:

Տե՛ս նաև սեռական բնույթի բռնի գործողություն

Գ

գաղթ
(exodus)

Ծագման երկրից դեպի դուրս կատարվող տեղաշարժը խմբերով (մեկուսացված և ոչ կանոնավոր)։ Զանգվածային գաղթը մեծ թվով անձանց կամ համայնքի մի հատվածի տեղաշարժն է տվյալ ժամանակահատվածում։

գենդերային բռնություն
(gender based violence)

Սեռի հիմքով անձին ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք պատճառող կամ պատճառելու հնարավորություն ունեցող ցանկացած արարք՝ ներառյալ այդպիսի արարք կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայական զրկումը՝ անկախ դրա՝ հասարակական կամ անձնական կյանքում տեղի ունենալու հանգամանքից *Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» 1993 թվականի հոչակագրի 1–ին հոդված։*

Տե՛ս նաև կանանց նկատմամբ բռնություն

գլխավոր/առաջնային/
հիմնական դիմող
(principal/primary/ main applicant)

Միգրացիայի համատեքստում՝ անձ, որը դիմում է փախստականի կամ իմիգրացիոն [ներգաղթային] այլ կարգավիճակ ստանալու համար։ Ընդհանուր միջազգային պրակտիկայում խնամքի տակ գտնվող անձինք (սովորաբար ամուսիններից մեկը և անչափահաս երեխաները) համարվում են դիմողի ընտանեկից և ստանում են գլխավոր դիմողին տրամադրված նույն կարգավիճակը։

Տե՛ս նաև դիմողի ընտանեկից, *միգրանտ, փախստական*

գլոբալիզացիա
(համաշխարհայնացում)
(globalization)

Մարդկանց, ընկերությունների և տարբեր պետությունների կառավարությունների միջև փոխազդեցության և ինտեգրման գործընթաց. միջազգային առևտրի և ներդրումների արդյունքում առաջացած գործընթաց, որին աջակցում են տեղեկատվական տեխնոլոգիաները։ Այդ գործընթացն ազդեցություն է ունենում շրջակա միջավայրի, մշակույթի, քաղաքական համակարգերի, տնտեսական զարգացման ու բարգավաճման, ինչպես նաև տարբեր հասարակություններում մարդու բարեկեցության վրա։

գյուղից գյուղ
տեղաշարժվող
միգրանտներ
(rural-rural migrants)

Ներքին միգրանտներ, որոնք տեղաշարժվում են մեկ գյուղական վայրից մյուսը՝ ներառյալ նաև առևտրով զբաղվող անձանց, ֆերմեր–անասնաբույծների և գյուղատնտեսության ոլորտի աշխատողների տեղաշարժը ինչպես մոտ, այնպես էլ հեռու տարածության վրա։

Տե՛ս նաև ներքին միգրացիա, գյուղից քաղաք տեղաշարժվող միգրանտներ, քաղաքից գյուղ տեղաշարժվող միգրանտներ, քաղաքից քաղաք տեղաշարժվող միգրանտներ

«գրին քարտ» (green card)

ԱՄՆ կառավարության կողմից քաղաքացի չհանդիսացող անձանց տրամադրվող՝ ինքնությունը հաստատող քարտ, որը Միացյալ Նահանգներում շնորհում է մշտական բնակության (կացության) կարգավիճակ: Այն նաև կոչվում է Մշտական բնակության (կացության) քարտ, որը վկայում է այն մասին, որ քաղաքացի չհանդիսացող անձն ունի օրինական մշտական բնակության (կացության) կարգավիճակ և Միացյալ Նահանգներում մշտապես բնակվելու և աշխատելու իրավունք: Անձը կարող է հավակնել «գրին քարտի» աշխատանքի միջոցով կամ քաղաքացի հանդիսացող կամ մշտական բնակության (կացության) կարգավիճակ ունեցող ընտանիքի անդամի հովանավորությամբ: Միացյալ Նահանգներում բնակվելու ու աշխատելու իրավունքից բացի՝ «գրին քարտը» իրավատիրոջը տալիս է որոշակի ժամանակով արտերկրում ճանապարհորդելու հնարավորություն, որոշ ժամանակ անց ԱՄՆ քաղաքացիություն ստանալու համար դիմելու իրավունք և դիմողի ամուսնու ու մինչև 21 տարեկան չամուսնացած երեխաների համար «գրին քարտի» խնդրագիր ներկայացնելու իրավունք:

Տե՛ս նաև մշտական բնակություն

զումարային միգրացիա (total migration)

Իմիգրանտների [ներգաղթողների] մուտքերի կամ ժամանումների և էմիգրանտների [արտագաղթողների] ելքերի կամ մեկնումների թվի գումարը կազմում է միգրացիայի ընդհանուր ծավալը, և վկայակոչվում է «զումարային միգրացիա» տերմինով՝ ի տարբերություն «զուտ միգրացիայի» կամ «միգրացիոն շարժի հավասարակշռության», որն առաջանում է ժամանումների և մեկնումների միջև տարբերություններից:

Տե՛ս նաև զուտ միգրացիա

Դ

դադարման մասին դրույթներ (cessation clauses)

Փաստաթղթային գործիքում պարունակվող իրավական դրույթներ, որոնցով սահմանվում են այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում փախստականի կարգավիճակը դադարում է դրա՝ այլևս անհրաժեշտ չլինելու հիմքով, ինչպես օրինակ՝ նախատեսված է *«Փախստականների կարգավիճակի մասին» 1951թվականի կոնվենցիայի 1(գ) հոդվածում և «Աֆրիկայում փախստականների հիմնախնդիրների առանձնահատուկ հայեցակետերը կարգավորող» Աֆրիկյան միասնության կազմակերպության (ԱՄԿ) 1969 թվականի կոնվենցիայի I(4)հոդվածում։*

Տե՛ս նաև բացառող դրույթներ

դաշնագիր (covenant)

Տե՛ս պայմանագիր

դատական գործ (suit)

Դատարանում մեկ կողմի (կողմերի)՝ մյուս կողմի նկատմամբ որևէ վարույթի հարուցում։

դատական իշխանություն (judiciary)

Օրենքների մեկնաբանման և արդարադատության իրականացման համար պատասխանատու իշխանության ճյուղ. դատական համակարգ, դատավորներից կազմված մարմին։

դատական ծանուցագիր (summons)

Ծանուցում, համաձայն որի, անձից պահանջվում է ներկայանալ դատարան կամ վարչական մարմին՝ որպես ատենակալ կամ վկա հանդես գալու նպատակով։

դատական հետապնդում (prosecution)

Պետության կողմից սովորաբար հարուցվող քրեական գործ կամ վարույթ, որում մեղադրվող անձը ենթարկվում է դատական քննության։ Ավելի լայն իմաստով՝ քաղաքացիական կամ քրեական գործի կամ վարույթի իրականացում։

դատական վերանայում (judicial review)

Դատարանի՝ օրենսդիր և գործադիր մարմինների գործողություններն անվավեր ճանաչելու լիազորություն. ավելի ցածր դատական ատյանի կամ վարչական մարմնի փաստացի կամ իրավական եզրահանգումների վերանայում դատարանի կողմից։

Տե՛ս նաև բողոքարկում

դատարանի կարգադրություն (injunction)

Դատարանի՝ որևէ գործողություն հրահանգող կամ արգելող հրաման։ Դատարանի կարգադրություն ձեռք բերելու համար բողոք ներկայացնողը պետք է ապացուցի, որ օրենքում բացակայում են դատական պաշտպանության

ակնհայտ, համարժեք ու լրիվ միջոցները, և անդառնալի վնաս կպատճառվի, եթե դատական պաշտպանության միջոցներ չտրամադրվեն։

դե յուրե (de jure)

Իրավունքի կամ օրենքի ուժով գոյություն ունեցող։

Տե՛ս նաև դե ֆակտո

դեսպանընկալ պետություն (accredited State)

Պետություն, որն ընդունում է դիվանագիտական ներկայացուցչին։

Տե՛ս նաև հավատարմագրող պետություն

դե ֆակտո (de facto)

Որպես փաստ գոյություն ունեցող. իրավական ուժ ունեցող՝ նույնիսկ առանց ֆորմալ կամ իրավական ճանաչում ստանալու։

Տե՛ս նաև դե յուրե

դե ֆակտո զուգընկեր (de facto partner)

Որպես փաստ գոյություն ունեցող միություն։ Աստիճանաբար ավելացող պետություններ մշտական բնակության (կացության) թույլտվություն կամ իմիգրացիոն [ներգաղթային] այլ կարգավիճակ տրամադրելու նպատակներով ճանաչում են ոչ միայն ամուսնությունը, այլ նաև չամուսնացած չափահասների միջև որոշակի հարաբերությունները։ «Դե ֆակտո զուգընկերների» օրինակները ներառում են տարասեռ կամ նույնասեռ հարաբերություններում գտնվող այն զուգընկերներին, որոնք որոշակի ժամանակահատվածում ապրել են միասին՝ իրական և կայուն հարաբերությունների պահպանմամբ։

Տե՛ս նաև խնամքի տակ գտնվող անձ

դե ֆակտո պաշտպանություն (de facto protection)

Կազմակերպության նպատակների իրականացման արդյունքում կամ դրա ուժով շնորհված պաշտպանություն։

Տե՛ս նաև պաշտպանություն

դե ֆակտո փախստականներ (de facto refugees)

Անձինք, որոնք չեն ճանաչվում որպես փախստականներ *«Փախստականների կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի 1951 թվականի կոնվենցիայի և «Փախստականների կարգավիճակի մասին»* 1967 *թվականի արձանագրության* իմաստով, և որոնք չեն կարող, կամ հիմնավոր ճանաչված պատճառներով չեն ցանկանում վերադառնալ իրենց քաղաքացիության երկիրը կամ, քաղաքացիություն չունենալու դեպքում, իրենց՝ սովորաբար բնակվելու վայրի երկիրը։

Տե՛ս նաև տեղահանված անձ, արտաքին տեղահանման ենթարկված անձինք, ներքին տեղահանման ենթարկված անձինք, փախստական

դե ֆակտո քաղաքացիություն չունենալը (de facto statelessness)	Այն անձանց դրությունը, ովքեր ունեն մի պետության քաղաքացիություն, սակայն մեկնել են այդ երկրից, դրանից տրամադրվող որևէ պաշտպանությունից չեն օգտվում կա՛մ այն պատճառով, որ հրաժարվում են դիմել նման պաշտպանություն ստանալու համար, կա՛մ էլ պետությունն է հրաժարվում նրանց պաշտպանություն տրամադրել: Դե ֆակտո քաղաքացիություն չունենալը մի տերմին է, որը հաճախ կապված է ապաստան հայցողների և որպես փախստականներ ճանաչված անձանց հետ: *Տե՛ս նաև քաղաքացիություն, քաղաքացիություն չունենալը*
դիմող (applicant)	Միգրացիայի համատեքստում՝ անձ, որը պաշտոնապես հայցում է պետական մարմնի կամ այլ իրավական գործողության կատարում, ինչպես օրինակ՝ փախստականի կարգավիճակի, վիզայի կամ աշխատանքի թույլտվության տրամադրում: *Տե՛ս նաև բարեխիղճ (bona fide), բարեխիղճ դիմող, փախստական, վիզա, դիմումը հետ վերցնելը, աշխատանքի թույլտվություն*
դիմողի ընտանեկից **(derivative applicant)**	Անձ՝ սովորաբար ամուսիններից մեկը կամ անչափահաս երեխան, որը կարող է իմիգրացիոն (ներգաղթային) կարգավիճակ ստանալ մյուսի դիմումի հիման վրա: *Տե՛ս նաև երեխա, դե ֆակտո զուգընկեր, խնամքի տակ գտնվող անձ, ընտանիքի անդամներ, անչափահաս, գլխավոր դիմող*
դիմում (application)	Միգրացիայի համատեքստում՝ դիմում (սովորաբար՝ գրավոր), որը սահմանված կարգով պետական մարմին է ներկայացվում պետական մարմնի կամ այլ իրավական գործողություն հայցող անձի կամ կազմակերպության կողմից: *Տե՛ս նաև բողոք/հայց*
(դիմումը) հետ վերցնելը (withdrawal, of an application)	Խնդրանք՝ ավելի վաղ ներկայացված դիմումը չեղյալ համարելու կամ վերադարձնելու մասին, կամ համապատասխան պաշտոնյաներին ուղղված ցուցում այն մասին, որ դիմումը ներկայացրած անձն այլևս չի ցանկանում ստանալ հայցված կարգավիճակը կամ արտոնությունը: *Տե՛ս նաև դիմող, դիմում*
դիվանագիտական ապաստան (diplomatic asylum)	*Տե՛ս ապաստան (դիվանագիտական)*

դիվանագիտական պաշտպանություն (diplomatic protection)

«Միջազգային իրավունքի տարրական սկզբունք, որի համաձայն պետությունն իրավասու է պաշտպանելու իր սուբյեկտներին, որոնք տուժել են մեկ այլ պետության՝ միջազգային իրավունքին հակասող գործողություններից, որից նրանք չեն կարողացել բավարար փոխհատուցում ստանալ սովորական ուղիներով: Նախաձեռնելով իր սուբյեկտներից մեկի գործը և նրա անունից դիմելով դիվանագիտական գործողությունների կամ միջազգային դատական ընթացակարգերի՝ պետությունն իրականում հավաստում է իր սեփական իրավունքների, այն է՝ իր սուբյեկտների անունից՝ միջազգային իրավունքի նորմերի նկատմամբ հարգանքի ապահովման իրավունքի» առկայությունը *(Mavrommatis Palestine Concession Case (Jurisdiction) P.C.I.J.1924 at I:) (Մավրոմատիս – Պաղեստինի կոնցեսիաները (իրավազորություն) P.C.I.J. 1924 at I):*

Տե՛ս միջազգային իրավունք (հանրային)

դյուրացված ընթացակարգով միգրացիա (facilitated migration)

Կանոնավոր միգրացիայի խթանում կամ խրախուսում՝ ճանապարհորդելն ավելի դյուրին ու հարմարավետ դարձնելու միջոցով: Դա կարող է իրականացվել վիզա ստանալու համար դիմելու կարգավորված գործընթացի կամ ուղևորների ստուգման արդյունավետ ու բարձր որակավորում ունեցող անձնակազմի կողմից իրականացվող ընթացակարգերի միջոցով:

դրամական փոխանցումներ (remittances)

Քաղաքացի չհանդիսացող անձանց վաստակած կամ ձեռք բերած գումարները, որոնք հետ են փոխանցվում նրանց ծագման երկիր:

Տե՛ս նաև ֆինանսական միջոցները հետ վերադարձնելը (ֆինանսական միջոցների «հայրենադարձում»), սոցիալական կապիտալի փոխանցում

դրոշի պետություն (flag State)

Դրոշի պետությունը նավի գրանցման վայրի պետությունն է: Դրոշի պետությունը պատասխանատու է իր դրոշի ներքո նավարկվող նավերի կողմից՝ սովորութային ու միջազգային պայմանագրային իրավունքի ներքո համապատասխան պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

Տե՛ս նաև միջազգային ջրեր, փրկարարական աշխատանք ծովում, ջրային փոխադրամիջոց

Դուբլինի II կանոնակարգ (Dublin II Regulation)

Անդամ պետություններից մեկում երրորդ երկրի քաղաքացու կողմից ներկայացված՝ ապաստան ստանալու համար դիմումի քննության համար պատասխանատու ան-

դամ պետությունը որոշելու չափորոշիչները և մեխանիզմները սահմանող՝ Խորհրդի 2003 թվականի փետրվարի 18-ի թիվ 343/2003 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ 2003 թվականի L 50/1)՝ «Դուբլինի II» վերտառությամբ, որով փոխարինվում են Դուբլինի կոնվենցիայի դրույթները (Եվրոպական համայնքների անդամ պետություններից մեկում ներկայացված՝ ապաստան ստանալու համար դիմումների քննության համար պատասխանատու անդամ պետությունը որոշող կոնվենցիա, ստորագրվել է Դուբլինում, 1990 թվականի հունիսի 15–ին)։ Ըստ Դուբլինի II կանոնակարգի՝ անդամ պետությունները պետք է օբյեկտիվ և աստիճանակարգային չափորոշիչների հիման վրա գնահատեն, թե որ անդամ պետությունն է պատասխանատու իր տարածքում ներկայացված՝ ապաստան ստանալու համար դիմումի քննության համար։ Այս համակարգը նախատեսված է «ապաստանի գնումների» պրակտիկան կանխարգելելու համար (երբ ապաստան հայցողը ապաստանի համար մի քանի դիմումներ է ներկայացնում տարբեր պետություններում) և միևնույն ժամանակ ապահովելու համար, որ ապաստան հայցողներից յուրաքանչյուրի գործին ընթացք տրվի միայն մեկ անդամ պետությունում։

Տե՛ս նաև ապաստան (տարածքային), ապաստան հայցող, ապաստանի իրավունք, փախստական, շրջիկ փախստական, Շենգենյան համաձայնագիր

Ե

ելքի անցակետ (point of exit)

Տե՛ս անցակետ

ելքի կնիք (exit stamp)

Սահմանային ծառայությունների պաշտոնատար անձի կողմից անձի ճամփորդական փաստաթղթում դրված նշան, որով նշվում է պետության տարածքից անձի դուրս գալու ամսաթիվը և վայրը։

Տե՛ս նաև մուտքի կնիք

ելքի վիզա (exit visa)

Այն վիզայի ժամկետը լրացած անձանց տրամադրվող վիզա, որի ժամկետը անհրաժեշտ է երկարաձգել նախքան երկրից դուրս գալը։ Որոշ երկրներում այն անվանվում է նաև «կամրջող վիզա»։

Տե՛ս նաև վիզա

երաշխիք (guarantee)

Այլ անձի պարտքի կամ պարտավորության համար պատասխանատու լինելու նպատակով տրված համաձայնություն այն հիմքով, որ այդ անձը չունի այն վճարելու կամ կատարելու հնարավորություն։ Միգրացիայի համատեքստում երաշխիք կարող է պահանջվել որևէ պետության մուտքի թույլտվություն հայցող՝ քաղաքացի չհանդիսացող անձանց համար այն պայմանով, որ նրանք մտադիր են մեկնել այդ պետությունից այնտեղ գտնվելու ժամկետի ավարտից հետո։

Տե՛ս նաև երդմամբ հաստատվող գրավոր վկայություն (աջակցության մասին), պարտավորավճար, հովանավորություն

երդմամբ հաստատվող գրավոր վկայություն (աջակցության մասին) (affidavit (of support))

Հաստատված իրավական փաստաթուղթ, որը պարունակում է իրավասու մարմնի առջև տրված երդմամբ հավաստված գրավոր ցուցմունք։ Միգրացիայի համատեքստում՝ երդմամբ հաստատվող գրավոր վկայությունը սովորաբար ստորագրվում է հովանավորի կողմից, որը երաշխավորում է միգրանտի ապրուստի լրիվ ապահովումը նրան՝ երկիր մուտք գործելու իրավունք ստանալու հնարավորություն ընձեռելու համար, ինչը հաճախ պահանջվում է մեծահասակ միգրանտների և այն անձանց համար, ովքեր հիվանդ են և անկարող են հոգալ իրենց մասին։

Տե՛ս նաև երաշխիք, հովանավորություն

երդում (oath)

Ճշմարտությունն ասելու վերաբերյալ հանդիսավոր խոստում, որը սովորաբար ուժ է ստանում ինչ–որ բան որպես սրբություն (օրինակ՝ աստծուն կամ աստվածներին) դիտարկելու կամ ինչ–որ բան պատկառելու կապակցությամբ: Իրավական համատեքստում՝ երդմամբ ուղեկցվող բանավոր կամ գրավոր հայտարարությունը ենթադրում է ճշմարտությունն ասելու իրավական պարտականություն: Շատ երկրներում երդմամբ պարտավորված անձը, ճշմարտությունը չասելու դեպքում, կատարում է հանցագործություն:

Տե՛ս նաև վկա

երեխա (child)

Տասնութ տարին չլրացած ցանկացած անհատ, եթե երեխայի նկատմամբ կիրառվող օրենքով չափահասության տարիքը չի լրանում ավելի վաղ *(«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ–ի 1989 թվականի կոնվենցիայի 1–ին հոդված):*

Տե՛ս նաև անչափահաս, առանձնացված երեխաներ, առանց չափահասի ուղեկցության երեխաներ

երեխայի աշխատանք (child labour)

Երեխայի կողմից կատարվող ցանկացած աշխատանք, որը զրկում է նրան իր մանկությունից, ներուժից և արժանապատվությունից, վնասակար է նրա առողջության, կրթության, ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացման համար: (Տե՛ս *«Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիան):*

Տե՛ս նաև երեխայի շահագործում, ստրկություն, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր

երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր (worst forms of child labour)

Արտահայտություն, որն ընդգրկում է. «ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման գործելակերպերը, ինչպիսիք երեխաների վաճառքը և թրաֆիքինգը, *պարտքի պատճառով կախվածությունն* են կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ ստիպողական աշխատանքը, այդ թվում՝ երեխաների հարկադիր կամ ստիպողական հավաքագրումը զինված ընդհարումներում նրանց օգտագործելու համար, բ) երեխային օգտագործելը, գնելը կամ առաջարկելը մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար, գ) երեխային օգտագործելը, գնելը կամ առաջարկելը հակաիրավական

գործունեությամբ զբաղվելու՝ մասնավորապես թմրանյութերի արտադրման և շրջանառության համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում դ) աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը» (*«Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և դրանց վերացմանն ուղղված անհապաղ միջոցառումների մասին» ԱՄԿ–ի թիվ 182 կոնվենցիայի 3–րդ հոդված*)

Տե՛ս նաև երեխայի շահագործում, երեխայի աշխատանք, պարտքի պատճառով կախվածություն, շահագործում, անազատ վիճակ, ստրկություն, մարդկանց թրաֆիքինգ

երեխաների շահագործում (child exploitation)

«Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայի և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման ու վերացման ուղղությամբ անհետաձգելի միջոցառումների մասին» 1999 թվականի կոնվենցիայի համաձայն, երեխաների շահագործումն ընդգրկում է հետևյալը՝ տնտեսական շահագործում (ցանկացած աշխատանք, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությունը, կամ վնասակար լինել երեխայի առողջության կամ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացման համար, սեռական շահագործում (սեռական ոտնձգություն, մարմնավաճառություն, մանկական պոռնոգրաֆիա), և երեխաների առևանգում, վաճառք ու թրաֆիքինգ կամ երեխայի շահագործման ցանկացած այլ ձև:

Տե՛ս նաև առևանգում, երեխայի աշխատանք, շահագործում, առևանգում (շահադիտական նպատակով), թրաֆիքինգ, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր

երեխայի որդեգրում (միջազգային) (child adoption (international))

Երեխայի որդեգրում օտար երկրից, ինչը ենթադրում է իր ծագման երկրից երեխայի տեղափոխումը որդեգրող ընտանիքի երկիր:

Տե՛ս նաև որդեգրում

երկարաժամկետ միգրանտ (long-term migrant)

Անձ, որը առնվազն մեկ տարի ժամկետով տեղափոխվում է իր սովորական բնակության վայրից տարբեր այլ երկիր՝ այնպես, որ նպատակակետ երկիրը փաստացի դառնում է նրա սովորական բնակության վայրի նոր

երկիրը։ Մեկնման երկրի դիտանկյունից անձը կհամարվի երկարաժամկետ էմիգրանտ (արտագաղթող), իսկ ժամանման երկրի դիտանկյունից՝ երկարաժամկետ իմիգրանտ (ներգաղթող)։

Տե՛ս նաև մշտական բնակություն հաստատող անձինք, կարճաժամկետ միգրանտ

երկարաձգում (extension) Վավերականության սկզբնական ժամկետից հետո վիզայի կամ իմիգրացիոն (ներգաղթային) կարգավիճակի գործողության շարունակություն։

երկկողմ (bilateral) Երկու կողմերի կամ երկու պետությունների ներգրավում։

Տե՛ս նաև էքստրադիցիա [արտահանձնում], բազմակողմ, պայմանագիր

երկրից դուրս գալու իրավունք (right to leave) «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքելու ցանկացած երկիր՝ ներառյալ նաև սեփականը...» *(Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թվական) 13 (2) հոդված)*: Սույն իրավունքն ամրագրված է միջազգային իրավունքի այլ փաստաթղթային գործիքներում, ինչպես, օրինակ՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի 12 (2) հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ազատ է լքելու ցանկացած երկիր՝ ներառյալ իր սեփականը»։ Դա ազատ տեղաշարժվելու իրավունքի հայեցակետերից է և առանց որևէ տարբերակման, տարածվում է բոլոր անձանց վրա։ Այնուհանդերձ, միջազգային իրավունքով որպես անմիջական հետևություն չի ենթադրվում որևէ երկրի տարածք մուտք գործելու համանման իրավունքի առկայություն։

Տե՛ս նաև էմիգրացիա [արտագաղթ], տեղաշարժվելու ազատություն, մարդու իրավունքներ, միջազգային նվազագույն չափանիշ, հայրենադարձություն, վերադարձ

երկրորդային միգրացիա (secondary migration) Միգրանտի տեղաշարժը հյուրընկալող երկրի տարածքում կամ դեպի երրորդ երկիր՝ հեռու այն համայնքից, որտեղ նա սկզբնապես բնակվել է։

երկրորդային ստուգում (secondary inspection) Ընդունման ընթացակարգի ժամանակ կատարվող առաջնային ստուգման ընթացքում կասկածի առաջացման կամ դիմողի՝ հսկողական համակարգում հայտնվելու դեպքում, դիմողն անցնում է հարցազրույց կամ ենթարկվում է լրացուցիչ քննության։

Տե՛ս նաև հարցազրույց, հսկողական համակարգ, առաջնային ստուգում

երկքաղաքացիություն/ բազմաքաղաքացիություն (dual/multiple nationality)	Երկու կամ ավելի երկրների քաղաքացիության միաժամանակյա տիրապետում միևնույն անձի կողմից: *Տե՛ս նաև քաղաքացիություն*
երրորդ երկիր (third country)	Եվրոպական միության կազմում չգտնվող երկիր կամ տարածք:
երրորդ երկրի քաղաքացի (third-country national)	Նշանակում է ցանկացած անձ, որը Միության քաղաքացի չէ «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի 17(1) հոդվածի իմաստով՝ ներառյալ քաղաքացիություն չունեցող անձինք:

Զ

զանգվածային արտաքսում (expulsion en masse)

Նաև անվանվում է մասսայական արտաքսում, հսկայածավալ, կոլեկտիվ արտաքսում: Քաղաքացի չհանդիսացող անձանց կոլեկտիվ արտաքսումն արգելված է միջազգային իրավունքի մի քանի փաստաթղթային գործիքներով *(Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (1950 թվական) 4–րդ արձանագրության 4–րդ հոդված, «Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին» աֆրիկյան խարտիայի (1981 թվական) 12-5 հոդված, «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիայի (1969 թվական) 22-9 հոդված):* Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ կոլեկտիվ արտաքսումը ցանկացած միջոց է, որով քաղաքացի չհանդիսացող անձանց՝ որպես խմբի, պարտադրվում է լքել երկիրը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման միջոցը ձեռնարկվում է տվյալ խմբում ընդգրկված յուրաքանչյուր անհատի գործի ողջամիտ և օբյեկտիվ քննության հիման վրա *(Andric v. Sweden, No. 45917/99, 23 February 1999 and Conka v. Belgium, No. 51564/99, 5 February 2002 at para. 59: (1999 թվականի փետրվարի 23–ի «Անդրիչն ընդդեմ Շվեդիայի» թիվ 45917/99 գործը, և 2002 թվականի փետրվարի 5–ի «Կոնկան ընդդեմ Բելգիայի» թիվ 51564/99 գործի պարբերություն 59)*: Զանգվածային արտաքսում կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ որևէ էթնիկ խմբի անդամներն ուղարկվում են երկրից դուրս՝ անկախ քաղաքացիությունից:

Տե՛ս նաև արտաքսում, արտաքսման հրաման

զանգվածային/կոլեկտիվ միգրացիա (mass/collective migration)

Մեծ թվով անձանց անսպասելի տեղաշարժ:

Տե՛ս նաև անհատի միգրացիա, ներհոսք

զարգացում (development)

Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) զարգացումը սահմանում է որպես գործընթաց, որով «ստեղծվում է այնպիսի միջավայր, որտեղ մարդիկ կարող են իրենց կարիքներին ու շահերին համահունչ զարգացնել իրենց ներուժն ամբողջ ծավալով և ապրել արգասաբեր ու ստեղծարար կյանքով՝ իրենց կարիքներին ու շահերին համապատասխան...[ինչպես նաև] որով ընդլայնում են մարդկանց՝ արժանապատիվ կյանք վարելու հնարավորությունները»: Այս սահման-

ման մեջ շեղում է կատարվում տնտեսական զարգացման վրա կատարվող խիստ շեշտադրումից, որը չափվում է տնտեսական աճով կամ եկամտի ցուցանիշներով՝ ներառելով գործընթացի մարդկային գործոնը:

զբոսաշրջություն (tourism)

Մեկ անձի կամ անձանց խմբի տեղաշարժը միջազգային մասշտաբով կամ մեկ երկրի շրջանակներում՝ հանգստի, սպորտի կամ հայտնագործություններ կատարելու նպատակներով: Զբոսաշրջությունը չի ենթադրում դրանում ներգրավված անձանց սովորաբար բնակվելու վայրի փոփոխություն և, ճշգրիտ իմաստով, չի համարվում միգրացիայի որևէ ձև, թեև երբեմն օգտագործվում է «զբոսաշրջային միգրացիա» տերմինը:

Տե՛ս նաև միգրացիա, ճանապարհորդող անձ, այցելու

զինված ընդհարում (armed conflict)

«Հայտարարված պատերազմի և ցանկացած այլ զինված ընդհարման բոլոր ձևերը, որոնք կարող են ծագել երկու կամ ավելի ... (պետությունների) միջև, նույնիսկ երբ դրանցից որևէ մեկի կողմից պատերազմական վիճակ չի հայտարարվել» *(1949 թվականի Ժնևի կոնվենցիաներ I-IV, 2–րդ հոդված):* «Զինված ընդհարումն առկա է այն դեպքում, երբ պետությունների միջև գործադրվում է զինված ուժ, կամ կառավարական ուժերի և կազմակերպված զինված խմբերի միջև կամ էլ պետության ներսում գործող նման խմբերի միջև գործադրվում է տևական զինված բռնություն *(«Դատախազն ընդդեմ Դուշկո Տադիչի» թիվ IT-94-1-AR 72 գործը,* նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալի վերաքննիչ պալատ):

Տե՛ս նաև զինված ընդհարումների ժամանակ գործող իրավունք (միջազգային)

զինված ընդհարումների ժամանակ գործող իրավունք (միջազգային) (law of armed conflict (international))

Զինված ընդհարումների ժամանակ գործող միջազգային իրավունքի նորմերի ամբողջություն: Զինված ընդհարումների ժամանակ գործող միջազգային իրավունքով, ըստ էության, կարգավորվում են միջազգային բնույթի զինված ընդհարումները: Դրանով ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներն ավելի նվազ չափով են կարգավորվում:

Տե՛ս նաև զինված ընդհարում, պահվող քաղաքացիական բնակչություն, մարդասիրական իրավունք (միջազգային)

զննում (screening)

Որոշակի հատկանիշի կամ կարողության առկայությունը ստուգելու գործընթաց: Միգրացիայի համատեքստում՝ նախնական (հաճախ հպանցիկ) ստուգում՝ որոշելու, թե արդյոք անձն առերևույթ (prima facie) բավարարում է հայցվող կարգավիճակն ստանալու համար անհրաժեշտ պայմանները:

Տե՛ս նաև առերևույթ (prima facie)

զուտ միգրացիա (net migration)

Նույն ժամանակահատվածում պետության տարածք մուտք գործող անձանց թվի և պետության տարածքը լքող անձանց թվի միջև տարբերություն: Կոչվում է նաև «միգրացիոն շարժի հավասարակշռություն»: Այդ հավասարակշռությունը կոչվում է նաև զուտ իմիգրացիա [-ներգաղթ], երբ անձանց ժամանումների թիվը գերազանցում է մեկնումների թիվը, և զուտ էմիգրացիա [արտագաղթ], երբ անձանց մեկնումների թիվը գերազանցում է ժամանումների թիվը:

Տե՛ս նաև գումարային միգրացիա

Է

Էմիգրանտ (արտագաղթող)

(emigrant)

Էմիգրացիայի (արտագաղթի) դիմող անձ:

Տե՛ս նաև էմիգրացիա (արտագաղթ), իմիգրանտ (ներգաղթող)

Էմիգրացիա (արտագաղթ)

(emigration)

Պետությունից մեկնելու կամ դուրս գալու գործողությունը մեկ այլ պետությունում բնակություն հաստատելու նպատակով:

Տե՛ս նաև «ուղեղների արտահոսք», իմիգրացիա (ներգաղթ), ռեէմիգրացիա *(վերարտագաղթ)*, երկրից դուրս գալու իրավունք

Էկոլոգիական հիմքերով միգրանտ

(environmental migrant)

Էկոլոգիական հիմքերով միգրանտներն այն անձինք կամ անձանց խմբերն են, որոնք գլխավորապես իրենց կյանքի կամ կենսապայմանների վրա բացասական ազդեցություն ունեցող՝ շրջակա միջավայրի հանկարծակի կամ աստիճանական փոփոխությունների հետևանքով ստիպված են ժամանակավորապես կամ մշտապես լքել իրենց սովորաբար բնակվելու վայրը և տեղափոխվել այլ վայր՝ իրենց երկրում կամ արտերկրում:

Տե՛ս նաև *էկոլոգիական պատճառներով տեղահանված անձ*

Էկոլոգիական պատճառներով տեղահանված անձ

(environmentally displaced person)

Անձինք, որոնք տեղահանվել են իրենց՝ սովորաբար բնակվելու վայրի երկրի շրջանակներում կամ որոնք հատել են միջազգային սահմանը, և որոնց համար իրենց տեղահանման հիմնական, սակայն ոչ անպայմանորեն միակ պատճառը շրջակա միջավայրի վատթարացումը, վնասումը կամ ոչնչացումն է: Այս տերմինն օգտագործվում է որպես ավելի պակաս վիճելի այլընտրանքային տարբերակ միջազգային իրավունքում որևէ իրավական հիմք կամ ողջամիտ հիմնավորում չունեցող՝ «էկոլոգիական հիմքերով փախստական» կամ «կլիմայական հիմքերով փախստական» հասկացությունների համար՝ նպատակ ունենալով առանձնացնելու էկոլոգիական հիմքերով այն միգրանտների խումբը, որոնց տեղաշարժը բացառապես պարտադրված բնույթ է կրում:

Տե՛ս նաև էկոլոգիական հիմքերով միգրանտ

էքստրադիցիա (արտահանձնում)

(extradition)

Պետության կողմից՝ իր տարածքից դուրս և մեկ այլ պետության իրավազորության սահմաններում հանցագործության համար մեղադրված կամ դատապարտված անձին պաշտոնապես փոխանցելը մյուս պետությանը՝ դատավարության և պատժի իրականացման նպատակով: Էքստրադիցիայի գործընթացի համար սովորաբար որպես հիմք է ընդունվում ազգային օրենսդրությունը, երկկողմ պայմանագրերը և որոշ դեպքերում՝ բազմակողմ կոնվենցիաները (օրինակ՝ 1957 թվականի «Արտահանձնման մասին» եվրոպական կոնվենցիան):

Տե՛ս նաև անձին վերադարձնելու թույլատրելիություն

Ը

ընդունում (admission)

Պետություն մուտք գործելու իրավունքի շնորհում: Քաղաքացի չհանդիսացող անձը համարվում է «ընդունված», եթե նա անցել է անցակետով (օդային, ցամաքային կամ ծովային) և սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձանցից ստացել է մուտք գործելու թույլտվություն: Լատենտային եղանակով մուտք գործած՝ քաղաքացի չհանդիսացող անձը չի համարվում ընդունված:

Տե՛ս նաև սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձինք, անցակետ, մուտք, չընդունելը

ընդունում (adoption)

Միջազգային հանրային իրավունքում տվյալ տերմինն օգտագործվում է այն պաշտոնական գործողության համար, որով բանակցող կողմերը հաստատում են պայմանագրի ձևը և բովանդակությունը: Պայմանագիրն ընդունվում է այդ պայմանագրի շուրջ բանակցություններին մասնակցող պետությունների և միջազգային կազմակերպությունների կամքն արտահայտող կոնկրետ գործողությամբ, այսինքն՝ տեքստի շուրջ քվեարկելով, նախաստորագրելով, ստորագրելով և այլն: Ընդունումը կարող է լինել նաև մի մեխանիզմ, որն օգտագործվում է պայմանագրի փոփոխությունների կամ պայմանագրով սահմանված կանոնակարգերի ձևն ու բովանդակությունը հաստատելու համար:

ընդունման կենտրոն (reception centre)

Տե՛ս ժամանակավոր տեղավորման կենտրոն

ընդունող երկիր (receiving country)

Նպատակակետ երկիր կամ երրորդ երկիր: Վերադարձի կամ հայրենադարձության դեպքում՝ նաև ծագման երկիր: Երկիր, որը, նախագահի, նախարարի և խորհրդարանի կայացրած որոշման հիման վրա համաձայնել է, տարեկան կտրվածքով, ընդունել որոշակի թվով փախստականների և միգրանտների:

Տե՛ս նաև նպատակակետ երկիր, ծագման երկիր, հյուրընկալող երկիր, երրորդ երկիր

ընտանեկան միգրացիա (family migration)

Ընտանիքի վերամիավորման ու ընտանիքի՝ որպես մեկ ընդհանուր միավորի, միգրացիայի վրա տարածվող ընդհանուր հասկացություն:

Տե՛ս նաև ընտանիքի վերամիավորում/վերամիացում, ընտանիքի միասնություն. դրա նկատմամբ իրավունք, ընտանիքի անդամներ

ընտանիքի անդամներ (family members, members of the family)

Ամենալայն իմաստով՝ մի խումբ անձինք, որոնք սերում են մեկ ընդհանուր նախնուց և կապված են միմյանց հետ ամուսնության կամ բարեկամական կապերով: *«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի (4-րդ հոդված)* նպատակներով՝ այդ արտահայտությունը ենթադրում է՝ «անձինք, ովքեր ամուսնացած են միգրանտ աշխատողների հետ կամ նրանց հետ այնպիսի հարաբերություններ ունեն, որոնք, գործող իրավունքի համաձայն, կարող են հավասարվել ամուսնությանը, ինչպես նաև նրանց խնամքի տակ գտնվող երեխաները կամ խնամքի տակ գտնվող այլ անձինք, որոնք համարվում են ընտանիքի անդամներ գործող օրենսդրության համաձայն կամ ըստ համապատասխան պետությունների միջև կնքված երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի»:

Տե՛ս նաև երեխա, խնամքի տակ գտնվող անձ, դիմողի ընտանեկից:

ընտանիքից առանձնացված երեխաներ (separated children)

Երկու ծնողներից կամ իրենց նախկին՝ օրինական կամ սովորույթի ուժով առաջնային խնամողներից, բայց ոչ անպայմանորեն մյուս ազգականներից առանձնացված երեխաներ: Նրանք, հետևաբար, ներառում են այն երեխաներին, որոնց ուղեկցում են ընտանիքի այլ անդամներ: Եվրոպայում ընտանիքից առանձնացված երեխաների ծրագրի (ԵՐԱԵԾ) շրջանակներում արված 2004 թվականի «Պատշաճ գործելակերպի մասին հայտարարության» համաձայն՝ ընտանիքից առանձնացված երեխաները «18 տարին չլրացած այն երեխաներն են, որոնք գտնվում են իրենց ծագման երկրից դուրս և առանձնացվել են իրենց երկու ծնողներից կամ իրենց նախկին՝ օրինական կամ սովորույթի ուժով առաջնային խնամողներից»: ԵՐԱԵԾ-ի շրջանակներում օգտագործվում է «առանձնացված» այլ ոչ թե «առանց ուղեկցության» տերմինը, քանի որ «թեև ընտանիքից առանձնացված որոշ երեխաներ Եվրոպա են ժամանում «ուղեկցությամբ», նրանց ուղեկցող չափահասները միշտ չէ, որ ի վիճակի են կամ հավակնում են ստանձնելու նրանց խնամելու պատասխանատվությունը»:

Տե՛ս նաև երեխա, անչափահաս, առանց չափահասի ուղեկցության երեխաներ

ընտանիքի միասնություն. դրա նկատմամբ իրավունք (family unity, right to)

Ընտանիքի՝ համատեղ ապրելու և, որպես հասարակության հիմնական միավոր, հարգանքի արժանանալու, պաշտպանություն, աջակցություն ու օժանդակություն ստանալու իրավունք: Սույն իրավունքը չի սահմանափակվում իրենց սեփական պետությունում բնակվող քաղաքացիներով և պաշտպանվում է միջազգային *իրավունքով (օրինակ՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թվական) 16–րդ հոդված, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (1950 թվական) 8–րդ հոդված, Եվրոպական սոցիալական խարտիայի (1961 թվական) 16–րդ հոդված, Եվրոպական սոցիալական խարտիայի (վերանայված) (1996 թվական) 16–րդ հոդված, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (1966 թվական) 17–րդ և 23–րդ հոդվածներ, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (1966 թվական) 1–ին հոդված, «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիայի (1969 թվական) 17–րդ հոդված, «Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին» աֆրիկյան խարտիայի (1981 թվական) 18–րդ հոդված):*

Դրանում չի ներառվում ընտանիքի վերամիավորման/-վերամիացման իրավունքը, և դա չի համարվում սեփական ընտրությամբ որևէ երկրում որպես ընտանիքի մեկ ընդհանուր միավոր համատեղ ապրելու բացարձակ իրավունք, հատկապես երբ ընտանիքի անդամների համար հնարավոր է բնակություն հաստատել այլ երկրում:

Տե՛ս նաև մարդու իրավունքներ, ընտանիքի վերամիավորում, ընտանիքի անդամներ

ընտանիքի վերամիավորում /վերամիացում (family reunification/reunion)

Գործընթաց, որով հարկադիր կամ կամավոր միգրացիայի արդյունքում մասնատված ընտանիքի անդամները վերախմբավորվում են իրենց ծագման երկրից տարբեր այլ երկրում:

Տե՛ս նաև խնամքի տակ գտնվող անձ, ընտանեկան միգրացիա, ընտանիքի միասնություն. դրա նկատմամբ իրավունք

Թ

թափառաշրջիկ

(nomad)

Անձ, հաճախ խմբի անդամ, ով չունի հաստատուն բնակության վայր և միգրացիայի է դիմում մի վայրից մյուսը՝ հաճախ ջրի, սննդի կամ արոտավայրերի փնտրտուքներում:

թույլատրված ժամկետից երկար գտնվելը

(overstay)

Տրամադրված մուտքի թույլտվության համար նախատեսված ժամկետից ավելի երկար մնալը: Երբեմն օգտագործվում է նաև որպես գոյական, օրինակ՝ «փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտներից կազմված բնակչությունը հավասարաչափ բաժանվում է երկու մասի՝ թույլատրված ժամկետից երկար գտնվող անձինք և երկիր անկանոն կարգավիճակով մուտք գործող անձինք»:

Տե՛ս նաև անկանոն կարգավիճակով միգրանտ, բնակության (կացության) թույլտվություն, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ

թույլտվություն

(permit)

Սովորաբար պետական մարմնի կողմից տրվող փաստաթղթեր, որոնցով թույլատրվում է ինչ–որ բանի գոյությունը կամ ինչ–որ մեկի կողմից որոշակի գործողություններ կատարելը կամ ծառայություններ մատուցելը: Միգրացիայի համատեքստում՝ համընդհանուր կերպով օգտագործվում են բնակության (կացության) թույլտվություն կամ աշխատանքի թույլտվություն տերմինները:

Տե՛ս նաև բնակության (կացության) թույլտվություն, վիզա, աշխատանքի թույլտվություն

թվաքանակ (օտարերկրացիների)

(stock (foreign))

Օտարերկրյա քաղաքացիների թիվը տվյալ վայրում համապատասխան տարվա որոշակի ամսաթվի դրությամբ (օրինակ՝ հունվարի 1–ի կամ դեկտեմբերի 31–ի դրությամբ):

Տե՛ս նաև միգրանտների հոսք

Ժ

ժամանակավոր (աշխատանքային) միգրացիա

(temporary (labour) migration)

Այն աշխատողների միգրացիան, որոնք, մինչև իրենց ծագման երկիր վերադառնալը, որոշակի սահմանափակ ժամանակահատվածով մուտք են գործում օտար երկիր:

ժամանակավոր ճամփորդական փաստաթղթեր

(temporary travel documents)

Շատ հաճախ առանց անձնագրերի ճանապարհորդող անձանց տրամադրվող փաստաթղթեր՝ նրանց՝ իրենց ծագման երկիր վերադառնալու հնարավորություն տալու նպատակով: Որպես կանոն՝ նման փաստաթղթերը տրամադրվում են կարճ ժամանակահատվածի համար, իսկ դրանց գործողության ժամկետը լրանում է դրանց իրավատերերի՝ իրենց ծագման երկիր մուտք գործելու պահին:

Տե՛ս նաև ինքնությունը հաստատող վկայական, անցագիր (laissez-passer), անձնագիր, ճամփորդական փաստաթղթեր, ճամփորդական փաստաթղթեր (Կոնվենցիա), վիզա

ժամանակավոր միգրանտ աշխատողներ

(temporary migrant workers)

Հմտություններ, միջին մասնագիտական հմտություններ ունեցող կամ վերապատրաստում չանցած աշխատողներ, որոնք մնում են նպատակակետ երկրում՝ առանձին աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրով կամ ձեռնարկության հետ կնքված՝ ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված որոշակի ժամկետների ընթացքում: Նրանց նաև անվանում են պայմանագրային հիմունքներով միգրանտ աշխատողներ:

Տե՛ս նաև սեզոնային աշխատող, կարճաժամկետ միգրանտ

ժամանակավոր պաշտպանություն

(temporary protection)

Պետությունների կողմից նախատեսված կարգավորում, որի նպատակը հակամարտության կամ համատարած բռնության իրավիճակի հետևանքով հոծ զանգվածներով տվյալ պետություն ժամանող անձանց ժամանակավոր բնույթի պաշտպանություն առաջարկելն է՝ առանց նրանց առանձին կարգավիճակը նախապես որոշելու:

ժամանակավոր տեղավորման կենտրոն (holding centre)	Ընդունող երկիր ժամանելու պահին անկանոն կարգավիճակում գտնվող ապաստան հայցողներին կամ միգրանտներին, մինչև նրանց կարգավիճակը պարզելը, տեղավորելու համար նախատեսված վայր. գործնականում շատ հաճախ այդպիսի վայր է ծառայում անազատության մեջ պահելու կենտրոնը։ Հայտնի է նաև որպես ընդունման կենտրոն։
ժամանման/մեկնման քարտ (arrival/departure card)	Քարտ, որը անձի կողմից լրացվում է նպատակակետ երկիր ժամանելուց առաջ կամ ժամանելուն պես և (անձնագրի և, նման պահանջի դեպքում, վիզայի հետ միասին) ներկայացվում սահմանային անցակետի ծառայողներին։ Որոշ պետություններում սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձինք մուտքի ժամանակ վերցնում են քարտը, մինչդեռ այլ պետություններում քարտը կամ դրա մի մասը վերադարձվում է ճանապարհորդողին, և այն պետք է ներկայացվի պետությունից մեկնելիս։ Նման քարտերի համար գործող միջազգային ստանդարտները սահմանվում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) կողմից՝ *«Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» 1944 թվականի կոնվենցիայի* 9–րդ հավելվածում։ *Տե՛ս նաև անցակետ, ինքնությունը հաստատող փաստաթուղթ, անձնագիր, վիզա*
ժողովրդագրություն (demography)	Բնակչության վերաբերյալ ուսումնասիրություն, մասնավորապես՝ թվի ու խտության, բաշխվածության և կարևոր նշանակություն ունեցող վիճակագրական այլ տվյալների վերաբերյալ։

Ի

իմիգրանտ (ներգաղթող) **(immigrant)**	Իմիգրացիայի [ներգաղթի] դիմող անձ։ *Տե՛ս նաև էմիգրանտ (արտագաղթող)*
իմիգրացիա (ներգաղթ) **(immigration)**	Գործընթաց, որի միջոցով քաղաքացի չհանդիսացող անձինք տեղափոխվում են որևէ երկիր՝ բնակություն հաստատելու նպատակով։ *Տե՛ս «ուղեղների ներհոսք», էմիգրացիա (արտագաղթ)*
իմիգրացիայի (ներգաղթի) գծով համակարգող **(immigration liaison officer)**	Անկանոն միգրացիայի կանխումը և դրա դեմ պայքարը, ինչպես նաև անկանոն կարգավիճակով միգրանտների վերադարձը խթանելու նպատակով պետության կողմից արտերկրում նշանակված ներկայացուցիչ։
իմիգրացիայի (ներգաղթի) հիմքով կալանքի այլընտրանքային միջոցներ **(alternatives to immigration detention)**	Միջոցներ, որոնք պետությունների կողմից կարող են կիրառվել և կիրառվել են իրենց տարածքում գտնվող միգրանտների ու ապաստան հայցողների նկատմամբ, որտեղ առկա է որոշակի հսկողության անհրաժեշտությունը. դրանք տարբեր են՝ սկսած ազատությունից զրկելու հետ չկապված և հասարակությունից չմեկուսացնելով պայմանավորված ինչպես նաև անձնական գործի նյութերի ուսումնասիրություն ենթադրող մոդելներից մինչև առավել սահմանափակումներ ներառող տարբերակներ, ինչպիսին կարող է լինել բնակությունը կիսաբաց տիպի կենտրոններում։ Այլընտրանքային միջոցները պետք է դիտարկվեն նախքան կալանքին դիմելու տարբերակը քննարկելը։
իմիգրացիոն (ներգաղթային) գոտի **(immigration zone)**	Միջազգային ջրերի և պետության ցամաքային տարածքի գոտին, որտեղ կիրառելի են պետության իմիգրացիոն (ներգաղթային) օրենքները (կոչվում է նաև «միգրացիոն գոտի»)։ *Տե՛ս նաև միջազգային ջրեր, արգելում*
իմիգրացիոն (ներգաղթային) կարգավիճակ **(immigration status)**	Միգրանտի կարգավիճակ՝ ընդունող երկրի իմիգրացիոն (ներգաղթային) իրավունքի համաձայն։ *Տե՛ս նաև կարգավիճակի փոփոխություն, միգրացիայի կառավարում*

իմիգրացիոն (ներգաղթային) քվոտա

(immigration quota)

Իմիգրանտների [ներգաղթողների] մուտքի առնչությամբ երկրի կողմից սահմանված քվոտա՝ սովորաբար աշխատանքային միգրացիայի նպատակներով:

ինտեգրում

(integration)

Թեև այս տերմինի գործածությունն ու ընկալումը տարբեր երկրներում և համատեքստերում տարբեր են, այնուամենայնիվ, «ինտեգրումը» կարող է սահմանվել որպես գործընթաց, որով միգրանտները ներգրավվում են հասարակության մեջ և՛ որպես անհատ, և՛ որպես խումբ: Դա ընդհանրապես ներառում է միգրանտների և հյուրընկալող հասարակությունների կողմից հարմարվելու երկկողմ գործընթաց՝ չնայած այն հանգամանքին, որ տարբեր երկրներում գործում են հյուրընկալող հասարակության կողմից ընդունման առանձնահատուկ պահանջներ: Ինտեգրումն անպայմանորեն չի ենթադրում մշտական բնակություն: Այն, այնուամենայնիվ, ենթադրում է, որ հաշվի են առնվում միգրանտների և հյուրընկալող հասարակությունների իրավունքները և պարտականությունները, տարբեր տեսակի ծառայությունների և աշխատանքային շուկայի հասանելիությունը, ինչպես նաև միգրանտներին և հյուրընկալող հասարակություններին ընդհանուր նպատակի շուրջ միավորող հիմնական արժեքների ճանաչումն ու հարգանքը դրանց նկատմամբ:

Տեղական ինտեգրումը փախստականների ծանր վիճակը թեթևացնելու երեք երկարաժամկետ լուծումներից մեկն է: Դա կարող է կիրառվել միայն թրաֆիքինգի զոհերի և առանց չափահասի ուղեկցության մնացած երեխաների նկատմամբ:

Տե՛ս նաև ակկուլտուրացիա (համամշակութավորում), ասիմիլյացիա (համաձուլում), մշակութային կողմնորոշում, մշակույթ, երկարաժամկետ լուծում, ներառում, վերաինտեգրում, վերաինտեգրում (մշակութային), վերաինտեգրում (տնտեսական), վերաինտեգրում (սոցիալական), վերաբնակեցում, կամավոր հայրենադարձություն

ինքնաբուխ միգրացիա (spontaneous migration)

Անհատ կամ խումբ, ով նախաձեռնում և իրականացնում է իր միգրացիոն պլաններն առանց որևէ կողմնակի աջակցության: Սովորաբար, ինքնաբուխ միգրացիան պայմանավորված է «վանող–ձգող» գործոններով և բնութագրվում է պետական աջակցության կամ միջազգային կամ ներպետական մակարդակով տրամադրվող աջակցության բացակայությամբ:

Տե՛ս նաև աջակցվող միգրացիա, աջակցվող կամավոր վերադարձ, «վանող–ձգող» գործոններ, ինքնաբուխ վերադարձ

ինքնաբուխ վերադարձ (spontaneous return)

Անձի կամ խմբի՝ ներառյալ փախստականների, ներքին տեղահանման ենթարկված անձանց (ՆՏԵԱ–ների) կամ ապաստան հայցողների կամավոր, ինքնուրույն վերադարձն իրենց ծագման երկիր՝ սովորաբար առանց պետությունների կողմից տրամադրվող աջակցության կամ միջազգային կամ ներպետական մակարդակով տրամադրվող աջակցության:

Տե՛ս նաև աջակցվող կամավոր վերադարձ, ինքնաբուխ միգրացիա, կամավոր վերադարձ

ինքնիշխանություն (sovereignty)

Ինքնիշխանությունը՝ որպես միջազգային իրավունքի հասկացություն, ընդգրկում է երեք հիմնական կողմեր՝ արտաքին, ներքին և տարածքային: Ինքնիշխանության արտաքին կողմը պետության կողմից այլ պետությունների կամ սուբյեկտների հետ իր հարաբերություններն ազատորեն ձևավորելու իրավասությունն է՝ առանց այլ պետության կողմից կիրառվող սահմանափակման կամ հսկողության: Ինքնիշխանության այս կողմը հայտնի է նաև որպես անկախություն: Ինքնիշխանության ներքին կողմը պետության բացառիկ իրավունքը կամ իրավասությունն է՝ որոշելու իր կառույցների գործունեության բնույթը, սեփական ընտրությամբ ընդունելու օրենքներ և ապահովելու դրանց պահպանումը: Ինքնիշխանության տարածքային կողմը պետության այն իրավասությունն է, որը տարածվում է այդ պետության տարածքում, դրա տակ կամ դրա վրա գտնվող բոլոր անձանց և առարկաների վրա: Միգրացիայի համատեքստում՝ դրանով ենթադրվում է պետության բացառիկ ինքնիշխան իրավունքը՝ որոշելու, թե քաղաքացի չհանդիսացող որ անձանց մուտքը պետք է թույլատրվի տվյալ պետության տարածք՝ անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքին, մարդու իրավունքներին և երկկողմ կամ

տարածաշրջանային համաձայնագրերով ամրագրված դրույթներին համապատասխան (օրինակ՝ ազատ տեղաշարժի կամ ինտեգրման համաձայնագրեր):

Տե՛ս նաև սահմանների կառավարում, մարդու իրավունքներ, իրավազորություն, անձին վերադարձնելու անթույլատրելիություն, անձի նկատմամբ իրավազորություն, պետություն, տարածքային իրավազորություն, համընդհանուր իրավազորություն

ինքնությունը հաստատող վկայական

(certificate of identity)

Պետության կողմից անձին տրված փաստաթուղթ (բացառությամբ անձնագրի) նրա՝ երկիր մուտք գործելը կամ երկրից դուրս գալը դյուրացնելու նպատակով:

Տե՛ս նաև ժամանակավոր ճամփորդական փաստաթղթեր, ճամփորդական փաստաթղթեր, ճամփորդական փաստաթղթեր (Կոնվենցիա), վիզա

ինքնությունը հաստատող փաստաթուղթ

(identity document)

Պետության իրավասու մարմնի կողմից տրվող փաստաթուղթ, որը նախատեսված է այն կրող անձի ինքնությունը հաստատելու համար:

Տե՛ս նաև ժամանման/մեկնման քարտ, ծննդյան վկայական, անձնագիր, ճամփորդական փաստաթղթեր

իրական և կայուն ամուսնություն

(genuine and stable marriage)

Ամուսնություն, որը հյուպատոսական կամ իմիգրացիայի (ներգաղթի) հարցերով պաշտոնատար անձի որոշմամբ համարվում է իրական, քանի որ այդ ամուսնությունը կնքվել է երկարատև և բացառիկ հիմքով պահպանելու մտադրությամբ, ինչպես նաև կայուն լինելու պայմանով՝ ելնելով տնական բնույթ ունենալու հավանականությունից: Շատ երկրներում, եթե աշխատակիցները չեն կարողանում որոշել, թե արդյոք ամուսնությունը կնքվել է երկարատև և բացառիկ հիմքով պահպանելու մտադրությամբ, ապա այդ ամուսնությունն ըստ կանխավարկածի համարվում է իրական, եթե չկան հակառակն ապացուցող փաստեր:

իրավազորություն

(jurisdiction)

Պետության ընդհանուր իրավասությունը՝ ուղղված իր տարածքում կամ այն աշխարհագրական տարածքում գտնվող անձանց և իրերի նկատմամբ իշխանություն իրականացնելուն, որտեղ կարելի է իրականացնել այդպիսի իշխանություն: Ավելի նեղ իմաստով՝ այն վերաբերում է գործը լսելու և հայցի հիմքը որոշելու վերաբերյալ որոշում կայացնելու օրինական լիազորությանը կամ իրավասությանը:

Տե՛ս նաև անձի նկատմամբ իրավազորություն, ինքնիշխանություն

իրավական պաշտպանության ներպետական միջոցներ, դրանց սպառում

(local remedies, exhaustion of)

Միջազգային սովորութային իրավունքի հանրահայտ սկզբունք է այն սկզբունքը, ըստ որի միջազգային մակարդակով վարույթ կարող է հարուցվել միայն իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառված լինելու պարագայում. այդ սկզբունքը հիմնականում կիրառվել է այն դեպքերում, երբ պետությունն ընդունել է իր այն քաղաքացու կողմից ներկայացված հիմնավորումը, ում իրավունքները, վկայակոչվում է, որ ոտնահարվել են այլ պետությունում՝ միջազգային իրավունքի խախտմամբ: Այդպիսի իրավիճակում նախքան միջազգային որևէ դատարան դիմելը, անհրաժեշտություն է առաջացել, որ այն պետությունը, որտեղ տեղի է ունենում խախտումը, հնարավորություն ունենա վերացնելու այն իր իսկ սեփական միջոցներով՝ իր ներպետական իրավական համակարգի շրջանակներում *(Interhandel-ի դատական գործ (Նախնական առարկություններ),ԱՄԴ 1959)*:

Տե՛ս նաև սովորութային իրավունք՝ միջազգային, դիվանագիտական պաշտպանություն

իրավաչափ

(legitimate)

Իրական, վավերական կամ օրինական ինչ–որ բան: Օրինակ՝ օրինական միգրանտը մուտք է գործում միգրացիոն օրենքերին հետևելու և իրավաչափ ճամփորդական փաստաթղթեր ներկայացնելու իրավաչափ նպատակներով:

Տե՛ս նաև բարեխիղճ, ազնվություն

Լ

լավագույն (արդյունավետ) գործելակերպեր

(best (effective) practices)

Թե՛ միջազգային, և թե՛ ազգային մակարդակում գործող նորմերի և սկզբունքների կիրառությանը նպաստող միջոցներ: Լավագույն գործելակերպերը կարող են արտացոլվել գործառնական հրահանգներում, վարքագծի կանոնագրքերում կամ «մեղմ իրավունքի» (պարտադիր բնույթ չունեցող) այլ դրսևորումներում, սակայն չպետք է հանգեցնեն պոզիտիվ իրավունքի թուլացմանը կամ խաթարմանը: Դրանք բնութագրվում են որպես նորարարական, ստեղծագործական լուծումներ մշակող, միգրանտների համար նախատեսված մարդու իրավունքների իրականացման մակարդակի վրա դրականորեն անդրադարձող, տնական հետևանքներ առաջացնող միջոցներ՝ հատկապես ինքնին միգրանտներին ներգրավելու միջոցով, ինչպես նաև վերարտադրման հնարավորություն ունեցող միջոցներ:

Տե՛ս նաև կարողությունների զարգացում, տարածաշրջանային խորհրդատվական գործընթացներ, «մեղմ իրավունք» (պարտադիր բնույթ չունեցող), տեխնիկական համագործակցություն

լատենտային միգրացիա

(clandestine migration)

Գաղտնի կամ թաքնված միգրացիա՝ իմիգրացիայի (ներգաղթի) համար սահմանված պահանջների խախտմամբ: Այն կարող է տեղի ունենալ, երբ քաղաքացի չհանդիսացող անձը խախտում է երկիր մուտք գործելու կանոնակարգերը կամ, օրինական ճանապարհով մուտք գործելով երկիր, թույլատրված ժամկետից ավելի երկար է գտնվում այնտեղ՝ խախտելով իմիգրացիոն (ներգաղթային) կանոնակարգերը: Նախընտրելի է գործածել «անկանոն միգրացիա» ընդհանրացված տերմինը:

Տե՛ս նաև օրինական փաստաթղթեր ունեցող միգրանտ, անօրինական մուտք, անկանոն կարգավիճակով միգրանտ, անկանոն միգրացիա, կանոնավոր միգրացիա, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ

լիազորությունների վերազանցումով

(ultra vires)

Չթույլատրված. կորպորացիայի կանոնադրությամբ կամ օրենքով սահմանված, կամ շնորհված լիազորության շրջանակից դուրս:

լիազորում
(empowerment)

Գործընթաց, որով մարդկանց հնարավորություն է տրվում առավել մեծ վերահսկողություն իրականացնել իրենց կյանքին առնչվող որոշումների, միջոցների, քաղաքականության ուղղությունների, ընթացակարգերի և հաստատությունների նկատմամբ: Այն նպատակաուղղված է անհատների ու համայնքների՝ գիտակցված ընտրություն կատարելու և սեփական անունից հանդես գալու կարողությունների զարգացմանը: Սա ենթադրում է «ներքևից վերև» մոտեցում ի տարբերություն պաշտպանության, որն ավելի հաճախ ենթադրում է «վերևից ներքև» մոտեցում:

Տե՛ս նաև մարդու անվտանգություն, պաշտպանություն

լսում
(hearing)

Լսվելու կամ տրիբունալի առջև որպես գործի կողմերից մեկը հանդես գալու հնարավորություն:

լրացուցիչ պաշտպանություն
(complementary protection)

Ազգային իրավունքի կամ պրակտիկայի համաձայն՝ որևէ երկրում բնակվելու համար տրամադրվող պաշտոնական թույլտվություն, որն այդ երկիրը տարածում է այն անձանց վրա, որոնք միջազգային պաշտպանության կարիք ունեն, նույնիսկ եթե չեն բավարարում *1951 թվականի կոնվենցիայով* նախատեսվող՝ փախստականի կարգավիճակի համար սահմանված պահանջները:

Տե՛ս նաև պաշտպանություն

Խ

խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ (crimes against peace)	Գործողություններ, որոնք ներառում են ագրեսիվ պատերազմ, կամ միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հավաստիացումների խախտմամբ պատերազմ ծրագրելը, նախապատրաստելը, նախաձեռնելը կամ վարելը։ *Տե՛ս նաև հանցագործություն՝ միջազգային, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ*
խառը հոսքեր (mixed flows)	Բնակչության՝ բարդ տեսակի միգրացիոն տեղաշարժեր, որոնցում ընդգրկված են փախստականներ, ապաստան հայցողներ, տնտեսական և այլ միգրանտներ՝ ի տարբերություն բնակչության միգրացիոն այնպիսի տեղաշարժերի, որոնցում ընդգրկված է միգրանտների միայն մեկ կատեգորիա։
խարդախություն (fraud)	Ճշմարտության խեղաթյուրում կամ նյութական փաստի քողարկում որոշակի օգուտ քաղելու նպատակով։
խնամակալ (guardian)	Սովորաբար այլ անձի անգործունակության, հաշմանդամության կամ անչափահաս լինելու պատճառով այդ անձի կամ գույքի նկատմամբ հոգ տանելու օրինական լիազորություն և պարտականություն ունեցող անձ։ Խնամակալ կարող է նշանակվել բոլոր նպատակներով կամ որոշակի նպատակով։
խնամակալություն (custody)	Անձին խնամելու և նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականություն։ Դատարանը կարող է խնամակալություն նշանակել անչափահասի նկատմամբ, որն իրականացվում է ազգականի կամ այլ խնամակալի կողմից։
խնամքի տակ գտնվող անձ (dependant)	Ընդհանուր գործածության շրջանակներում նշանակում է անձ, որն օժանդակություն ստանալու համար ապավինում է մեկ ուրիշի օգնությանը։ Միգրացիայի համատեքստում՝ ամուսիններից մեկը և անչափահաս երեխաները համարվում են «խնամքի տակ գտնվող անձինք», նույնիսկ եթե այդ ամուսինը ֆինանսական կախվածություն չունի։ *Տե՛ս նաև երեխա, դե ֆակտո զուգընկեր,* դիմողի ընտանեկից, *ընտանիքի անդամներ, անչափահաս*
Խնդրագիր (petition)	*Տե՛ս հովանավորություն*

խոշտանգում

(torture)

«Ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ կամ թողտվությամբ: Սա չի ներառում միայն այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց կամ կապված են դրանց հետ» (*«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի կոնվենցիայի 1–ին հոդված*): Խոշտանգումը միջազգային իրավունքի խախտում է (*«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի 7-րդ հոդված, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի կոնվենցիա, Ժնևի 1949 թվականի կոնվենցիաներ, ընդհանուր 50–րդ, 51–րդ, 130–րդ, 147-րդ հոդվածներ*):

Տե՛ս նաև հանցագործություն՝ միջազգային, մարդու հիմնարար իրավունքներ, անմարդկային վերաբերմունք, համընդհանուր պարտադիր նորմ (jus cogens), խոշտանգումների արգելում:

խոշտանգումների արգելում

(prohibition of torture)

Խոշտանգումներն արգելված են բազմաթիվ միջազգային փաստաթղթերով, ինչպես օրինակ՝ *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5–րդ հոդվածով, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ–ի 1966 թվականի միջազգային դաշնագրի 7–րդ հոդվածով, «Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ» 1984 թվականի կոնվենցիայի 2–րդ հոդվածով և ՄԱԿ–ի տարբեր բանաձևերով, Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի (1950 թվական) 3–րդ հոդվածով, Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հռչակագրի (1948 թվական) 26–րդ հոդ-*

վածով: Խոշտանգումը միջազգային հանցագործություն է. խոշտանգումներից պաշտպանությունը պետությունների պարտականությունն է և համարվում է մարդու հիմնարար իրավունք: Խոշտանգումների արգելումն ընդհանրապես հավակնում է լինել միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր նորմ (*jus cogens*՝) որպես միջազգային իրավունքի իմպերատիվ նորմ:

Տե՛ս նաև համընդհանուր պարտադիր նորմ (jus cogens), մարդու հիմնարար իրավունքներ, խոշտանգում

խտրականության բացառում (non-discrimination)

Միայն որոշակի կատեգորիայի պատկանելու հիմքով՝ մարդկանց նկատմամբ՝ նրանց վրա բացասական ազդեցություն ունեցող տարբերակումներ կիրառելուց հրաժարվելը: Խտրականությունն արգելվում է միջազգային իրավունքով, օրինակ՝ *«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 26–րդ հոդվածով*, որով սահմանվում է՝ «Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, հավասարապես պաշտպանվում են օրենքով: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլոր անձանց համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից ցանկացած հիմքով, ինչպես օրինակ՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ծննդի կամ այլ կարգավիճակի»:

Տե՛ս նաև խտրականություն, մարդասիրական սկզբունքներ

խտրականություն (discrimination)

Բոլոր անձանց նկատմամբ հավասար վերաբերմունք չցուցաբերելը, երբ որևէ օբյեկտիվ և ողջամիտ տարանջատում հնարավոր չէ գտնել առավել նպաստավոր վերաբերմունքի արժանացած և չարժանացած անձանց միջև: Խտրականությունը «ռասայի, սեռի, լեզվի կամ կրոնի» հիմքերով *(ՄԱԿ–ի Կանոնադրության (1945 թվական) 1(3) հոդված)* կամ «ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ծննդյան կամ այլ կարգավիճակի» հիմքերով արգելվում է *(Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թվական) 2–րդ հոդված)*:

Տե՛ս նաև խտրականության բացառում, ռասիզմ, հետապնդում, ռասայական խտրականություն, այլատյացություն

խոցելի խումբ
(vulnerable group)

Հասարակության ցանկացած խումբ կամ մաս, որի համար ավելի մեծ է խտրական գործելակերպերի, բռնության, բնական կամ բնապահպանական աղետների ենթարկվելու, կամ տնտեսական բարդությունների բախվելու վտանգը, քան պետության սահմաններում հասարակության այլ խմբերի համար: Այն ներառում է հասարակության ցանկացած խումբ կամ մաս (ինչպես, օրինակ՝ կանայք, երեխաներ, ծերեր, սահմանափակ կարողություններով անձինք, բնիկ ժողովուրդներ կամ միգրանտներ), որոնք առավել խոցելի են հակամարտությունների և ճգնաժամի ժամանակ:

Տե՛ս նաև փոքրամասնություն, փոքրամասնությունների պաշտպանություն

Ծ

ծագման երկիր
(country of origin)

Միգրացիոն հոսքերի (կանոնավոր կամ անկանոն) սկզբնաղբյուր հանդիսացող երկիր:

Տե՛ս նաև անվտանգ ծագման երկիր, ուղարկող երկիր, սկզբնաղբյուր հանդիսացող երկիր, ծագման պետություն, երրորդ երկիր

ծագման պետություն
(State of origin)

«Պետություն, որի քաղաքացին է համապատասխան անձը» («Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 6 (ա) հոդված): Տե՛ս նաև ծագման երկիր, ուղարկող երկիր, երրորդ երկիր

ծագման հիմքով բնակություն հաստատող անձինք
(ancestry-based settlers)

Օտարերկրացիներ, որոնց ընդունում են իրենց սեփական երկիրը չհանդիսացող այլ երկիր՝ այդ երկրի հետ ունեցած իրենց պատմական, էթնիկ կամ այլ կապերի հիման վրա, և որոնց այդ կապերի ուժով անմիջապես տրվում է այդ երկրում երկարաժամկետ բնակության իրավունք, կամ որոնք, ունենալով այդ երկրի քաղաքացիությունը ձեռք բերելու իրավունքը, ընդունումից հետո կարճ ժամանակահատվածում դառնում են քաղաքացիներ:

Տե՛ս նաև օտարերկրացի, քաղաքացի, քաղաքացիություն (nationality), քաղաքացի չհանդիսացող անձ, մշտական բնակություն հաստատող անձինք

ծննդյան վկայական
(birth certificate)

Սովորաբար պետական կամ կրոնական կառույցների կողմից տրվող բնօրինակ փաստաթուղթ, որում, ի թիվս այլ տվյալների, նշվում է անձի ծննդյան ժամանակը և վայրը:

Տե՛ս նաև ինքնությունը հաստատող փաստաթուղթ

ծովակայանքի վրա աշխատող
(worker on an offshore installation)

«Միգրանտ աշխատող, ով վարձվել է աշխատելու ծովակայանքի վրա այն պետության իրավասությամբ, որի քաղաքացին չէ» («Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(2) (դ) հոդված):

Տե՛ս նաև միգրանտ աշխատող

ծրագրում ներգրավված աշխատող (project-tied worker)

Միգրանտ աշխատող, ում թույլ են տվել մուտք գործել աշխատանք տրամադրող պետություն սահմանված ժամանակահատվածով՝ միայն որոշակի ծրագրով աշխատելու համար, որն իրականացվում է այդ պետությունում, սակայն իր գործատուի կողմից: *(«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(2)(զ) հոդված)*

Տե՛ս նաև միգրանտ աշխատող

Կ

կազմակերպված հանցավորություն
(organized crime)

Սովորաբար վերաբերում է լայնամասշտաբ և բարդ հանցավոր գործունեությանը, որն իրականացվում է ամուր կամ անկանոն կազմակերպված միավորումների կողմից հասարակության հաշվին անօրինական շուկաներ ստեղծելու, մատակարարելու և շահագործելու նպատակով: Այդպիսի գործողություններն ընդհանրապես իրականացվում են օրենքի կոպիտ խախտումներով և հաճախ ներառում են հանցագործություններ՝ ուղղված անձանց դեմ՝ ներառյալ սպառնալիքները, ահաբեկումը և ֆիզիկական բռնությունը:

Տե՛ս նաև մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխում, մարդկանց թրաֆիքինգ

կալանավորված անձ
(detainee)

Կալանքի տակ պահվող անձ:

Տե՛ս նաև կալանք

կալանք
(detention)

Ազատությունից զրկելու միջոցով տեղաշարժվելու ազատության սահմանափակում՝ վարչական կամ դատական մարմնի հրամանով: Առկա է կալանքի երկու ձև՝ քրեական գործով կալանք՝ կատարված հանցագործության համար պատժի կիրառման նպատակով, և վարչական կալանք, որով երաշխավորվում է մեկ այլ վարչական միջոցի (օրինակ՝ վտարման կամ արտաքսման) կիրառումը: Երկրների մեծամասնությունում անկանոն կարգավիճակով միգրանտները ենթակա են վարչական կալանքի իմիգրացիոն [ներգաղթային] օրենքների ու կանոնակարգերի խախտման համար, որոնք չեն համարվում հանցագործություններ: Շատ պետություններում վարչական կալանք կարող է կիրառվել քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ նաև այն դեպքերում, երբ ընթացքի մեջ է իմիգրացիոն [ներգաղթային] կարգավիճակի կամ ընդունումը թույլ տալու կամ պետությունից հեռացնելու վերաբերյալ որոշման ընդունումը:

Տե՛ս նաև վարչական կալանք, արգելանքի տակ գտնվելը, կալանավորված անձ

կախյալ վիճակ
(bondage)

Այլ անձի հսկողության տակ գտնվելու վիճակը:

Տե՛ս նաև կախյալ վիճակ ենթադրող աշխատանք, պարտքի պատճառով կախվածություն

կախյալ վիճակ ենթադրող աշխատանք

(bonded labour)

Տնտեսական նկատառումներից, հատկապես՝ փոխառությամբ կամ կանխավճարով պայմանավորված պարտքի պատճառով կախյալ վիճակում հայտնված աշխատողի կողմից մատուցվող ծառայություն: Եթե կախյալ վիճակի հիմնական պատճառը պարտքն է, ապա ենթադրվում է, որ աշխատողը (կամ նրա խնամքի տակ գտնվող անձինք կամ նրա ժառանգները) կախման մեջ է կոնկրետ պարտատիրոջից որոշակի կամ անորոշ ժամկետով՝ մինչև պարտքի մարումը:

Տե՛ս նաև կախյալ վիճակ, պարտքի պատճառով կախվածություն, միգրանտ աշխատող, թրաֆիքինգ

կամայականորեն

(arbitrary)

Անհիմն եղանակով՝ կապված անարդարության, անկանխատեսելիության, չհիմնավորվածության և քմահաճության հասկացությունների հետ:

«կանաչ սահման»

(green border)

Անցակետերի միջև պետության ցամաքային սահմանը նկարագրելու համար գործածվող տերմին: Ջրային սահմանի դեպքում (գետ կամ առափնյա սահման) կարող է գործածվել նաև «կապույտ սահման» տերմինը:

Տե՛ս նաև սահման, անցակետ

կամավոր հայրենադարձություն

(voluntary repatriation)

Վերադառնալու իրավունք ունեցող անձանց վերադարձ իրենց ծագման երկիր՝ կամավոր կերպով վերադառնալու համար նրանց՝ ազատորեն հայտնած պատրաստակամության հիման վրա: Այս տերմինն առավել հաճախ օգտագործվում է փախստականների, ռազմագերիների և պահվող քաղաքացիական բնակչության համատեքստում: Սա նաև փախստականների ծանր վիճակը թեթևացնելուն ուղղված երեք երկարաժամկետ լուծումներից մեկն է:

Տե՛ս նաև աջակցվող կամավոր վերադարձ, տնական լուծում, ինտեգրում, ոչ կամավոր հայրենադարձություն, հայրենադարձություն, վերաբնակեցում, վերադարձ, վերադառնալու իրավունք

կամավոր վերադարձ

(voluntary return)

Աջակցվող կամ ինքնուրույն վերադարձ ծագման, տարանցման կամ որևէ այլ երկիր՝ վերադարձող անձի ազատ կամքի հիման վրա:

Տե՛ս նաև աջակցվող կամավոր վերադարձ, հարկադիր վերադարձ, ոչ կամավոր հայրենադարձություն, վերադարձ, վերադարձ ենթադրող միգրացիա, հայրենադարձություն, ինքնաբուխ վերադարձ, կամավոր հայրենադարձություն

կանանց նկատմամբ բռնություն
(violence against women)

«Գենդերային հատկանիշով կատարվող բռնության ամեն մի գործողություն, որը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք է պատճառում կամ կարող է պատճառել կանանց, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք կամ կամայական զրկում ազատությունից՝ լինի հասարակական, թե անձնական կյանքում: («Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» 1993 թվականի հոչակագրի 1–ին հոդված):

Տե՛ս նաև գենդերային բռնություն

կանխարգելում
(interception)

Պետության կողմից իր ներպետական տարածքից դուրս կիրառվող ցանկացած միջոց, որով կանխվում, խափանվում կամ դադարեցվում է անհրաժեշտ փաստաթղթեր չունեցող անձանց տեղաշարժը՝ ցամաքային, օդային կամ ծովային սահմանահատումը ու այդ պետության տարածք նրանց մուտքը կանխելու համար:

Տե՛ս նաև նպատակակետ երկիր

կանոնականացում
(regularization)

Ցանկացած գործընթաց կամ ծրագիր, որի միջոցով պետության համապատասխան մարմիններն անկանոն կարգավիճակում գտնվող կամ փաստաթղթային խնդիրներով՝ քաղաքացի չհանդիսացող անձանց թույլատրում են օրինական կերպով գտնվել երկրում: Նմանատիպ գործելակերպ է համարվում համաներում շնորհելը (հայտնի է նաև որպես «օրինականացում») քաղաքացի չհանդիսացող այն անձանց, ովքեր անկանոն կարգավիճակում բնակվել են երկրում տվյալ ժամանակահատվածում և որևէ այլ կերպ չեն համարվում անընդունելի:

Տե՛ս նաև համաներում, օրինականացում

կանոնակարգված միգրացիա
(orderly migration)

Անձի տեղաշարժը իր սովորաբար բնակվելու վայրից նոր բնակության վայր՝ այն օրենքների և կանոնակարգերի պահպանմամբ, որոնցով կարգավորվում են ծագման երկրից ելքը ինչպես նաև ճանապարհորդությունը, տարանցումը և մուտքը նպատակակետ կամ հյուրընկալող երկիր:

Տե՛ս նաև միգրացիայի կարգավորում, միգրացիայի կառավարում, կանոնավոր միգրացիա

կանոնավոր միգրացիա
(regular migration)

Ճանաչված, թույլատրելի ուղիներով տեղի ունեցող միգրացիա:

Տե՛ս նաև լատենտային միգրացիա, անկանոն միգրացիա, կանոնակարգված միգրացիա, փաստաթղթային խնդիր-

	ներ ունեցող միգրանտ աշխատող/ անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ աշխատող
կարանտին **(quarantine)**	Սանիտարական միջոցառումներ, որոնցով նախատեսվում է այն անձանց, կենդանիների, ապրանքների, ցամաքային փոխադրամիջոցների, նավերի կամ օդանավերի մեկուսացում, որոնք հպավարակիչ կամ վարակիչ հիվանդության աղբյուր են կամ գալիս են նման հիվանդության աղբյուր հանդիսացող երկրից:
կարգավիճակի կարգավորում **(adjustment of status)**	*Տե՛ս կարգավիճակի փոփոխություն*
կարգավիճակի փոփոխություն/ տարափոխում **(change/switching of status)**	Ընթացակարգ, որով պետությունում գտնվող՝ քաղաքացի չհանդիսացող անձը կարող է հայցել իմիգրացիոն (ներգաղթային) այլ կարգավիճակ: Օրինակ՝ օրենքով կարող է նախատեսվել դրույթ, որով ուսանողական վիզա ունեցող՝ քաղաքացի չհանդիսացող անձը, ուսուցման ավարտից հետո կարող է հայցել կարգավիճակի փոփոխություն այնպես, որ իր ուսանողական վիզան փոխարինվի աշխատանքային վիզայով: *Տե՛ս նաև իմիգրացիոն (ներգաղթային) կարգավիճակ, քաղաքացի չհանդիսացող անձ, վիզա*
կարճաժամկետ միգրանտ **(short-term migrant)**	Անձ, որը առնվազն երեք ամսով, բայց մեկ տարուց պակաս ժամկետով տեղափոխվում է իր՝ սովորաբար բնակվելու վայրի երկրից տարբեր երկիր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա այդ երկիր է տեղափոխվում հանգստի, արձակուրդի, ընկերներին կամ ազգականներին այցելելու, գործնական կամ բուժում ստանալու նպատակներով: Միջազգային միգրացիոն վիճակագրության նպատակներով՝ կարճաժամկետ միգրանտների՝ սովորաբար բնակվելու վայրի երկիր է համարվում նպատակակետ երկիրը՝ նրանց՝ այդ երկրում ծախսած ժամանակահատվածի ընթացքում: *Տե՛ս նաև երկարաժամկետ միգրանտ, մշտական բնակություն հաստատող անձինք, ժամանակավոր միգրանտ աշխատողներ*
կարողությունների զարգացում **(capacity building)**	Պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացում՝ նրանց գիտելիքների ավելացման և հմտությունների կատարելագործման միջոցով: Կարողությունների զարգացումը կարող է լինել անմիջականորեն գործընկեր պետական

մարմնի հետ առանձին ծրագրերի նախագծման և իրականացման ձևով կամ, այլ հանգամանքներում, շահագրգիռ մարմինների կողմից երկխոսության մշակման համար երկկողմ կամ բազմակողմ համագործակցության ծրագրի դյուրացման ձևով: Բոլոր դեպքերում, կարողությունների զարգացման նպատակը կառավարման գործելակերպերի՝ համընդհանուր ճանաչում ստացած չափորոշիչներին համապատասխանելն է:

Տե՛ս նաև լավագույն (արդյունավետ) գործելակերպեր, տեխնիկական համագործակցություն

կացարանով ապահովման կենտրոն (accommodation centre)

Տե՛ս ժամանակավոր տեղավորման կենտրոն

կեղծ փաստաթուղթ (fraudulent document)

Ճամփորդական կամ ինքնությունը հաստատող փաստաթուղթ, որը կեղծ եղանակով պատրաստվել կամ որևէ նյութական եղանակով փոփոխության է ենթարկվել՝ պետության անունից ճամփորդական կամ ինքնությունը հաստատող փաստաթուղթ պատրաստելու կամ տալու համար օրենքով չլիազորված անձի կամ մարմնի կողմից, կամ որը ոչ պատշաճ կերպով տրվել կամ ձեռք է բերվել խեղաթյուրման, կոռուպցիայի կամ բռնության կամ որևէ այլ անօրինական եղանակով, կամ որն օգտագործվում է օրինական իրավատիրոջից տարբեր այլ անձի կողմից *(«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող՝ «Յամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» ՄԱԿ-ի 2000 թվականի արձանագրության 3(գ) հոդված)*: Միգրացիայի ավելի լայն համատեքստում այդպիսի փաստաթղթերը կարող են ներառել նաև կեղծ կրթական վկայականներ՝ կապված դիպլոմների և որակավորումների ճանաչման հետ, ինչպես նաև աշխատանքային կեղծ փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ինքնակենսագրականները և գործատուների կողմից տրված երաշխավորագիր–նամակները:

Տե՛ս նաև մոլորեցում, ինքնությունը հաստատող փաստաթուղթ, ճամփորդական փաստաթղթեր

կենսաչափություն (biometrics)

Կենսաբանորեն չափելի հատկանիշների վերաբերյալ ուսումնասիրություն: «Կենսաչափական կողմնորոշիչները» (ԿԿ) տվյալներ են, որոնց մեջ կոդավորված է անձի կենսաբանական եզակի հատկանիշների նկարագիրը (օրի-

նակ՝ մատնահետքերը, աչքի ցանցաթաղանթի սկանավորումը կամ ձայնի սկանավորումը): Որոշ պետություններում կենսաչափական տվյալների կիրառումը ներդրվել է որպես անվտանգության կատարելագործված միջոց՝ անձնագիր, վիզա կամ բնակության (կացության) թույլտվություն տալու դեպքերի համար:

Տե՛ս նաև հսկողական համակարգ, անձնագիր, վիզա

կենսաչափություն

(biometrics)

Կենսաբանորեն չափելի հատկանիշների վերաբերյալ ուսումնասիրություն: «Կենսաչափական կողմնորոշիչները» (ԿԿ) տվյալներ են, որոնց մեջ կոդավորված է անձի կենսաբանական եզակի հատկանիշների նկարագիրը (օրինակ՝ մատնահետքերը, աչքի ցանցաթաղանթի սկանավորումը կամ ձայնի սկանավորումը): Որոշ պետություններում կենսաչափական տվյալների կիրառումը ներդրվել է որպես անվտանգության կատարելագործված միջոց՝ անձնագիր, վիզա կամ բնակության (կացության) թույլտվություն տալու դեպքերի համար:

Տե՛ս նաև հսկողական համակարգ, անձնագիր, վիզա

կլիմայական հիմքով փախստական

(climate refugee)

Տե՛ս նաև էկոլոգիական հիմքերով միգրանտ, էկոլոգիական պատճառներով տեղահանված անձ

կնոջ սեռական օրգանների խեղում (ԿՍՕԽ)

(female genital mutilation (FGM))

Ոչ բժշկական նպատակներով սեռական օրգանների կտրում՝ սովորաբար երիտասարդ տարիքում: Այն կարող է ներառել սեռական օրգանների մասնակի կամ ամբողջական կտրում, հեռացում և թակալում մշակութային և այլ՝ ոչ բուժական նպատակներով:

կոնվենցիա

(convention)

Տե՛ս պայմանագիր

կրոն

(religion)

Այն հիմքերից մեկը, որի համաձայն, «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայով փախստականը ճանաչվում է որպես այդպիսին: Կրոնի հիմքով հետապնդումը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, այդ թվում՝ կրոնական համայնքում ունեցած անդամության, մասնավոր կարգով կամ հրապարակավ կատարվող ծիսակատարությունների, կրոնական քարոզչության արգելմամբ կամ անձանց նկատմամբ խտրական խիստ միջոցների կիրառմամբ այն պատճառով, որ նրանք դավանում են իրենց կրոնը կամ պատկանում են որոշակի կրոնական համայնքի:

Հ

համաներում
(amnesty)

Ընդհանուր ներում, «կանոնականացում» կամ «օրինականացում», որը կիրառվում է այն մարդկանց նկատմամբ, ովքեր կարող են այն երկրում բնակության մասին վկայող ապացույց ներկայացնել, որտեղ շնորհվում է համաներումը՝ չնայած այն փաստին, որ նման բնակությունն անօրինական է եղել:

Տե՛ս նաև օրինականացում, կանոնականացում

համաձայնագիր/
համաձայնություն
(agreement)

Երկու կամ ավելի կողմերի միջև իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող փոխըմբռնում (գրավոր կամ բանավոր):

Տե՛ս նաև պայմանավորություն, կոնվենցիա, դաշնագիր, փաստաթղթային գործիք, պայմանագիր

համընդհանուր
իրավազորություն
(universal jurisdiction)

Սկզբունք, որի համաձայն, ազգային դատարանները կարող են աշխարհի ցանկացած վայրում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի նկատմամբ իրականացնել քննություն և դատական կարգով հետապնդում՝ անկախ մեղադրյալի կամ տուժողի քաղաքացիությունից կամ այն պետության հետ որևէ կապի բացակայությունից, որտեղ գտնվում է տվյալ դատարանը: Համընդհանուր իրավազորությունը համարվում է բացարձակ սկզբունք: Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրության (1999 թվական) նախաբանով հիմնավորվում է համընդհանուր իրավազորության կիրառումը՝ «յուրաքանչյուր պետության պարտականությունն է իր քրեական իրավազորությունն իրականացնել միջազգային հանցագործությունների համար պատասխանատու անձանց նկատմամբ»: Համընդհանուր իրավազորության իրականացման նպատակն է բարձրացնել միջազգային իրավունքի արդյունավետությունը՝ կանխելու որոշ իրավախախտումներ, այդ թվում, մասնավորապես, ցեղասպանության ծանր հանցագործությունները, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, ռազմական հանցագործությունները, խոշտանգումը, արտադատական պատիժները և «անհետացումը»: Միջազգային հանրության համոզմամբ՝ դրանք այնքան ծանր հանցագործություններ են, որ կարող են որակվել որպես ամբողջ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ և, հետևաբար, բոլոր պետությունները պարտավոր են ա-

պահովել արդարադատության իրականացումը դրանց համար պատասխանատու անձանց նկատմամբ:

Տե՛ս նաև հանցագործություն՝ միջազգային, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, ինքնիշխանություն, պատերազմական հանցագործություններ

համընդհանուր պարտադիր նորմ *(jus cogens)*

Իրավունքի սկզբունք, որն իմպերատիվ է այն իմաստով, որ ունի պարտադիր ուժ՝ անկախ առանձին կողմերի կամքից: Ընդհանուր միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր նորմը *(jus cogens)* այն նորմն է, որը պետությունների միջազգային հանրության կողմից ամբողջությամբ ընդունվում ու ճանաչվում է որպես այնպիսի նորմ, որից շեղումն անթույլատրելի է և որը կարող է փոփոխվել միայն նույն բնույթի՝ ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով *(«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 53-րդ հոդված)*, օրինակ՝ խոշտանգումների արգելումը:

Տե՛ս նաև խոշտանգումների արգելում, խոշտանգում

հայեցողություն (discretion)

Որոշակի հանգամանքներում սեփական դատողությամբ և խղճով գործելու՝ պետական պաշտոնյայի լիազորությունը կամ իրավունքը՝ հաճախ պաշտոնական կամ ներկայացուցչական լիազորությունների շրջանակներում:

հայրենադարձություն (repatriation)

Փախստականի, ռազմագերու կամ պահվող քաղաքացիական բնակչության ներկայացուցիչների անձնական իրավունքը՝ վերադառնալու իր քաղաքացիության երկիր՝ միջազգային տարբեր փաստաթղթային գործիքներում ամրագրված հատուկ պայմանների համաձայն (*Ժնևի 1949 թվականի կոնվենցիաներ և 1977 թվականի արձանագրություններ, 1907 թվականի Հաագայի չորրորդ կոնվենցիային կից «Յամաքային պատերազմի օրենքների ու սովորույթների պահպանման մասին» կանոնակարգեր*, մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթային գործիքներ, ինչպես նաև միջազգային սովորութային իրավունք): Հայրենադարձության ընտրության հնարավորությունը տվյալ անձին շնորհվում է անձամբ, այլ ոչ թե նրան արգելանքի տակ պահելու իրավասություն ունեցող մարմնի միջոցով: Միջազգային բնույթի զինված ընդհարումների ժամանակ գործող իրավունքի համաձայն՝ հայրենադարձությունը նաև ենթադրում է արգելանքի տակ պահելու իրավասություն ունեցող մարմնի պարտավորությունը՝ ազատ արձակելու դրա իրա-

վունքն ունեցող անձանց (զինվորներ և քաղաքացիական բնակչություն), ինչպես նաև ծագման երկրի կողմից պարտավորությունը՝ ընդունելու իր սեփական քաղաքացիներին ռազմական գործողությունների ավարտից հետո: Նույնիսկ եթե պայմանագրային իրավունքն ընդհանուր նորմ չի պարունակում սույն կետի վերաբերյալ, ներկայումս պատրաստակամորեն ընդունում են այն հանգամանքը, որ շահագրգիռ կողմերն ուղղակիորեն տան իրենց համաձայնությունը ռազմագերիների և պահվող քաղաքացիական բնակչության հայրենադարձության համար: «Հայրենադարձությունը»՝ որպես տերմին, տարածվում է նաև միջազգային ճգնաժամի ընթացքում դիվանագիտական ներկայացուցիչների և միջազգային հարթությունում գործող պաշտոնատար անձանց, ինչպես նաև արտաբնակների ու միգրանտների վրա:

Տե՛ս նաև աջակցվող կամավոր վերադարձ, ոչ կամավոր հայրենադարձություն, վերադարձ, վերադառնալու իրավունք, կամավոր հայրենադարձություն, կամավոր վերադարձ

հայցվոր (plaintiff)

Ընդհանուր իրավասության դատարան (բողոք ներկայացնելու միջոցով) քաղաքացիական հայց ներկայացնող կողմ:

Տե՛ս նաև պաշտպանյալ, պատասխանող

հանցագործություն՝ միջազգային (crime, international)

Արարք, որը միջազգային իրավունքի նորմերով որակվում է որպես քրեորեն պատժելի իրավախախտում: Միջազգային հանցագործությունների համար որևէ կոնկրետ սահմանում գոյություն չունի, սակայն միջազգային իրավունքում, ընդհանուր առմամբ, ստորև նշվածները որակվում են որպես միջազգային հանցագործություններ. մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ, ցեղասպանություն, ապարտեիդի հանցագործություն, ահաբեկչություն, ստրկություն և դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի այլ ձևեր, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, ծովահենություն, մարդկանց թրաֆիքինգ կամ մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխում, պատանդ վերցնելը և այլն: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է հետապնդել կամ էքստրադիցիայի ենթարկել այն անձանց, ովքեր պատասխանատվություն են կրում այդ հանցագործությունների կատարման համար. միջազգային հարթությունում անհատական պատասխանատվություն է նաև սահմանվում

նման հանցագործությունների համար (Միջազգային քրեական դատարան, նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի հարցերով միջազգային քրեական տրիբունալներ)։

Տե՛ս նաև մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, ցեղասպանություն, ահաբեկչություն, խոշտանգում, համընդհանուր իրավազորություն, պատերազմական հանցագործություններ

հավատարմագրող պետություն

(accrediting State)

Պետություն, որն ուղարկում է դիվանագիտական ներկայացուցիչ։

Տե՛ս նաև դեսպանընկալ պետություն

հատուկ աշխատանք կատարող անձ

(specified-employment worker)

Միգրանտ աշխատող, i) ով ուղարկված է իր գործատուի կողմից աշխատանք տրամադրող պետությունում սահմանափակ կամ սահմանված ժամկետով հատուկ առաջադրանք կամ պարտականություններ կատարելու համար, կամ ii) ով սահմանափակ կամ սահմանված ժամկետում այնպիսի աշխատանք է կատարում, որը պահանջում է մասնագիտական, առևտրային, տեխնիկական կամ այլ բարձրակարգ հմտություններ, կամ iii) ով, իր գործատուի պահանջով աշխատանք տրամադրող պետությունում սահմանափակ կամ սահմանված ժամկետում կատարում է ժամանակավոր կամ կարճատև բնույթ կրող աշխատանք, և ով պարտավոր է լքել աշխատանք տրամադրող պետությունն իր կողմից այդտեղ գտնվելու թույլատրված ժամկետը լրանալիս կամ ավելի վաղ, եթե նա այլևս չի կատարում այդ հատուկ առաջադրանքը կամ պարտականությունը, կամ այլևս չի կատարում այդ աշխատանքը։ *(«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(2)(է) հոդված)*։

Տե՛ս նաև միգրանտ աշխատող

հարակից գոտի

(contiguous zone)

Ափամերձ պետության տարածքային ջրերին հարող ծովային տարածք։ Իր հարակից գոտում ափամերձ պետությունը կարող է իրականացնել անհրաժեշտ հսկողություն՝ ա) իր տարածքում կամ տարածքային ջրերում մաքսային, ֆիսկալ, իմիգրացիոն [ներգաղթային] կամ սանիտարական օրենքների ու կանոնակարգերի խախտումները կանխելու, և բ) իր տարածքում կամ տարածքային ջրերում վերը նշված օրենքների ու կանոնակարգերի խախտումների համար պատժելու նպատակով։

(«Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ–ի 1982 թվականի կոնվենցիայի 33–րդ հոդված)

Տե՛ս նաև միջազգային ջրեր, տարածքային ջրեր

հարկադիր ամուսնություն

(forced marriage)

Պայմանավորվածության հիման վրա ամուսնություն՝ անձի կամքին հակառակ: Հաճախ ընտանիքին վճարվում է գլխագին, իսկ մերժման դեպքում՝ հետևանքները հաճախ լինում են դաժան և (կամ) վիրավորական:

Տե՛ս նաև հարկադրանք

հարկադիր հայրենադարձություն

(forced repatriation)

Տե՛ս ոչ կամավոր հայրենադարձություն

հարկադիր միգրացիա

(forced migration)

Միգրացիոն բնույթի տեղաշարժ, որում առկա է հարկադրանքի տարր՝ ներառյալ կյանքի ու գոյատևման միջոցների նկատմամբ սպառնալիքները՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք ունեն բնական կամ մարդածին պատճառներ (օրինակ՝ փախստականների ու ներքին տեղահանման ենթարկված անձանց տեղաշարժեր, ինչպես նաև բնական կամ շրջակա միջավայրի աղետների, քիմիական կամ միջուկային աղետների, սովի կամ զարգացման նախագծերի հետևանքով տեղահանված մարդիկ):

Տե՛ս նաև հարկադրանք, ներքին տեղահանման ենթարկված անձինք, փախստական

հարկադիր/ստիպողական աշխատանք

(forced/compulsory labour)

Ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը ցանկացած անձ կատարում է պատժի սպառնալիքի ներքո, և որը կատարելու համար տվյալ անձը կամավոր ցանկություն չի հայտնել *(«Հարկադիր աշխատանքի վերաբերյալ» ԱՄԿ–ի 1930 թվականի թիվ 29 կոնվենցիայի 2(1) հոդված)*:

Տե՛ս նաև երեխաների աշխատանք, հարկադրանք

հարկադիր վերաբնակեցում/տեղափոխում

(forced resettlement/relocation)

Պետության իրավազորության սահմաններում անհատների կամ խմբերի ոչ կամավոր տեղափոխումն իրենց սովորական բնակության վայրից՝ որպես պետական քաղաքականության մաս:

հարկադիր վերադարձ (forced return)

Անհատի ստիպողական վերադարձը ծագման, տարանցման կամ երրորդ երկիր՝ վարչական կամ դատական ակտի հիման վրա։

Տե՛ս նաև վտարում, արտաքսում, ոչ կամավոր հայրենադարձություն, անձին վերադարձնելու թույլատրելիություն, հայրենադարձություն, վերադարձ, կամավոր հայրենադարձություն, կամավոր վերադարձ

հարկադիր տեղահանում (forced displacement)

Զինված ընդհարումների ժամանակ գործող իրավունքում խաղաղ քաղաքացիական բնակչության անհատական կամ կոլեկտիվ տեղահանումը օկուպացված տարածքի ներսում։ *«Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» Ժնևի կոնվենցիայի (1949 թվականի) 49–րդ հոդվածի, Ժնևի կոնվենցիաներին կից 1949 թվականի օգոստոսի 12–ի արձանագրության 85–րդ հոդվածի և «Միջազգային զինված ընդհարումներից տուժածների պաշտպանության մասին» 1977 թվականի կոնվենցիայի* առումով՝ հարկադիր տեղահանումը ենթադրում է պատերազմական հանցագործություն, եթե դա արդարացված չէ պարտադիր ռազմական անհրաժեշտությամբ։

Ավելի ընդհանուր իմաստով՝ հարկադիր տեղահանումը կամ պարզապես տեղահանումը անձանց ոչ կամավոր, անհատական կամ կոլեկտիվ տեղաշարժն է իրենց երկրից կամ համայնքից՝ հատկապես զինված ընդհարման, քաղաքացիական անկարգությունների կամ բնական կամ մարդածին աղետների հետևանքով։

Տե՛ս նաև տեղահանված անձ, տեղահանում, արտաքին տեղահանման ենթարկված անձինք, ներքին տեղահանման ենթարկված անձինք

հարկադրանք (coercion)

Պարտադրում՝ ֆիզիկական ուժ գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ անկախ դրա՝ իրավաչափ լինելու կամ չլինելու հանգամանքից։ Հարկադրանքն իր բնույթով կարող է լինել տնտեսական, եթե որևէ մեկն օգտագործում է կոնկրետ ռեսուրսի նկատմամբ ունեցած իր հսկողությունը՝ մյուսի վարքագծի վրա ազդեցություն ունենալու համար։

Տե՛ս նաև հարկադիր/ստիպողական աշխատանք, հարկադիր միգրացիա

հարցազրույց (interview)

Անձին հարցեր տալու կամ նրա հետ զրուցելու գործընթաց, որն իրականացվում է անձի մասին տեղեկություններ ստանալու կամ անձնական որակները որոշելու հա-

մար։ Փախստականի կամ իմիգրացիոն [ներգաղթային] այլ կարգավիճակի համար ներկայացված դիմումի վերաբերյալ որոշում կայացնելու համար հարցազրույցի անցկացումը ընդհանուր բնույթ կրող քայլ է։

Տե՛ս նաև որոշում կայացնող, դիմում, առաջնային ստուգում, երկրորդային ստուգում

հեռացում

(removal)

Վերադառնալու պարտավորության կատարման ապահովում. ֆիզիկական տեղափոխում երկրի սահմաններից դուրս։

Տե՛ս նաև վտարում, արտաքսում, անձին վերադարձնելու թույլատրելիություն

հետապնդում

(persecution)

Փախստականների համատեքստում՝ կյանքին կամ ազատությանը սպառնացող վտանգ՝ ռասայի, կրոնի, քաղաքացիության, քաղաքական հայացքի կամ կոնկրետ սոցիալական խմբի պատկանելության հիմքով։ Հետապնդումը ենթադրում է մարդու իրավունքների չարաշահումներ կամ այլ լուրջ վնաս, որը հաճախ, սակայն ոչ միշտ իրականացվում է համակարգված կամ պարբերական եղանակով։ Խտրականությունը ոչ միշտ է որակվում որպես հետապնդում, թեև այն կարող է առկա լինել, եթե բացասաբար է անդրադառնում տվյալ անձի հիմնարար իրավունքների վրա, կամ եթե մի քանի խտրական միջոցների հետևանքով կուտակային ձևով լուրջ վնաս է հասցվում։

Տե՛ս նաև խտրականություն, «տեղում» (sur place) փախստականներ, (հետապնդման զոհ դառնալու) հիմնավոր երկյուղ

հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագիր

(readmission agreement)

Միջազգային համաձայնագիր, որով փոխադարձության հիմունքներով վկայակոչվում են այն գործընթացները, որոնց միջոցով մեկ պետության կողմից անօրինական կարգավիճակում գտնվող քաղաքացի չհանդիսացող անձինք վերադարձվում են իրենց հայրենիք կամ այն պետություն, որով նրանք տարանցել են։

Տե՛ս նաև համաձայնություն/համաձայնագիր, երկկողմ, վերադարձ

հետընդունում (ռեադմիսիա)

(readmission)

Գործողություն, որով պետությունն ընդունում է անձի (իր քաղաքացու, երրորդ երկրի քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի) կրկին մուտքը։

Տե՛ս նաև հետընդունման [ռեադմիսիայի] մասին համաձայնագիր

հիմնական բնակության վայր

(domicile)

Այն վայրը, որտեղ անձը ներկա է ֆիզիկապես և որը նա համարում է իր տունը, այսինքն՝ մարդու իրական, հաստատուն, գլխավոր և մշտական տունը, ուր անձը մտադիր է վերադառնալ և մնալ, նույնիսկ եթե ներկայումս բնակվում է այլ վայրում:

Տե՛ս նաև սովորաբար բնակվելու վայր, բնակություն (կացություն)

հիմնավորված երկյուղ (հետապնդվելու)

(well founded fear (of persecution))

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում նշված փախստականի սահմանման առանցքային բաղադրիչն է: Երկյուղի հիմնավորվածությունը բաղկացած է թե՛ սուբյեկտիվ (հետապնդվելու երկյուղ), և թե՛ օբյեկտիվ (երկյուղը պետք է ունենա օբյեկտիվորեն արդարացված հիմք) բաղադրիչներից: 1951 թվականի կոնվենցիայի համաձայն՝ հետապնդման պատճառ կարող է լինել նշված հինգ հիմքերից որևէ մեկը՝ ռասան, կրոնը, քաղաքացիությունը, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական հայացքների հարելը:

Տե՛ս նաև հետապնդում, փախստական

հմտություններ ունեցող միգրանտ

(skilled migrant)

Միգրանտ աշխատող, ում նկատմամբ՝ որևէ հյուրընկալող երկրի կողմից ընդունվելու համար սովորաբար կիրառվում է արտոնյալ ռեժիմ՝ հաշվի առնելով նրա հմտությունները կամ ձեռք բերած մասնագիտական փորձը (ուստի և համապատասխան երկրում գտնվելու տևողության, աշխատանքի փոփոխման և ընտանիքի վերամիավորման առնչությամբ նրա նկատմամբ կիրառվում են ավելի քիչ սահմանափակումներ):

Տե՛ս նաև բարձր մասնագիտական հմտություններ ունեցող միգրանտ, ավելի ցածր/նվազ մասնագիտական հմտություններ և միջին մասնագիտական հմտություններ ունեցող միգրանտ աշխատող, մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացի

հյուպատոսական գործառույթներ

(consular functions)

Ներառում է ուղարկող պետության և իր՝ ընդունող պետությունում գտնվող քաղաքացիների շահերի պաշտպանությունը, ուղարկող և ընդունող պետությունների միջև առևտրային, տնտեսական, մշակութային ու գիտական կապերի զարգացումը: (*Տե՛ս «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի 1963 թվականի կոնվենցիայի 5–րդ հոդվածը*):

Տե՛ս նաև հյուպատոսական պաշտոնատար անձինք, հյուպատոսական պաշտպանություն

հյուպատոսական գրանցում

(consular registration)

Այդ պետության քաղաքացու հիմնական տվյալների (ինքնության, ընտանեկան դրության, բնակության վայրի և այլնի) վերաբերյալ գրառում հյուպատոսական գրանցամատյանում: Հյուպատոսական գրանցման նպատակն է դյուրացնել հյուպատոսական առաքելության իրականացումը, հատկապես՝ հյուպատոսական պաշտպանության տրամադրումը:

Տե՛ս նաև հյուպատոսական գործառույթներ, հյուպատոսական պաշտպանություն

հյուպատոսական պաշտոնատար անձինք

(consular officers)

Վիզաների և բնակության հետ կապված հարցերով տվյալ պետությունը արտերկրում ներկայացնող պետական պաշտոնատար անձինք: «*Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի 1963 թվականի կոնվենցիայի 1(դ) հոդվածով* սահմանվում է, որ հյուպատոսական պաշտոնատար անձ նշանակում է «ցանկացած անձ՝ ներառյալ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը, որին հանձնարարված է այդ պաշտոնում հյուպատոսական գործառույթների կատարումը»:

Տե՛ս նաև հյուպատոսական գործառույթներ, հյուպատոսական պաշտպանություն

հյուպատոսական պաշտպանություն

(consular protection)

Հյուպատոսական գործառույթներ, որոնց նպատակն է արտերկրում քաղաքացիներին օգնություն ցույց տալը, այդ թվում՝ տեղական դատարաններում նրանց իրավունքների և շահերի պաշտպանության հարցում աջակցելը: Մասնավորապես, ձերբակալված կամ բանտ ուղարկված, կամ մինչև դատական քննություն իրականացնելը արգելանքի տակ գտնվող, կամ այլ կերպ ազատությունից զրկված միգրանտների պաշտպանությունը. նման միգրանտները պետք է անհապաղ տեղեկացվեն հյուպատոսական մարմինների հետ հաղորդակցվելու իրենց իրավունքի մասին:

Տե՛ս նաև հյուպատոսական գործառույթներ, հյուպատոսական պաշտոնատար անձինք, հյուպատոսական գրանցում

հյուպատոսական (նախնական) օժանդակության ծառայություններ

((pre-) consular support

Ծառայություններ, որոնք օժանդակում են պետություններին և միգրանտներին վիզայի համար ներկայացվող դիմումների հետ կապված ընթացակարգերի դյուրացման հարցում՝ նախքան դիմումը ներկայացնելը: Դրանք կարող են ներառել՝ օժանդակություն՝ վիզայի համար

services)	ներկայացվող դիմումների ձևերը լրացնելու հարցում, օժանդակություն՝ վիզայի համար ներկայացվող դիմումը հիմնավորող փաստաթղթերը հավաքելու հարցում, իրավական, կրթական և աշխատանքի հետ կապված փաստաթղթերի ստուգում, փաստաթղթերի թարգմանություն:
հյուպատոսական (նախնական) օժանդակության ծառայություններ **((pre-) consular support services)**	Ծառայություններ, որոնք օժանդակում են պետություններին և միգրանտներին վիզայի համար ներկայացվող դիմումների հետ կապված ընթացակարգերի դյուրացման հարցում՝ նախքան դիմումը ներկայացնելը: Դրանք կարող են ներառել՝ օժանդակություն՝ վիզայի համար ներկայացվող դիմումների ձևերը լրացնելու հարցում, օժանդակություն՝ վիզայի համար ներկայացվող դիմումը հիմնավորող փաստաթղթերը հավաքելու հարցում, իրավական, կրթական և աշխատանքի հետ կապված փաստաթղթերի ստուգում, փաստաթղթերի թարգմանություն:
հյուրընկալող երկիր **(host country)**	*Տե՛ս նպատակակետ երկիր, ընդունող երկիր, աշխատանք տրամադրող պետություն*
հողի սկզբունք ***(jus soli)***	Սկզբունք, որի համաձայն երեխայի քաղաքացիությունը որոշվում է նրա ծննդյան վայրով (թեև քաղաքացիությունը կարող է փոխանցվել նրա ծնողների կողմից): *Տե՛ս նաև արյան սկզբունք (jus sanguinis)*
հովանավորություն **(sponsorship)**	Աջակցության՝ հատկապես ֆինանսական օժանդակություն տրամադրելու խոստում այն քաղաքացի չհանդիսացող անձին, որը ցանկանում է մուտք գործել և գտնվել այդ պետությունում՝ սովորաբար սահմանված ժամանակահատվածի ընթացքում: Միգրանտների որոշ կատեգորիաների, ինչպես նաև այցելուների համար որոշ պետություններ, որպես մուտքի պայման, պահանջում են հովանավորության առկայություն կամ բավարար եկամտի առկայությունը հավաստող ապացույցներ: *Տե՛ս նաև երդմամբ հաստատվող գրավոր վկայություն (աջակցության մասին), պարտավորավճար, երաշխիք*
հպատակագրում **(naturalization)**	Քաղաքացի չհանդիսացող անձին որևէ պետության կողմից պաշտոնական փաստաթղթի միջոցով քաղաքացիություն շնորհելը՝ տվյալ անձի կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Միջազգային իրավունքով չեն սահմանվում հպատակագրման մանրամասն նորմեր, սակայն դրանով ճանաչվում է յուրաքանչյուր պետության իրավասությունը՝ հպատակագրելու նրանց, ովքեր այդ

պետության քաղաքացիները չեն, բայց դիմում են ներկայացնում դրա քաղաքացիները դառնալու համար։

Տե՛ս նաև քաղաքացիություն ձեռք բերելը, քաղաքացի, քաղաքացիություն

հսկողական համակարգ (lookout system)

Պետությանը պատկանող՝ այն անձանց պաշտոնական ցուցակը, սովորաբար (սակայն ոչ պարտադիր կերպով)՝ ավտոմատացված, որոնք պետք է ապագայում հետապնդման ենթարկվեն, որոնց մուտքը համապատասխան երկիր պետք է կանխվի, կամ որոնք ժամանման պահին պետք է ձերբակալվեն։ Հսկողական համակարգը (որը նաև կոչվում է «հսկողության տակ գտնվողների ցանկ» համակարգ) հատուկ միջգերատեսչական ծրագիր է, որին տեղեկություններ են տրամադրում իրավապահ, հետախուզական գործունեություն իրականացնող և միգրացիոն մարմինները։ Վիզա տրամադրելու կամ պետություն մուտք գործելու թույլտվություն տալու մասին որոշումներ կայացնելիս հյուպատոսական և սահմանային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք, ընդունված կարգի համաձայն, ստուգում են հսկողական ցանկը՝ անկախ դրա՝ համակարգչային կամ թղթային տարբերակով լինելու հանգամանքից։

Տե՛ս նաև կենսաչափություն, առաջնային ստուգում, երկրորդային ստուգում

հսկողության տակ գտնվողների ցանկ (watchlist)

Տե՛ս նաև հսկողական համակարգ

հրաժարում (renunciation)

Գործողություն, որի միջոցով անձը, կամավոր կերպով հրաժարվելով իրավունքից, կորցնում է դրանից օգտվելու հնարավորությունը։

Տե՛ս նաև քաղաքացիություն չունենալը

հրաժարում (waiver)

Որևէ օրինական իրավունք կամ առավելություն՝ հստակ արտահայտված կամ ենթադրվող, կամավոր թողնելը կամ դրանից հետ կանգնելը։ Միգրացիոն իրավունքով կարող է նախատեսվել, որ անընդունելիության որոշ իրավական պահանջներ կամ հիմքեր չկիրառվեն որոշակի պարտադիր դեպքերում՝ տվյալ դեպքում որևէ պահանջից հրաժարվելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը տալով համապատասխան գործակալությանը։

հրավիրված աշխատող (guest worker)

Ընդհանուր առմամբ համարվում է տնտեսական միգրանտ, ում աշխատանքի են վերցրել սահմանափակ ժամանակով բնակության ու աշխատանքի համար: 20–րդ դարի հիսունական և վաթսունական թվականներին տեղի ունեցած միգրացիոն հոսքերի առումով այս տերմինի գործածությունը քիչ թե շատ սահմանափակ է, և այն այլևս չի գործածվում:

Տե՛ս նաև տնտեսական միգրանտ, միգրանտ աշխատող

Ճ

Ճամփորդական փաստաթղթեր

(travel documents)

Ընդհանուր տերմին, որն ընդգրկում է իրավասու մարմնի կողմից տրամադրվող այն բոլոր փաստաթղթերը, որոնք մեկ այլ երկիր մուտք գործելու համար համարվում են անձի ինքնության ընդունելի ապացույցներ: Ճամփորդական փաստաթղթերի առավել լայնորեն օգտագործվող ձևերն են անձնագրերը և վիզաները: Որոշ պետություններ նաև ընդունում են ինքնությունը հաստատող որոշակի քարտեր և այլ փաստաթղթեր, ինչպես, օրինակ՝ բնակության (կացության) թույլտվությունները:

Տե՛ս նաև ինքնությունը հաստատող վկայական, կեղծ փաստաթուղթ, անցագիր (ֆր.՝ laissez-passer), անձնագիր, ճամփորդական փաստաթղթեր (Կոնվենցիա), վիզա

Ճամփորդական փաստաթղթեր (Կոնվենցիա)

(travel documents (Convention))

Ճամփորդական փաստաթղթեր, որոնք տրամադրվում են փախստականներին ներպետական անձնագրի փոխարեն այն երկրի կողմից, որը միացել է *«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիային*, որի 28(1) հոդվածի համաձայն՝ «Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականներին տալիս են ճամփորդական փաստաթղթեր՝ իրենց տարածքից դուրս ճամփորդելու նպատակով, եթե ազգային անվտանգությունից և հասարակական կարգի պաշտպանությունից բխող հիմնավոր պատճառներն այլ բան չեն պահանջում, և նշված փաստաթղթերի առնչությամբ կիրառվում են սույն Կոնվենցիայի ցանկի դրույթները: Պայմանավորվող պետությունները կարող են նման ճամփորդական փաստաթուղթ տալ իրենց տարածքում գտնվող ցանկացած այլ փախստականի...»

Տե՛ս նաև ինքնությունը հաստատող վկայական, անձնագիր, փախստական, ժամանակավոր ճամփորդական փաստաթղթեր, ճամփորդական փաստաթղթեր, վիզա

Ճամփորդող անձ

(traveller)

Անձ, որը որևէ նպատակով տեղաշարժվում է մեկ վայրից մյուսը:

Տե՛ս նաև փոխադրողի պատասխանատվության մասին օրենսդրություն, միգրանտ, զբոսաշրջություն, այցելու

Մ

մանդատի ներքո փախստական

(mandate refugee)

Տե՛ս փախստական (մանդատի ներքո)

մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացի

(qualified national)

Միգրացիայի համատեքստում՝ արտաբնակ քաղաքացի, որն իր ծագման երկրում կամ տարածաշրջանում օժտված է պահանջարկ ունեցող մասնագիտական հատուկ հմտություններով:

Տե՛ս նաև «ուղեղների արտահոսք», սփյուռք, բարձր մասնագիտական հմտություններ ունեցող միգրանտ, հմտություններ ունեցող միգրանտ

մարդասիրական իրավունք (միջազգային)

(humanitarian law (international))

Նեղ իմաստով՝ զինված ընդհարման ժամանակ յուրաքանչյուր առանձին տուժողի պաշտպանության համար հատուկ նախատեսված միջազգային իրավունքի նորմեր: Ավելի ընդհանուր իմաստով՝ այն զինված ընդհարումների ժամանակ գործող իրավունքի հոմանիշն է: *Ժնևի 1949 թվականի չորս կոնվենցիաները և 1977 թվականի երկու Լրացուցիչ արձանագրությունները* միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական աղբյուրներն են:

Տե՛ս նաև մարդասիրական օգնություն, մարդասիրական սկզբունքներ

մարդասիրական սկզբունքներ

(humanitarian principles)

Էթիկական չափանիշներ, որոնք կիրառելի են մարդասիրական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների նկատմամբ, որոնք իրենց ներդրումն են ունենում միջազգային իրավունքի նորմերում՝ մարդու իրավունքների առնչությամբ, և մարդասիրական իրավունքի ոլորտում, ինչպես նաև փորձում են պահպանել մարդասիրական գործունեության ամբողջականությունը: Մարդասիրական սկզբունքների առաջին հստակ հայտարարությունը տեղ է գտել 1965 թվականին ընդունված *«Կարմիր խաչի և կարմիր մահիկի հիմնարար սկզբունքներում»*:

Տե՛ս նաև մարդու իրավունքներ, մարդասիրական օգնություն, մարդասիրական իրավունք (միջազգային), խտրականության բացառում

մարդասիրական օգնություն

(humanitarian assistance)

Օգնություն՝ ճգնաժամային իրավիճակից տուժած անձանց կարիքները հոգալու համար: Դա նախնառաջ տվյալ պետության պարտականությունն է, սակայն այդ հարցում աջակցում են նաև միջազգային կազմակերպությունները,

հասարակական կազմակերպությունները (ՀԿ–ներ) և Կարմիր խաչի/ Կարմիր մահիկի միջազգային շարժումը։ Այդպիսի օգնությունը տրամադրվում է մարդասիրական սկզբունքներին համապատասխան, մասնավորապես՝ մարդասիրության սկզբունքին (մարդկային տառապանքը պետք է վերացվի այն հայտնաբերելու պահից՝ հատուկ ուշադրություն դարձնելով բնակչության ամենախոցելի հատվածին՝ երեխաներին, կանանց ու ծերերին. պետք է հարգել և պաշտպանել բոլոր տուժածների արժանապատվությունը և իրավունքները), չեզոքության սկզբունքին (մարդասիրական օգնությունը պետք է տրամադրվի առանց ռազմական գործողություններում ներգրավվելու և քաղաքական, կրոնական կամ գաղափարաբանական բնույթի տարակարծություններում կողմերից մեկին հարելու) և անաչառության սկզբունքին համապատասխան (մարդասիրական օգնություն պետք է տրամադրվի առանց էթնիկ ծագման, սեռի, քաղաքացիության, քաղաքական հայացքների, ռասայական կամ կրոնական պատկանելության հիմքով խտրականության)։ Մարդկային տառապանքը թեթևացնելիս պետք է ուղղորդվել բացառապես նրանց կարիքներով, և առաջնայնություն պետք է տալ աղետալի իրավիճակների ամենահրատապ դեպքերին։

Տե՛ս նաև մարդասիրական իրավունք (միջազգային), մարդասիրական սկզբունքներ

մարդկանց թրաֆիքինգ (trafficking in persons)

«Շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ ուժի, կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով» (*«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող՝ «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, արգելման և պատժի մասին» ՄԱԿ–ի 2000 թվականի արձանագրության 3(ա) հոդված*)։ Մարդկանց թրաֆիքինգը կարող է կատարվել մեկ պետության սահմաններում կամ կարող է կրել անդրազգային բնույթ։

Տե՛ս նաև առևանգում, միջոցների առգրավում, ածխաթթու գազ հայտնաբերող սենսորներ, հարկադրանք, մոլորեցում, շահագործում, խարդախություն, կազմակերպված հանցա-

վորություն, Պալերմոյի արձանագրություններ, սենտր, մաքսանենգ ճանապարհով տեղափոխում, մարդկանց թրաֆիքինգ իրականացնող անձ, մարդկանց թրաֆիքինգի զոհ, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր

մարդկանց թրաֆիքինգ իրականացնող անձ

(trafficker, human)

Միջնորդ, ով խաբեության, ֆիզիկական կամ հոգեբանական հարկադրանքի միջոցով և շահագործման նպատակով զբաղվում է մարդկանց տեղափոխմամբ՝ հետապնդելով տնտեսական կամ որևէ այլ շահ: Թրաֆիքինգ իրականացնող անձի մտադրությունն ի սկզբանե (*ab initio*) մարդկանց շահագործելն է և շահագործումից օգուտ կամ շահ ստանալը:

Տե՛ս նաև շահագործում, անօրինական ճանապարհով (միգրանտներ) տեղափոխող, մարդկանց թրաֆիքինգ, մարդկանց թրաֆիքինգի զոհ

մարդկանց թրաֆիքինգի զոհ

(victim of human trafficking)

Ցանկացած ֆիզիկական անձ, որը ենթարկվել է մարդկանց թրաֆիքինգի:

Տե՛ս նաև թրաֆիքինգ իրականացնող անձ, մարդկանց թրաֆիքինգ

մարդկության դեմ ուղղված հանցագործություններ

(crimes against humanity)

Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրության 7–րդ հոդվածի համաձայն՝ մարդկության դեմ ուղղված հանցագործություններն այն հանցագործություններն են, որոնք «կատարվում են որպես ցանկացած քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակում, եթե նման հարձակումը տեղի է ունենում գիտակցված»: Այս սահմանման ներքո ենթադրվող հանցագործությունները ներառում են՝ սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, վտարումը կամ բռնի տեղահանումը, ազատությունից զրկումը կամ ֆիզիկական ազատությունից զրկելու այլ խիստ միջոցներ՝ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի խախտմամբ, խոշտանգումը, բռնաբարությունը, սեռական ստրկությունը, մարմնավաճառությամբ զբաղվելուն հարկադրելը, հարկադիր հղիությունը, հարկադիր ամլացումը կամ համեմատելի ծանրության սեռական բռնության ցանկացած այլ տեսակ, նույնականացված ցանկացած խմբի կամ հանրույթի հետապնդումը քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկական, մշակութային, կրոնական, գենդերային (ինչպես սահմանված է 7–րդ հոդվածի 3–րդ պարբերությունում) կամ այլ հիմքերով, որոնք միջազգային իրավունքում համընդհանուր կերպով ճանաչվել են անընդունելի՝ սույն

պարբերությամբ նախատեսված ցանկացած արարքի կամ Դատարանին ընդդատյա ցանկացած հանցագործության կապակցությամբ, մարդկանց բռնի անհետացումը, ապարտեիդի հանցագործությունը, մեծ տառապանք, մարմնական լուրջ վնասվածքներ պատճառող կամ հոգեկան կամ ֆիզիկական առողջությունը վնասող՝ նմանաբնույթ այլ անմարդկային միտումնավոր արարքները:

Տե՛ս նաև հանցագործություն՝ միջազգային, ցեղասպանություն, ահաբեկչություն, համընդհանուր իրավազորություն, պատերազմական հանցագործություններ

մարդու անվտանգություն

(human security)

Անձանց անվտանգությանն առնչվող հասկացություն, որը խթանում է անձանց ֆիզիկական անվտանգության, տնտեսական ու սոցիալական բարեկեցության, մարդկային արժանապատվության և մարդու իրավունքների պաշտպանությունը: ՄԱԿ–ի անդամ պետությունները 2005 թվականին կայացած համաշխարհային գագաթաժողովին հանդես են եկել մարդու անվտանգության կարևորության վերաբերյալ հետևյալ հայտարարությամբ՝ «Մենք կարևորում են ազատ ու արժանապատիվ, աղքատությունից ու հուսահատությունից զերծ կյանքով ապրելու մարդկանց իրավունքը: Մենք ընդունում ենք, որ բոլոր անձինք, մասնավորապես՝ մարդկանց խոցելի խմբերը, ունեն վախից ու կարիքից զերծ մնալու ազատություն՝ իրենց բոլոր իրավունքներից օգտվելու ու իրենց մարդկային ներուժն ամբողջությամբ զարգացնելու հավասար հնարավորությամբ»:

Տե՛ս նաև լիազորում, պաշտպանություն

մարդու անքակտելի իրավունքներ

(non-derogable human rights)

Մարդու բացարձակ իրավունքներ, որոնք ցանկացած ժամանակ պետք է ճանաչվեն և հարգվեն: *«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի* միջազգային դաշնագրով որպես անքակտելի սահմանվում են հետևյալ իրավունքները՝ կյանքի իրավունք, խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք, ստրկության չենթարկվելու իրավունք, պայմանագրային պարտավորությունը կատարելու անկարողության հիմքով ազատազրկման չենթարկվելու իրավունք, քրեական իրավունքի հետադարձ ուժի արգելքից օգտվելու իրավունք, իրավասուբյեկտության ճանաչման իրավունք, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք:

Անկախ մարդու անքակտելի իրավունքների նշված ցանկից՝ միջազգային հանրության մեջ նկատվում է՝ մարդու բոլոր իրավունքները համընդհանուր, անբաժանելի, փոխկապակցված և հավասար վերաբերմունք պահանջող իրավունքներ համարելու միտում։

Տե՛ս նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, շեղում, մարդու հիմնարար իրավունքներ, մարդու իրավունքներ, անօտարելի

մարդու իրավունքներ

(human rights)

Մարդու արժանապատվության վրա հիմնված այն ազատությունները և արտոնությունները, որոնք, ընդունված ժամանակակից արժեքների համաձայն, բոլոր մարդիկ, որպես իրենց իրավունք, պետք է կարողանան պահանջել այն հասարակությունում, որի մեջ ապրում են։ Այդ իրավունքները ներառված են *Իրավունքների միջազգային բիլլում*, որն ընդգրկում է *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թվական)*, *«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը* և *«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (1966 թվական)*, և զարգացել են այդ հիմքի վրա ընդունված այլ պայմանագրերով (օրինակ՝ *«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի կոնվենցիա*)։

Տե՛ս նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, մարդու հիմնարար իրավունքներ, մարդու անօտարելի իրավունքներ, փոքրամասնությունների պաշտպանություն, ինքնիշխանություն

մարդու իրավունքների պաշտպան (օմբուդսման)

(ombudsman)

Անկախ պաշտոնատար անձ, ում նշանակում են՝ քաղաքացիների կողմից ոչ պետական կազմակերպությունների (ինչպես օրինակ՝ ընկերության կամ համալսարանի) ղեկավարության կամ պետության (ազգային իրավազորության որոշ շրջանակներում՝ նաև միգրացիայի ոլորտին վերաբերող խնդիրներով զբաղվող մարմինների) դեմ ներկայացվող բողոքներ ստանալու, դրանք քննելու և դրանց մասին զեկուցելու համար։

մարդու հիմնարար իրավունքներ

(fundamental human rights)

Տեսանկյուն, որն արտացոլում է այն հասկացությունը, որ մարդու իրավունքների լայն շրջանակներում մարդու որոշ իրավունքներ ունեն բացառիկ կարևորություն, երբ հաշվի են առնվում մարդու արժանապատվությունն ու արժեքը, տղամարդկանց ու կանանց հավասար իրա-

վունքները և սոցիալական առաջընթացի խթանումն ու առավել բարձր կենսամակարդակի ապահովումը: Այդ տեսակի պաշտպանությունը ծագում է որոշակի իրավունքների անքակտելի բնույթից: Ուստի, *«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (1966 թվական) 4(1) հոդվածով* թույլատրվում է շեղում կատարել միայն «արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը», սակայն դրանով արգելվում է որևէ շեղում կատարել 6–րդ (կյանքի իրավունք), 7–րդ (խոշտանգում), 8(1) և (2) (ստրկություն և անազատ վիճակ), 11–րդ (ազատազրկում պայմանագրային պարտավորությունները խախտելու համար), 15–րդ (հետադարձ ուժ ունեցող քրեական պատասխանատվություն), 16-րդ (ամենուրեք իրավասուբյեկտության ճանաչման իրավունք) և 18–րդ (մտքի, խղճի և կրոնի ազատություն) հոդվածներից: Չնայած դրան՝ կա միտում, որ մարդու բոլոր իրավունքները համարվեն համընդհանուր, անբաժանելի, փոխպայմանավորված և փոխկապակցված, որոնց դեպքում պետք է ցուցաբերել արդար և հավասար վերաբերմունք հավասար հիմունքներով և կարևորությամբ:

Տե՛ս նաև մարդու իրավունքներ, մարդու անքակտելի իրավունքներ, խոշտանգումների արգելում, ստրկություն, խոշտանգում

մաքսանենգ ճանապարհով (միգրանտներ) տեղափոխող անձ

(smuggler (of migrants))

Միջնորդ, ով չթույլատրված եղանակով ապահովում է որևէ անձի փոխադրումը միջազգայնորեն ճանաչված պետական սահմանով՝ տվյալ անձի համաձայնությամբ:

Տե՛ս նաև մաքսանենգ ճանապարհով տեղափոխում

մաքսանենգ ճանապարհով տեղափոխված անձ/միգրանտ

(smuggled person/migrant)

Միգրանտ, ով մեկ այլ անձի ֆինանսապես կամ նյութապես շահագրգռելու միջոցով կարողանում է ձեռք բերել դեպի այն պետություն անօրինական մուտք գործելու հնարավորություն, որի քաղաքացին կամ մշտական բնակության (կացության) կարգավիճակ ունեցող անձ չէ:

մաքսանենգ ճանապարհով տեղափոխում

(smuggling)

«Որևէ պայմանադիր պետության կողմից որևէ անձի, որը քաղաքացի կամ մշտական բնակության կարգավիճակ ունեցող անձ չէ, անօրինական մուտքի հնարավորությամբ ապահովելը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու նպատակով» (*«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպու-*

թյան կոնվենցիան լրացնող՝ «Յամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» ՄԱԿ-ի 2000 թվականի արձանագրության 3(ա) հոդված) *Մաքսանենգ ճանապարհով անձանց տեղափոխումը, ի տարբերություն թրաֆիքինգի, չի* պահանջում շահագործման, հարկադրանքի կամ մարդու իրավունքների խախտման տարրերի առկայություն:

Տե՛ս նաև միջոցների առգրավում, ածխաթթու գազի սենսորներ, անօրինական մուտք, կազմակերպված հանցավորություն, Պալերմոյի արձանագրություններ, սենսորներ, մաքսանենգ ճանապարհով (միգրանտներ) տեղափոխող անձ, մարդկանց թրաֆիքինգ

«մեղմ իրավունք» (պարտադիր բնույթ չունեցող)
(soft law)

Պարտադիր իրավական ուժ չունեցող չափանիշներ:

Տե՛ս նաև լավագույն (արդյունավետ) գործելակերպեր, կարողությունների զարգացում, տարածաշրջանային խորհրդատվական գործընթացներ

մերժում ստացած դիմող
(rejected applicant)

Միգրացիայի համատեքստում՝ դեպի տվյալ երկիր կատարվող միգրացիային ներկայացվող չափորոշիչները չբավարարելու հիմքով հյուպատոսարանի կամ դեսպանատան կողմից մերժում ստացած դիմող:

Տե՛ս նաև չընդունելու հիմքեր

մերձավոր ազգական
(next of kin)

Անձի հետ արյունակցական ամենամոտ կապ ունեցող անձ կամ անձինք:

միացում
(accession)

««Վավերացում», «ընդունում», «հաստատում» և «միացում» նշանակում է, կոնկրետ դեպքով պայմանավորված, նման անվանում ունեցող միջազգային գործողություն, որի միջոցով պետությունը միջազգայնորեն հաստատում է իր համաձայնությունը պայմանագրի պարտադիրության վերաբերյալ», *(«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 2(1)(բ) հոդված)*

Տե՛ս նաև վավերացում, վերապահում պայմանագրի դրույթներից, պայմանագիր

միգրանտ
(migrant)

Միջազգային մակարդակով «միգրանտ» տերմինի համար համընդհանուր ճանաչում գտած որևէ սահմանում չկա: «Միգրանտ» տերմինը սովորաբար ներառում էր բոլոր այն դեպքերը, երբ անձն ազատորեն կայացնում էր միգրացիայի դիմելու իր որոշումը՝ ելնելով «սեփական հարմարավետությունից» և առանց արտաքին ճնշող գոր-

ծոնի միջամտության. հետևաբար, դա վերաբերում էր այն անձանց և ընտանիքի անդամներին, որոնք տեղաշարժվում էին այլ երկիր կամ տարածաշրջան՝ իրենց նյութական կամ սոցիալական պայմանները բարելավելու և իրենց կամ իրենց ընտանիքի համար առավել բարենպաստ հեռանկարներ ստեղծելու համար։
Միավորված ազգերի կազմակերպության կողմից միգրանտը սահմանվում է որպես անձ, որը ավելի քան մեկ տարի բնակվել է օտարերկրյա պետությունում՝ անկախ պատճառներից, կամավոր թե ոչ կամավոր, և անկախ միգրացիայի դիմելու համար օգտագործված միջոցներից՝ կանոնավոր թե անկանոն։ Այդ սահմանման համաձայն՝ ավելի կարճ ժամանակահատվածով ճանապարհորդող անձինք՝ զբոսաշրջիկները և գործարարները, չեն համարվում միգրանտներ։ Այնուամենայնիվ, այս տերմինի լայն գործածումը ներառում է առավել կարճաժամկետ միգրանտների տեսակներ, ինչպես օրինակ՝ սեզոնային գյուղատնտեսական աշխատողներ, ովքեր ճանապարհորդում են կարճ ժամանակահատվածով՝ գյուղատնտեսական կուլտուրաների մշակմամբ կամ բերքահավաքով զբաղվելու համար։

Տե՛ս նաև օրինական փաստաթղթեր ունեցող միգրանտ, միգրացիա, ճանապարհորդող

միգրանտ աշխատողներ (migrant worker)

«Անձ, որը պետք է զբաղվի, զբաղվում է կամ զբաղվել է վարձատրվող գործունեությամբ այն պետությունում, որի քաղաքացին չէ»։ *(«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(1) հոդված)։*

Տե՛ս նաև օրինական փաստաթղթեր ունեցող միգրանտ, սահմանակից պետությունում աշխատող, շրջիկ աշխատող, ծրագրում ներգրավված աշխատող, նավաստի, սեզոնային աշխատող, ոչ վարձու աշխատող, հատուկ աշխատանք կատարող անձ, ծովակայանքի վրա աշխատող

միգրանտների թվաքանակ (migrant stock)

Որոշակի ժամանակահատվածում տվյալ երկրում բնակվող միգրանտների թիվը։

միգրանտների հոսք (migrant flow)

Սահմանված ժամանակահատվածում դեպի տվյալ տարածք կամ տվյալ տարածքից դուրս տեղաշարժվող կամ տեղաշարժվելու թույլտվություն ունեցող միգրանտների հաշվարկված թիվը։

միգրացիա

(migration)

Անձի կամ անձանց խմբի տեղաշարժը՝ միջազգային սահման հատելու միջոցով կամ պետության ներսում: Դա բնակչության տեղաշարժ է, որը ենթադրում է մարդկանց ցանկացած տեսակի տեղաշարժ՝ անկախ դրա տևողությունից, կազմից և պատճառներից. այն ներառում է փախստականների, տեղահանված անձանց, տնտեսական միգրանտների և այլ նպատակներով, այդ թվում՝ ընտանիքի վերամիավորման նպատակով տեղաշարժվող անձանց միգրացիա:

Տե՛ս նաև զուտ միգրացիա, գումարային միգրացիա, զբոսաշրջություն

միգրացիայի կարգավորում

(migration management)

Միգրացիայի կարգավորմանը և միգրանտների պաշտպանությանն ուղղված ինստիտուտների, իրավական դաշտերի, մեխանիզմների և գործելակերպերի համակարգ: Այս տերմինը գործածվում է որպես հոմանիշ «միգրացիայի կառավարում» տերմինին, թեև միգրացիայի կառավարումը երբեմն օգտագործվում է նաև միջսահմանային տեղաշարժը պետական մակարդակով կարգավորող նեղ գործունեությունը վկայակոչելու համար:

Տե՛ս նաև միգրացիայի կառավարում, կանոնակարգված միգրացիա

միգրացիայի կառավարում

(governance of migration)

Այս տերմինը սովորաբար ընդգրկում է ազգային համակարգում առկա պետական բազմաթիվ գործառույթներ՝ ուղղված միջսահմանային միգրացիայի կանոնակարգված ու քաղաքակիրթ կառավարմանը, մասնավորապես՝ տվյալ երկրի սահմաններում օտարերկրացիների մուտքը և ներկայությունը կառավարելուն, փախստականներին և պաշտպանության կարիք ունեցող այլ անձանց պաշտպանելուն: Դա վերաբերում է քաղաքականության մշակման, միգրացիայի ոլորտի առանցքային խնդիրներին օրենսդրական և վարչական արձագանքի կապակցությամբ որդեգրված մոտեցմանը:

Տե՛ս նաև միգրացիայի կարգավորում, կանոնակարգված միգրացիա

միջազգային միգրացիոն իրավունք

(international migration law)

Միգրացիային վերաբերող միջազգային նորմեր և սկզբունքներ, ինչպես օրինակ՝ միգրանտներին ընդունելու, պահելու և արտաքսելու, թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխման դեմ պայքարելու, սահմանները պաշտպանելու, քաղաքացիություն տրամադրելու իրավունքները, որոնք բխում են պետու-

թյան ինքնիշխանությունից և մարդու իրավունքները կարգավորող փաստաթղթային գործիքներից: Այդ երկու տարրերը կազմում են միջազգային միգրացիոն իրավունքի հիմնական հենասյուները: Միջազգային միգրացիոն իրավունքի փաստաթղթային գործիքները սփռված են իրավունքի տարբեր ճյուղերում՝ մարդու իրավունքների ոլորտում գործող իրավունք, մարդասիրական իրավունք, աշխատանքային իրավունք, փախստականների իրավունք, հյուպատոսական իրավունք, առևտրային իրավունք և ծովային իրավունք:

Տե՛ս նաև միջազգային իրավունք (հանրային), միգրացիա

միգրացիայի ֆեմինիզացում

(feminization of migration)

Միգրացիոն հոսքերում կանանց մասնակցության աճ (ընդհանուր առմամբ բոլոր միգրանտների մոտ 49 տոկոսը կանայք են): Թեև կին միգրանտների մասնաբաժինը վերջին տասնամյակներում էապես չի փոխվել, նրանց դերը միգրացիայի ոլորտում զգալի փոփոխության է ենթարկվել: Ներկայումս կանայք կարծես թե ավելի շատ միգրացիայի են դիմում առանձին և ոչ որպես ընտանիքի անդամներ ու ակտիվորեն ներգրավվում են աշխատանքային գործունեության մեջ:
Կանանց ավելացումը միգրացիոն հոսքերում հանգեցրել է միգրացիայի՝ որոշակի սեռին հատուկ խոցելի տեսակներ ներառյալ տնային աշխատողների ու խնամողների միգրացիան առևտրային նպատակներով, կանանց միգրացիան և թրաֆիքինգը՝ սեքս–արդյունաբերության նպատակներով, ինչպես նաև կանանց կազմակերպված միգրացիան ամուսնության նպատակով: Քանի որ աշխատանքի նշված տեսակները կարգավորում չեն ստանում, միգրանտ կանայք հաճախ շահագործման ավելի մեծ վտանգի են ենթարկվում:

միջազգային աջակցություն

(international assistance)

Միջազգային հանրության կողմից տրամադրվող աջակցություն, ինչպես օրինակ՝ բնամթերքով տրամադրվող օգնություն, ֆինանսական ներդրումներ և վերապատրաստված անձնակազմի կողմից մատուցվող ծառայություններ:

միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներ

(general principles of international law)

Միջազգային իրավունքի աղբյուր՝ բաղկացած տարբեր ազգային իրավական համակարգերին հատուկ սկզբունքներից, որոնք փոխատեղվել են միջազգային իրավական համակարգ:

Տե՛ս նաև սովորութային իրավունք՝ միջազգային, միջազգային իրավունք (հանրային)

միջազգային իրավունք (հանրային)

(international law (public))

Միջազգային իրավունքի սուբյեկտների միջև հարաբերությունները կարգավորող իրավական սկզբունքներ: Միջազգային հարաբերությունների ժամանակակից իրավունքը ներառում է ոչ միայն պետություններին, այլ նաև այնպիսի մասնակիցներ, ինչպիսիք են միջազգային կազմակերպությունները և նույնիսկ անհատները (այնպիսիք, որոնք վկայակոչում են իրենց մարդու իրավունքները կամ կատարում պատերազմական հանցագործություններ): Այն կոչվում է նաև ազգերի իրավունք, միջազգային հանրային իրավունք, իսկ անցյալում նաև՝ «ժողովուրդների իրավունք» *(jus gentium)*:

Տե՛ս նաև սովորութային իրավունք՝ միջազգային, միջազգային իրավունքի սուբյեկտ

միջազգային իրավունքի սուբյեկտ

(subject of international law)

Միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված և, հետևաբար, այդ իրավական հիմքով իրավունքներ ունեցող և միջազգային իրավունքով ամրագրված պարտավորություններ կրող սուբյեկտ: Ի սկզբանե, միջազգային իրավունքի միակ սուբյեկտները եղել են պետությունները: Միջազգային իրավունքի մյուս սուբյեկտները, հատկապես՝ միջազգային կազմակերպությունները և մասնավոր անձինք, սահմանվել են ժամանակի ընթացքում: Դրանց իրավասուբյեկտության շրջանակը փոփոխական է, սակայն այն միշտ էլ ավելի սահմանափակ է, քան պետություններինը:

Տե՛ս նաև միջազգային իրավունք (հանրային), միջազգային կազմակերպություն, պետություն

միջազգային մասնավոր իրավունք

(private international law)

Ներպետական իրավունքի ճյուղ, որը կարգավորում է օտար տարր պարունակող հարցերը, այսինքն՝ առնչվում է ներպետական համակարգից տարբեր իրավունքի որևէ այլ համակարգի հետ: Այն միջազգային հանրային իրավունքի ճյուղ չէ:

միջազգային միգրացիա

(international migration)

Այլ երկրում մշտապես կամ ժամանակավորապես հաստատվելու համար իրենց ծագման կամ սովորաբար բնակվելու երկիրը լքող անձանց տեղաշարժ: Այդ դեպքում, տեղի է ունենում միջազգային սահմանի հատում:

Տե՛ս նաև ներքին միգրացիա

միջազգային նվազագույն չափանիշներ

(international minimum standard)

Ուսմունք, որի համաձայն քաղաքացի չհանդիսացող անձինք օգտվում են միջազգային հանրային իրավունքով ուղղակիորեն սահմանված մի խումբ իրավունքներից՝ անկախ այն պետության կողմից ներքին կարգով սահմանված իրավունքներից, որտեղ այդ պահին գտնվում է քա-

ղաքացի չհանդիսացող անձը: Պետությունն իր տարածքում գտնվող քաղաքացի չհանդիսացող անձանց (կամ այդպիսի անձանց գույքի) նկատմամբ վերաբերմունքի հարցում պետք է պահպանի միջազգային իրավունքով սահմանված նվազագույն չափանիշները (օրինակ՝ արդարադատություն իրականացնելու մերժումը, դատարաններ դիմելու հնարավորության չհիմնավորված հետաձգումը կամ դրան խոչընդոտելը համարվում է միջազգային իրավունքով պահանջվող միջազգային նվազագույն չափանիշների խախտում): Որոշ դեպքերում, միջազգային նվազագույն չափանիշով երաշխավորվող պաշտպանության մակարդակը կարող է գերազանցել սեփական քաղաքացիների համար տվյալ պետության կողմից երաշխավորվող չափանիշը:

Տե՛ս նաև ներազգային վերաբերմունք, երկրից դուրս գալու իրավունք

միջազգային պաշտպանություն (international protection)

Տե՛ս դե ֆակտո պաշտպանություն, պաշտպանություն

միջազգային ջրեր (high seas)

Ջրային բոլոր այն տարածքները, որոնք ներառված չեն բացառիկ տնտեսական գոտում, հարակից գոտում, պետության տարածքային կամ ներքին ջրերում կամ արշիպելագ–պետության արշիպելագային ջրերում: Օվկիանոսային տարածքները միջազգային ջրերի հասկացության համատեքստում դիտարկվելիս չեն գտնվում որևէ պետության տարածքային ինքնիշխանության տակ: Միջազգային ջրերում իրականացվող հսկողությունը ներառում է հսկողության այն տեսակները, որոնք դրոշի պետության կողմից կիրառվում են նավի վրա, կամ այն տեսակները, որոնք կիրառվում են միջազգային ծովերում արգելված գործողությունների դեմ պայքարելու համար (ստրուկների տեղափոխում, մարդկանց թրաֆիքինգ, ծովահենություն, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի թրաֆիքինգ և «տաք» հետքերով հետապնդում, մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխում):

Տե՛ս նաև հարակից գոտի, դրոշի պետություն, իմիգրացիոն (ներգաղթային) գոտի, տարածքային ջրեր

միջազգային օդանավակայան **(international airport)**	Պետության կողմից նախատեսված օդանավակայան, որը տեղակայված է այդ պետության տարածքում՝ միջազգային օդային երթևեկության նպատակով մուտք ու ելք ապահովելու համար, որտեղ իրականացվում են մաքսային ձևակերպումներ, իմիգրացիոն [ներգաղթային], հանրային առողջությանը, կենդանիների և բույսերի կարանտինին առնչվող և նմանատիպ ընթացակարգեր *(«Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» 1944 թվականի կոնվենցիային կից 9–րդ հավելված)*:
միջոցների առգրավում **(assets forfeiture)**	Գույքը պետության կողմից վերցնելը դա՝ հանցավոր նպատակներով օգտագործվելու կամ դրա սեփականատիրոջ՝ հանցավոր գործունեության մեջ ներգրավված լինելու հիմքով, ինչպես օրինակ՝ տվյալ պետություն մարդկանց մաքսանենգ ճանապարհով տեղափոխման կամ թրաֆիքինգի համար օգտագործված տրանսպորտային միջոցի վրա կալանք դնելը: *Տե՛ս նաև մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխում, մարդկանց թրաֆիքինգ*
միջպետական որդեգրում **(inter-country adoption)**	*Տե՛ս երեխայի որդեգրում (միջազգային)*
միջսահմանային միգրացիա **(cross-border migration)**	Միջազգային սահմաններով իրականացվող մարդկանց տեղաշարժի գործընթացը:
մշակութային կողմնորոշում **(cultural orientation)**	Միգրանտներին տրամադրվող ուսումնական դասընթացներ, որոնց նպատակը հյուրընկալող երկրի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելն է, որոնք էլ կարող են վերաբերել այդ երկրի պատմությանը, աշխարհագրությանը, լեզվին: *Տե՛ս նաև մշակույթ, ինտեգրում*
մշակույթ **(culture)**	Այս տերմինն օգտագործվում է որևէ սոցիալական խմբի կազմակերպման առանձնահատկությունների, այլ խմբերի հետ իր հարաբերություններում տվյալ խմբի կողմից ընտրվող արժեքների նկարագրության համար: Այն կարող է վերաբերել նաև սովորույթների, համոզմունքների, լեզվի, գաղափարների, գեղագիտական ընկալումների, տեխնիկական գիտելիքների, արժեքային համակարգի և ապրելակերպի ամբողջությանը: *Տե՛ս նաև ակկուլտուրացիա (համամշակութավորում), մշակութային կողմնորոշում*

մշտական բնակության (կացության) կարգավիճակ ունեցող անձ

(permanent resident)

Հյուրընկալող պետությունում մշտական բնակության իրավունքից օգտվող՝ քաղաքացի չհանդիսացող անձ:

Տե՛ս նաև երկարաժամկետ միգրանտ

մշտական բնակություն

(permanent residence)

Քաղաքացի չհանդիսացող անձին հյուրընկալող պետության համապատասխան մարմինների կողմից տրված իրավունք այդ երկրում մշտական հիմունքներով (անսահմանափակ կամ անորոշ ժամկետով) ապրելու և աշխատելու համար:

մշտական բնակություն հաստատող անձինք

(permanent settlers)

Օրինական կարգով ընդունված իմիգրանտներ (ներգաղթողներ), որոնց բնակություն հաստատելու փաստն ընդունվում է ընդունող պետության կողմից, այդ թվում՝ ընտանիքի վերամիացման նպատակով ընդունված անձինք:

Տե՛ս նաև ծագման հիմքով բնակություն հաստատող անձինք, երկարաժամկետ միգրանտ, կարճաժամկետ միգրանտ, այցելու

մոլորեցում

(deception)

Միգրացիայի համատեքստում այս տերմինը վերաբերում է ոչ միայն կեղծ կամ սխալ տեղեկություններին, այլ նաև, միգրանտների համար հասանելի տեղեկությունների բացակայությունից օգտվելով, դիտավորյալ չարաշահման դեպքերին:

Տե՛ս նաև խարդախություն, կեղծ փաստաթուղթ, մարդկանց թրաֆիքինգ

մուտք

(entry)

Քաղաքացի չհանդիսացող անձի մուտքը օտար երկիր՝ կամավոր կամ ոչ կամավոր, թույլատրված կամ չթույլատրված:

Տե՛ս նաև ընդունում, չընդունելը

մուտքի անցակետ

(point of entry)

Տե՛ս անցակետ

մուտքի արգելք

(entry ban)

Վարչական կամ դատական որոշում, որով սահմանված ժամկետով արգելվում է մուտքը և գտնվելն այն պետության տարածքում, որտեղ կայացվել է որոշումը:

մուտքի կնիք

(entry stamp)

Սահմանային ծառայությունների պաշտոնատար անձի կողմից անձի ճամփորդական փաստաթղթում դրված նշան, որով նշվում է անձի կողմից պետություն մուտք գործելու ամսաթիվը և վայրը:

Տե՛ս նաև ելքի կնիք

Ն

նավաստի
(seafarer)

Միգրացիայի համատեքստում՝ այս տերմինը վերաբերում է այն պետությունում գրանցված ջրային փոխադրամիջոցի վրա աշխատող միգրանտին, որի քաղաքացին չէ նա (ներառում է լցանավերի վրա աշխատողներին)։ («Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(2)(գ) հոդված)։

Տե՛ս նաև միգրանտ աշխատող

ներազգային վերաբերմունք
(national treatment)

Ըստ այս չափանիշի՝ քաղաքացի չհանդիսացող անձը չի կարող ակնկալել ավելի լավ իրավական պաշտպանություն, քան այն, որը հյուրընկալող պետությունն ապահովում է իր քաղաքացիների համար։ Այնուամենայնիվ, ազգային չափանիշը չի կարող օգտագործվել որպես միջոց՝ միջազգային իրավունքի նվազագույն չափանիշով սահմանված միջազգային պարտավորություններից խուսափելու համար։

Տե՛ս նաև միջազգային նվազագույն չափանիշ

ներառում
(inclusion)

Գործընթաց, որը նախատեսված է տվյալ համայնքի կամ հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքին բոլորի լիարժեք մասնակցությունը թույլատրելու և ապահովելու համար։ Թեև չկա ընդհանուր համաձայնեցված որևէ սահմանում, այնուամենայնիվ, ներառող հասարակության գաղափարը հիմնված է մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի, մշակութային ու կրոնական բազմազանության, սոցիալական արդարության և խոցելի ու անապահով վիճակում գտնվող խմբերի հատուկ կարիքների, ժողովրդավարական մասնակցության և իրավունքի գերակայության վրա *(4–րդ գլխի 66–րդ կետ, ՄԱԿ–ի 1995 թվականի սոցիալական զարգացման գագաթաժողով)*։

Տե՛ս նաև ասիմիլյացիա [համաձուլում], ինտեգրում

ներհոսք
(influx)

Մեծ թվով՝ քաղաքացի չհանդիսացող անձանց անսպասելի ժամանումը որևէ երկիր։

Տե՛ս նաև զանգվածային/կոլեկտիվ միգրացիա

ներկորպորատիվ ցանցում փոխադրվող աշխատակից **(intra-corporate transferee)**	Ընկերության աշխատակից, ով ժամանակավորապես տեղափոխվում է այդ ընկերության փոխկապակցված օտարերկրյա ընկերություն (մասնաճյուղ, դուստր ընկերություն, գրասենյակ, համատեղ ձեռնարկություն և այլն):
ներքին միգրացիա **(internal migration)**	Մարդկանց տեղաշարժը երկրի մի տարածքից մյուսը՝ նոր բնակություն հաստատելու նպատակով կամ հետևանքներով: Այդպիսի միգրացիան կարող է լինել ժամանակավոր կամ մշտական: Ներքին միգրանտները տեղաշարժվում են, սակայն մնում են իրենց ծագման երկրում (օրինակ՝ գյուղից քաղաք միգրացիա): *Տե՛ս նաև դե ֆակտո փախստականներ, սովորաբար բնակվելու վայր, ներքին տեղահանման ենթարկված անձինք, միջազգային միգրացիա, գյուղից գյուղ տեղաշարժվող միգրանտներ, գյուղից քաղաք տեղաշարժվող միգրանտներ, քաղաքից գյուղ տեղաշարժվող միգրանտներ, քաղաքից քաղաք տեղաշարժվող միգրանտներ*
ներքին տեղահանման ենթարկված անձինք/ՆՏԵԱ–ներ **(internally displaced persons/ IDPs)**	Այն անձինք կամ անձանց խմբերը, որոնք հարկադրված կամ պարտավորված փախչել կամ լքել են իրենց տները կամ սովորաբար բնակվելու վայրերը, մասնավորապես՝ զինված ընդհարումների, համատարած բռնության իրավիճակների, մարդու իրավունքների խախտումների կամ բնական կամ մարդածին աղետների պատճառով կամ դրանց հետևանքներից խուսափելու համար, և որոնք չեն հատել միջազգայնորեն ճանաչված որևէ պետական սահման: *(Ներքին տեղահանման վերաբերյալ ուղղորդող սկզբունքներ, ՄԱԿ–ի փաստաթուղթ E/CN.4/1998/53/Add.2.)* *Տե՛ս նաև դե ֆակտո փախստականներ, տեղահանված անձ, արտաքին տեղահանման ենթարկված անձ, արմատներից կտրված մարդիկ*
նպատակակետ երկիր **(country of destination)**	Երկիր, որը միգրացիոն հոսքերի (կանոնավոր կամ անկանոն) վերջնակետն է: *Տե՛ս նաև հյուրընկալող երկիր, ընդունող երկիր, երրորդ երկիր*
նվազագույն չափանիշ **(minimum standard)**	*Տե՛ս միջազգային նվազագույն չափանիշ*

Շ

շահագործում (exploitation)

Որևէ բան կամ որևէ մեկին սեփական շահերին ծառայեցնելը, մասնավորապես որևէ մեկին սեփական շահերի համար անարդարացիորեն օգտագործելու գործողությունը (օրինակ՝ սեռական շահագործում, հարկադիր աշխատանք կամ ծառայություններ, ստրկություն կամ ստրկությանը նմանվող վիճակ, անազատ վիճակ կամ օրգանների հեռացում)։

Տե՛ս նաև կախյալ վիճակ ենթադրող աշխատանք, երեխայի շահագործում, պարտքի պատճառով կախվածություն, հարկադիր աշխատանք, անազատ վիճակ, ստրկություն, (մարդկանց) թրաֆիքինգ իրականացնող անձ, մարդկանց թրաֆիքինգ

շեղում (derogation)

Որոշակի իրավիճակներում իրավունքների սահմանափակում կամ կասեցում։ Օրինակ՝ *«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի* միջազգային դաշնագրով պետությանը թույլատրվում է շեղում կատարել դաշնագրով ստանձնած որոշակի պարտավորություններից «արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես»։ Դաշնագրի մասնակից պետությունները «կարող են ձեռնարկել միջոցներ՝ շեղում կատարելով սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորություններից այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը՝ պայմանով, որ այդ միջոցները չեն հակասում միջազգային իրավունքով սահմանված իրենց մյուս պարտավորություններին և չեն առաջացնում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով»։ Շեղումը վերաբերում է նաև օրենքը հետագա իրավական ակտով մասնակիորեն ուժը կորցրած ճանաչելու կամ չեղյալ հայտարարելու դեպքերին, որով սահմանափակվում է դրա կարգավորման ոլորտը կամ նվազեցվում է արդյունավետությունն ու գործողությունը։

Տե՛ս նաև մարդու իրավունքներ, մարդու անքակտելի իրավունքներ

Շենգենյան համաձայնագիր և կոնվենցիա

(Schengen Agreement and Convention)

1985 թվականի հունիսի 14–ին ստորագրված Շենգենյան համաձայնագրով Բելգիան, Ֆրանսիան, Գերմանիան, Լյուքսեմբուրգը և Նիդեռլանդները համաձայնել են աստիճանաբար վերացնել ընդհանուր սահմաններում իրականացվող հսկողությունը և ստորագրող անդամ պետությունների, մյուս անդամ պետությունների կամ երրորդ երկրների բոլոր քաղաքացիների համար ներդնել ազատ տեղաշարժվելու ռեժիմ: Շենգենյան կոնվենցիայով լրացում է կատարվում Համաձայնագրում, և սահմանվում են տեղաշարժվելու ազատության իրականացման կարգավորումներն ու երաշխիքները: Համաձայնագիրը և կոնվենցիան, դրանց հիման վրա ընդունված կանոններն ու հարակից համաձայնագրերը միասին կազմում են «Շենգենյան կանոնագիրքը (Schengen acquis)»: 1999 թվականից ի վեր՝ Ամստերդամի պայմանագրի արձանագրության ուժով՝ այն կազմում է Եվրոպական միության ինստիտուցիոնալ և իրավական դաշտի բաղադրիչներից մեկը:

Տե՛ս նաև Դուբլինի II կանոնակարգ

շրջանառու միգրացիա

(circular migration)

Երկրների միջև մարդկանց սահուն՝ ներառյալ ժամանակավոր կամ երկարաժամկետ տեղաշարժը, որը կարող է շահավետ լինել բոլոր ներգրավվածների համար, եթե այն կամավոր է և կապված է ծագման ու նպատակակետ երկրների աշխատանքային կարիքների հետ:

Տե՛ս նաև աշխատանքային միգրացիա

շրջիկ աշխատող

(itinerant worker)

Միգրանտ աշխատող, ում սովորաբար բնակվելու վայրը գտնվում է մի պետությունում, իր աշխատանքի բնույթից ելնելով, ստիպված է կարճ ժամանակով տեղափոխվել մեկ կամ մի քանի պետություններ *(«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(2)(է) հոդված)*:

Տե՛ս նաև սահմանակից պետությունում աշխատող, միգրանտ աշխատող

շրջիկ փախստականներ

(refugees in orbit)

Փախստականներ, որոնք չնայած ուղղակիորեն չեն վերադարձվում այն երկիր, որտեղ կարող են հետապնդման ենթարկվել, բայց որոնց մերժում են ապաստանի տրամադրումը, կամ որոնք չեն կարող գտնել որևէ պետություն, որը կցանկանա քննության առնել իրենց ապաստանի հայցը, և տեղաշարժվում են մի երկրից մյուսը՝ ապաստան որոնելիս:

Տե՛ս նաև ապաստան, փախստական

Ո

ոչ կամավոր հայրենադարձություն

(involuntary repatriation)

Փախստականների, ռազմագերիների ու պահվող քաղաքացիական բնակչության վերադարձը իրենց ծագման պետության տարածք՝ պայմանավորված այլընտրանքային լուծման հնարավորություն չընձեռող հանգամանքների առաջացմամբ: Հայրենադարձությունը անձի իրավունքն է (ի տարբերություն արտաքսման և վտարման, որոնք ի սկզբանե գտնվում են պետության ինքնիշխանության ներքո), որպես այդպիսին ո՛չ քաղաքացիության պատկանելիության պետության և ո՛չ էլ ժամանակավոր բնակության վայրի պետության կամ արգելանքի տակ պահելու իրավասություն ունեցող մարմինների կողմից իրավասու անձին՝ լինի փախստական կամ ռազմագերի, կամ էլ պահվող քաղաքացիական բնակչության ներկայացուցիչ, իր կամքին հակառակ հայրենադարձությանը հարկադրելը չի արդարացվում: Ժամանակակից միջազգային իրավունքին համապատասխան՝ ռազմագերիները, պահվող քաղաքացիական բնակչությունը կամ փախստականները, որոնք հրաժարվում են հայրենադարձությունից՝ հատկապես իրենց սեփական երկրում քաղաքական հետապնդման զոհ դառնալու երկյուղի շարժառիթով, պետք է ստանան անձին վերադարձնելու թույլատրելիությունից պաշտպանություն, հնարավորության դեպքում նաև՝ ժամանակավոր կամ մշտական ապաստան:

Տե՛ս նաև վտարում, արտաքսում, հարկադիր վերադարձ, անձին վերադարձնելու թույլատրելիություն, հայրենադարձություն, վերադարձ, կամավոր հայրենադարձություն, կամավոր վերադարձ

ոչ վարձու միգրանտ աշխատող

(self-employed migrant worker)

«Միգրանտ աշխատող, ով զբաղվում է վարձատրվող գործունեությամբ՝ ոչ աշխատանքային պայմանագրի շրջանակներում, և ով այդպիսի գործունեության միջոցով հոգում է իր ապրուստը՝ սովորաբար աշխատելով առանձին կամ իր ընտանիքի անդամների հետ միասին, ինչպես նաև ցանկացած այլ միգրանտ աշխատող, ով ճանաչվել է որպես ոչ վարձու աշխատող անձ՝ աշխատանք տրամադրող պետության գործող օրենսդրության համաձայն կամ ըստ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի» («Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանու-

թյան վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(2)(ը) հոդված):

Տե՛ս նաև միգրանտ աշխատող

որբ երեխա

(orphan)

Երեխա, որի ծնողները համարվում են մահացած: Որոշ երկրներում միակողմանի ծնողազուրկ երեխան կոչվում է որբ երեխա:

Տե՛ս նաև երեխա

որդեգրում

(adoption)

Օրենքով սահմանված գործընթաց, որով դադարեցվում են երեխայի և նրա կենսաբանական ծնողների միջև իրավունքներն ու պարտականությունները, որոնք էլ փոխարինվում են երեխայի ու որդեգրող ծնողների միջև նմանատիպ իրավունքներով ու պարտականություններով:

Տե՛ս երեխայի որդեգրում (միջազգային)

որոշակի սոցիալական խմբի պատկանելը

(membership of a particular social group)

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայով նախատեսված՝ փախստականի սահմանման հիմքերից մեկը վերաբերում է մի խմբի, որը բաղկացած է այն անձանցից, ովքեր ունեն հետապնդման զոհ դառնալու վտանգից տարբեր ընդհանուր մեկ այլ հատկանիշ, կամ հասարակության կողմից ընկալվում են որպես խումբ: Այդ հատկանիշը հաճախ կարող է լինել ներհատուկ, անփոփոխելի, կամ ինքնության կամ խղճի համար որևէ այլ կերպ հիմնարար նշանակություն ունեցող:

Տե՛ս նաև փախստական

որոշում

(adjudication, determination)

Միգրացիայի համատեքստում՝ որոշում այն մասին, թե արդյոք դիմողն իրավունք ունի ստանալու վիզա, փախստականի կարգավիճակ կամ իր կողմից հայցվող իմիգրացիոն (ներգաղթային) այլ կարգավիճակ:

որոշում կայացնող

(adjudicator)

Միգրացիայի համատեքստում՝ անձ, որն օրենքով լիազորված է կայացնելու որոշումներ այն մասին, թե արդյոք դիմողն իրավունք ունի ստանալու վիզա, փախստականի կարգավիճակ կամ նրա կողմից հայցվող իմիգրացիոն (ներգաղթային) այլ կարգավիճակ:

Տե՛ս նաև հարցազրույց

Չ

չեզոք գոտի

(neutralized zones)

Միջազգային բնույթի զինված ընդհարման համատեքստում՝ փաստացի մարտական գործողությունների գոտում առանձնացված տարածքներ՝ նախատեսված վիրավոր և հիվանդ մարտիկներին (կոմբատանտ) և ոչ մարտիկներին, ինչպես նաև այդ տարածքում գտնվող և ռազմական գործողություններին չմասնակցող քաղաքացիական բնակչության բոլոր անդամներին՝ շրջակայքում ընթացող ռազմական գործողություններից պաշտպանելու համար:

Տե՛ս նաև ապահով հանգրվան, խոցելի խումբ

չեզոքություն

(neutrality)

Պետության այնպիսի վիճակ, երբ զինված ընդհարման ժամանակ այն մասնակցություն չի ունենում վեճին, բայց շարունակում է խաղաղ բանակցություններ վարել հակամարտության կողմերի հետ:

Տե՛ս նաև զինված ընդհարում

չընդունելը

(non-admission)

Պետության կողմից իր տարածք մուտք գործելու թույլտվություն տալը մերժելը:

Տե՛ս նաև ընդունում, մուտք

չթույլատրված/ապօրինի մուտք/ընդունում

(unauthorized/unlawful entry/admission)

«Սահմանների հատումն առանց ընդունող պետություն օրինական մուտքի համար անհրաժեշտ պահանջների պահպանման» (*«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող՝ «Յամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» ՄԱԿ-ի 2000 թվականի արձանագրության 3(բ) հոդված*):

Տե՛ս անօրինական մուտք, անկանոն միգրացիա, փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ

Պ

Պալերմոյի արձանագրություններ (Palermo Protocols)

«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի (2000 թվական) լրացուցիչ արձանագրություններ. *«Յամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» 2000 թվականի արձանագրություն, «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, արգելման և պատժելու մասին» 2000 թվականի արձանագրություն, և «Հրազենի, ռազմամթերքի և հարակից նյութերի անօրինական արտադրության և շրջանառության դեմ» 2001 թվականի արձանագրություն։*

Տե՛ս նաև մաքսանենգ ճանապարհով տեղափոխում, մարդկանց թրաֆիքինգ

պահվող քաղաքացիական բնակչություն (civil detainees)

Միջազգային բնույթի զինված ընդհարումների ժամանակ գործող իրավունքում՝ պաշտպանության տակ գտնվող անձինք կամ, երբեմն, չեզոք քաղաքացիական անձինք, որոնք, անվտանգության առաջնային անհրաժեշտության նկատառումներով, կալանքի տակ են պահվում հակամարտության կողմ հանդիսացող պետության կողմից։

Տե՛ս նաև զինված ընդհարումների *ժամանակ գործող իրավունք (միջազգային), պաշտպանության տակ գտնվող անձինք*

պայմանագիր (treaty)

«Պետությունների միջև գրավոր կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնագիր՝ անկախ այն հանգամանքից, թե այն ներառված է մեկ կամ երկու, կամ միմյանց հետ կապված մի քանի փաստաթղթերում, ինչպես նաև անկախ դրա կոնկրետ անվանումից» (*«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 2.1(1)(ա) հոդված*)։

Տե՛ս նաև միացում, պայմանավորություն, համաձայնագիր/համաձայնություն, երկկողմ, աշխատանքային միգրացիայի մասին երկկողմ համաձայնագրեր, կոնվենցիա, փաստաթղթային գործիք, բազմակողմ, վավերացում, վերապահում պայմանագրի դրույթներից

պայմանագրային աշխատանք (contractual labour)

Պայմանադիր կողմի միջոցով՝ ամրագրված ժամանակահատվածում կոնկրետ նպատակի համար տրամադրվող աշխատանք։

պայմանավորություն (accord)

Ընդհանուր իմաստով՝ դիրքորոշումների համընկնում։ Միջազգային հանրային իրավունքում այս տերմինն օգտագործվում է որպես պայմանագրի և կոնվենցիայի հոմանիշ։

Տե՛ս նաև համաձայնագիր/համաձայնություն, կոնվենցիա, դաշնագիր, փաստաթղթային գործիք, պայմանագիր

պաշտպանյալ (defendant)

Անձ, որը քաղաքացիական դատավարությունում հանդես է գալիս որպես պատասխանող, իսկ քրեական դատավարությունում՝ որպես մեղադրյալ։

պաշտպանության տակ գտնվող անձինք (protected persons)

Զինված ընդհարման ժամանակ այն քաղաքացիները, ովքեր թշնամի պետության մարտիկները չեն, սակայն գտնվում են պատերազմող պետության տարածքում կամ այդպիսի պետության կողմից օկուպացված տարածքում։ Պաշտպանության տակ գտնվող անձինք այդ տարածքը լքելու իրավունք ունեն, քանի դեռ նրանց մեկնումը չի հակասում պատերազմող պետության ազգային շահերին։ Պատերազմող պետություններն իրավասու են, անվտանգության նկատառումներով, սահմանափակելու պաշտպանության տակ գտնվող անձանց տեղաշարժվելու ազատությունն այնպիսի միջոցներ սահմանելու միջոցով, ինչպիսիք են օրինակ՝ հիմնական բնակության վայրի փոփոխությունն արգելելը, որոշակի գոտիներ մուտք գործելն արգելելը, ինչպես նաև որոշակի հանգամանքներում ճանապարհորդելն արգելելը, տնային կալանք և ներկալում նախատեսող միջոցները։

Տե՛ս նաև պահվող քաղաքացիական բնակչություն, տեղաշարժվելու ազատություն, զինված ընդհարումների ժամանակ գործող իրավունք (միջազգային)

պաշտպանություն (protection)

««Պաշտպանություն» հասկացության մեջ ներառված են անհատի իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանքն ապահովող բոլոր գործողությունները՝ իրավունքի համապատասխան ճյուղերի տառին ու ոգուն համապատասխան, այսինքն՝ մարդու իրավունքների ոլորտում գործող իրավունք, միջազգային մարդասիրական իրավունք և փախստականների իրավունք։
Մարդու իրավունքների հարցերով կազմակերպությունները և մարդասիրական կազմակերպությունները պետք է իրականացնեն այդ գործողություններն անաչառորեն (բայց ոչ ռասայական, ազգային կամ էթնիկական ծագման, լեզվի կամ սեռի հիմքով)» (Միջգերատեսչական մշտական կոմիտե)։ Կազմակերպության կողմից որևէ անձին կամ

խմբին տրամադրված պաշտպանություն՝ կամ միջազգային փաստաթղթային գործիքներով վերապահված մանդատին համապատասխան՝ միջազգային սովորութային իրավունքի կիրառմամբ, կամ էլ կազմակերպության գործողություններով վերապահված մանդատին համապատասխան: Այդպիսի պաշտպանության նպատակն է ապահովել հարգանքն այն իրավունքների նկատմամբ, որոնք սահմանված են *«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայով, Ժնևի 1949 թվականի կոնվենցիաներով և 1977 թվականի արձանագրություններով,* ինչպես նաև պահպանել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նախաձեռնության իրավունքը, ապահովել Միգրացիայի միջազգային կազմակերպության, Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներով, մարդու իրավունքները կարգավորող փաստաթղթային գործիքներով նախատեսված դե ֆակտո պաշտպանությունը:

Տե՛ս նաև լրացուցիչ պաշտպանություն, դե ֆակտո պաշտպանություն, լիազորում, մարդու անվտանգություն

պատասխանող (respondent)

Անձ, որից պահանջվում է պատասխանել քաղաքացիական հայցով ներկայացված բողոքին:

Տե՛ս նաև պաշտպանյալ, հայցվոր

պատերազմական հանցագործություններ (war crimes)

Պատերազմական հանցագործություններ են համարվում պատերազմի օրենքների կամ սովորույթների խախտումները: Այդ հանցագործությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում Ժնևի 1949 թվականի կոնվենցիաների դրույթների ծանր խախտումներով՝ ներառյալ կանխամտածված սպանությունը, խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը, այն անձանց ապօրինի կալանքը կամ վտարումը, որոնք այլևս չեն մասնակցում ռազմական գործողություններին, ինչպես նաև *Ժնևի 1949 թվականի* չորս կոնվենցիայով պաշտպանվող ունեցվածքի կործանումն ու յուրացումը: Պատերազմական հանցագործություններ կարող են կատարվել քաղաքացիական կամ ռազմական անձնակազմերի կողմից:

Տե՛ս նաև հանցագործություններ՝ միջազգային, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ, բացառման մասին դրույթներ, *համընդհանուր իրավազորություն*

պատժամիջոց (penalty)

Պատիժ։ Միգրացիայի համատեքստում՝ պատժամիջոցը սովորաբար ենթադրում է տուգանք, սակայն կարող է լինել նաև հետագա մուտքի արգելք։

պատշաճ ընթացակարգ (due process)

Իրավական ընթացակարգերի իրականացումը համընդհանուր ճանաչում գտած կանոններով և մասնավոր իրավունքների, այդ թվում՝ ծանուցման իրավունքի և դատարանում կամ գործը լուծելու լիազորություն ունեցող վարչական մարմնում արդար քննության իրավունքի պաշտպանությունն ու իրականացումն ապահովող սկզբունքներով։

Տե՛ս նաև արդար դատաքննություն

պարտավորավճար (bond)

Միգրացիայի համատեքստում՝ պետության կողմից գանձվող դրամական գումար՝ որպես ապահովում քաղաքացի չհանդիսացող անձի կողմից անհրաժեշտ գործողությունը կատարելուն, որպես կանոն՝ պետությունից դուրս գալուն։ Մեկնման պարտավորավճար կարող է գանձվել վիզա տրամադրելիս կամ մուտք գործելիս։ Որպես պարտավորավճար պահվող դրամական միջոցները սովորաբար վերադարձվում են մեկնման մասին ապացույցի հիման վրա, ինչպես օրինակ, երբ անձն այցելում է իր հայրենի երկրում գտնվող տվյալ պետության հյուպատոսարան։ Պարտավորավճար կարող է վճարվել նաև կալանքից ազատվելու համար։

Տե՛ս նաև երաշխիք

պարտքի պատճառով կախվածություն (debt bondage)

Կարգավիճակ կամ դրություն, որն առաջանում է պարտապանի կողմից իր անձնական ծառայությունը կամ իր հսկողության տակ գտնվող անձի ծառայությունը՝ որպես պարտքի մարման երաշխիք գրավադրելուց, եթե այդ ծառայությունների արժեքը, ողջամտորեն գնահատվելով, չի օգտագործվում պարտքը մարելու համար, կամ այդ ծառայությունների սահմանները և բնույթը, համապատասխանաբար, չեն սահմանափակվում և որոշված չեն *(«Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը համանման սովորույթների և ինստիտուտների վերացման մասին» ՄԱԿ-ի 1956 թվականի լրացուցիչ կոնվենցիայի 1(ա) հոդված։)*

Տե՛ս նաև կախյալ վիճակ, կախյալ վիճակ ենթադրող աշխատանք, շահագործում, անազատ վիճակ, ստրկություն, թրաֆիքինգ, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր

պետություն
(State)

Քաղաքական միավոր, որը սահմանված տարածքի նկատմամբ ունի օրինական իրավազորություն և իրականացնում է արդյունավետ հսկողություն, ինչպես նաև ունի մշտական բնակչության համար կոլեկտիվ որոշումներ կայացնելու իրավասություն. իրավաչափ ուժ կիրառելու մենաշնորհ և միջազգայնորեն ճանաչված կառավարություն, որը փոխգործակցում է կամ օժտված է փոխգործակցելու կարողությամբ՝ այլ միավորների հետ պաշտոնական հարաբերություններում: Պետականության չափորոշիչը միջազգային իրավունքի նպատակներով սովորաբար ընկալվում է որպես մշտական բնակչություն, սահմանված տարածք, կառավարություն ունենալու և այլ պետությունների հետ միջազգային հարաբերություններ հաստատելու կարողությունը: («Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» Մոնտեվիդեոյի 1933 թվականի կոնվենցիայի 1–ին հոդված):

Տե՛ս նաև ինքնիշխանություն, միջազգային իրավունքի սուբյեկտ

Ջ

ջրային փոխադրամիջոց (vessel)

Ընդհանուր իմաստով՝ ««ջրային փոխադրամիջոց» բառն ընդգրկում է լողացող միջոցների բոլոր տեսակները՝ ներառյալ ոչ ջրատար տեսակի նավերը և հիդրոինքնաթիռները, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես ջրի վրայով փոխադրման միջոց» *(«Ծովում գտնվող նավերի բախումը կանխարգելող միջազգային կանոնների մասին» 1972 թվականի կոնվենցիայի 3–րդ նորմ)*:

Այս ընդհանուր սահմանմանը զուգահեռ՝ միջազգային կոնվենցիաներում առաջարկվում են շատ տարբեր սահմանումներ՝ կախված տվյալ կոնվենցիայի նպատակից: «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» 2000 թվականի արձանագրության 3(դ) հոդվածի համաձայն՝ «ջրային փոխադրամիջոց» նշանակում է. «ցանկացած տեսակի լողացող միջոցներ՝ ներառյալ ոչ ջրատար տեսակի նավերը և հիդրոինքնաթիռները, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես ջրի վրայով փոխադրման միջոց, բացառությամբ ռազմանավերի, օժանդակ ռազմածովային նավերի կամ այլ նավերի, որոնք պատկանում են պետությանը կամ շահագործվում են նրա կողմից և համապատասխան պահին օգտագործվում են միայն պետական ոչ առևտրային ծառայության մեջ»:

Տե՛ս նաև դրոշի պետություն, միջազգային ջրեր, փրկարարական աշխատանքներ ծովում

Ռ

ռասա

(race)

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայով սահմանված՝ փախստականի կարգավիճակի համար հիմքերից մեկն է. «ռասան» ընկալվում է իր ամենալայն իմաստով՝ ներառելով էթնիկ խմբերի այն բոլոր տեսակները, որոնք սովորական գործածության մեջ վկայակոչվում են որպես «ռասաներ»։

Տե՛ս նաև ռասիզմ, փախստական, այլատյացություն

ռասայական խտրականություն

(racial discrimination)

Ռասայական խտրականությունը նշանակում է. «ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, դրանցից հավասար հիմունքներով օգտվելը կամ դրանց իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների» (*«Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 1965 թվականի միջազգային կոնվենցիայի 1(1) հոդված*)։

Տե՛ս նաև խտրականություն, ռասիզմ, այլատյացություն

ռասիզմ

(racism)

Գաղափարախոսական հայեցակարգ, համաձայն որի, որոշակի ռասային և (կամ) էթնիկական խմբերին, ելնելով նրանց ֆիզիկական և մշակութային առանձնահատկություններից, վերագրվում է մյուսների նկատմամբ գերիշխող դիրք, ինչպես նաև տնտեսական գերակայություն և մյուսների նկատմամբ հսկողություն իրականացնելու հնարավորություն։ Ռասիզմը կարող է սահմանվել որպես ուսմունք կամ համոզմունք ռասայական գերակայության մասին։ Դա ներառում է այն համոզմունքը, որ ռասայական պատկանելությամբ որոշվում են մտավոր կարողությունները, մշակութային հատկանիշները և բարոյական կեցվածքը։

Տե՛ս նաև ռասայական խտրականություն, այլատյացություն

ռեէմիգրացիա (վերարտագաղթ)

(re-emigration)

Այն անձի տեղաշարժը, որն իր ծագման երկիր վերադառնալուց հետո, նորից արտագաղթում է։

Տե՛ս նաև էմիգրացիա (արտագաղթ), վերադարձ

Ս

սահման

(border, boundary, frontier)

Երկու պետությունների ցամաքային տարածքները կամ ծովային գոտիները կամ պետության առանձին մասերն իրարից առանձնացնող գիծ։ Այն կարող է վերաբերել նաև բնակեցված և զարգացած տարածքի եզրամասում հիմնադրված շրջանին։

Տե՛ս նաև «կանաչ սահման»

սահմանադրություն

(constitution)

Պետության հիմնարար և ելակետային օրենքը, որով ամրագրվում են դրա հասկացությունը, բնույթը, դրա կառավարման կազմակերպումը, ինչպես նաև սահմանվում են պետության ինքնիշխանության սահմանները և դրա իրականացման ձևերը։ Միջազգային հանրային իրավունքում այն նշանակում է միջազգային կազմակերպություն հիմնադրող և նրա իրավասության ու գործունեության շրջանակները սահմանող պայմանագիր։

սահմանակից պետությունում աշխատող

(frontier worker)

Միգրանտ աշխատող, ով պահպանում է իր սովորաբար բնակվելու վայրը հարևան երկրում, ուր նա սովորաբար վերադառնում է ամեն օր կամ առնվազն շաբաթը մեկ անգամ *(«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(2)(ա) հոդված)*։

Տե՛ս նաև տնտեսական միգրանտ, շրջիկ աշխատող, միգրանտ աշխատող

սահմանային հսկողություն

(border control)

Իր տարածք անձանց մուտքի և իր տարածքից անձանց մեկնման կարգավորումը պետության կողմից՝ իր ինքնիշխանության իրականացման նպատակով՝ անկախ այդ կարգավորումը ֆիզիկական սահմանի վրա կամ տարածքից դուրս՝ դեսպանատանը կամ հյուպատոսարանում իրականացնելու հանգամանքից։

Տե՛ս նաև սահմանների կառավարում, սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձինք, անցակետ, ինքնիշխանություն

սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձինք

(border officials)

Ընդհանրացված տերմին, որով բնութագրվում են այն ծառայողները, որոնց առաջնային խնդիրը սահմանի պահպանությունն է ու պետության՝ իմիգրացիայի [ներգաղթի] վերաբերյալ (հավանաբար նաև մաքսային) օրենսդրության կիրարկումը: Օգտագործվում են նաև «սահմանապահներ», «սահմանային ոստիկանություն» կամ «օտարերկրյա անձանց/հպատակների հարցերով ոստիկանություն» տերմինները:

Տե՛ս նաև ընդունում, սահմանային հսկողություն, սահմանների կառավարում, անցակետ, չընդունելը

սահմանի հատում

(border crossing)

Սահմանը հատելու ֆիզիկական գործողությունը՝ սահմանված անցակետում կամ սահմանի վրա գտնվող այլ վայրում:

Տե՛ս նաև սահման, սահմանային հսկողություն, սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձինք, անցակետ

սահմանների կառավարում

(border management)

Անձանց՝ ներառյալ գործարարների, զբոսաշրջիկների, միգրանտների և փախստականների՝ թույլատրված ներհոսքերի դյուրացումը, ինչպես նաև քաղաքացի չհանդիսացող անձանց՝ տվյալ երկիր անկանոն կարգավիճակով իրականացվող մուտքերի կանխարգելումը: Սահմանների կառավարման միջոցները ներառում են պետությունների կողմից վիզայի տրամադրման պահանջների սահմանում, համապատասխան երկրի տարածք անկանոն կարգավիճակով միգրանտներ բերող՝ փոխադրումներ իրականացնող ընկերությունների նկատմամբ կիրառվող փոխադրման սանկցիաների սահմանում, ինչպես նաև ծովում իրականացվող գործունեության արգելքը: Միջազգային ստանդարտներով պահանջվում է, որ հավասարակշռություն ապահովվի օրինական ճանապարհորդողի մուտքը դյուրացնելու և չհիմնավորված պատճառներով կամ անվավեր փաստաթղթերով ճանապարհորդողի մուտքը կանխելու միջև:

Տե՛ս նաև սահմանային հսկողություն, փոխադրողի պատասխանատվության մասին օրենսդրություն, ինքնիշխանություն

սեզոնային միգրանտ աշխատող/ միգրացիա

(seasonal migrant worker/ migration)

Միգրանտ աշխատող, ում աշխատանքը կամ աշխատանքի նպատակով իրականացվող միգրացիան իր բնույթով պայմանավորված է սեզոնային պայմաններով և կատարվում է տարվա որոշակի ժամանակահատվածի ընթացքում: (*«Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 2(2)(բ) հոդված*):

Տե՛ս նաև տնտեսական միգրանտ, միգրանտ աշխատող, ժամանակավոր միգրանտ աշխատող

սենսորներ

(sensors)

Անձանց տեղաշարժը կամ ներկայությունը հայտնաբերող սարքավորումներ: Դրանք ներառում են շարժման սենսորները և ածխաթթու գազի սենսորները: Որոշ սենսորների համար պահանջվում են մարդ–օպերատորներ, մինչդեռ մյուսները տեղակայվում են սահմանի երկայնքով ընկած հեռավոր վայրերում և տեղեկատվություն են փոխանցում սահմանային հսկողության օբյեկտներին:

Տե՛ս նաև ածխաթթու գազի սենսորներ

սեռ

(gender)

Վերաբերում է կանանց ու տղամարդկանց վերագրվող մի շարք դերերի, պարտականությունների, սահմանափակումների, հնարավորությունների և արտոնությունների ցանկացած համատեքստում: Այդ հատկանիշները գիտակցվում են և սոցիալապես ձևավորվում, ժամանակի ընթացքում ենթարկվում են փոփոխության և կարող են տարբերվել մշակույթների շրջանակներում ու դրանց միջև: Սեռի հասկացությունը հարաբերական է և առնչվում է ոչ միայն կանանց կամ տղամարդկանց, այլ նաև նրանց միջև հարաբերություններին:

սեռական շահագործում

(sexual exploitation)

Խոցելի դիրքի, իշխանական դիրքի կամ վստահության ցանկացած իրական չարաշահում կամ դրա փորձը սեռական նպատակներով՝ ներառելով մեկ ուրիշի սեռական շահագործումից գումարային, սոցիալական կամ քաղաքական օգուտ ստանալը, սակայն չսահմանափակվելով դրանով:

սեռական բնույթի բռնի գործողություն

(sexual assault)

Իրական կամ սպառնալիքի ազդեցությամբ սեռական բնույթի ֆիզիկական ներխուժում՝ ուժի գործադրմամբ կամ անհավասար, կամ հարկադրանքի պայմաններում:

Տե՛ս նաև բռնաբարություն

սկզբնաղբյուր հանդիսացող երկիր **(source country)**	*Տե՛ս ծագման երկիր, ուղարկող երկիր:*
սոցիալական կապիտալի փոխանցում **(social capital transfer)**	Միջազգային միգրանտների կողմից իրենց ծագման երկիր փոխանցվող մասնագիտական կարողությունները, հմտությունները, գիտելիքը, գործելակերպերը և գաղափարները: *Տե՛ս նաև դրամական փոխանցումներ*
սովորաբար բնակվելու վայր **(place of habitual/ usual residence)**	Վայր այն երկրում, որտեղ անձը բնակվում է, և որտեղ նա սովորաբար անցկացնում է ամենօրյա հանգստի ժամանակահատվածը: *Տե՛ս նաև սովորաբար բնակվելու վայրի երկիր, հիմնական բնակության վայր, ներքին միգրացիա*
սովորաբար բնակվելու վայրի երկիր **(country of habitual/ usual residence)**	Երկիր, որտեղ անձն ապրում է, այլ կերպ ասած՝ այն երկիրը, որտեղ նա ունի ապրելավայր, որտեղ սովորաբար անցկացնում է ամենօրյա հանգստի ժամանակը: Հանգստի, արձակուրդի, ընկերներին ու հարազատներին այցելելու, գործնական, բուժման կամ կրոնական ուխտագնացության նպատակներով դեպի արտերկիր կատարվող ժամանակավոր ճանապարհորդություններով չի փոխվում անձի սովորական բնակության վայրի երկիրը: *Տե՛ս նաև սովորաբար բնակվելու վայր, բնակություն (կացություն)*
սովորութային իրավունք՝ միջազգային **(customary law, international)**	Միջազգային իրավունքի աղբյուր: Նորմը՝ որպես «սովորութային իրավունք» ճանաչվելու համար անհրաժեշտ է երկու չափորոշիչների առկայությունը՝ պետությունների պրակտիկայի և *«opinio juris»–ի* (հասկացություն, ըստ որի պրակտիկան պահանջվում է գերակա ուժ ունեցող իրավունքով կամ համահունչ է դրան): *Տե՛ս նաև միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներ, միջազգային իրավունք (հանրային), միջազգային իրավունքի սուբյեկտ*
ստրկություն **(slavery)**	Այն անձի կարգավիճակը կամ դրությունը, ում նկատմամբ կիրառվում է սեփականության իրավունք ընձեռող լիազորություններից որևէ մեկը կամ բոլորը (*«Ստրկության մասին» 1926 թվականի կոնվենցիայի 1ին հոդված՝ փոփոխված 1953 թվականի արձանագրությամբ*): Ստրկությունը բնորոշվում է որպես մեկ այլ անձի կյանքի նկատմամբ սեփականության կամ հսկողության տարրերի առ-

կայությամբ, հարկադրանքով և տեղաշարժի սահմանափակմամբ, ինչպես նաև այն փաստով, որ որևէ մեկին ընձեռված չէ գործատուից հեռանալու կամ գործատուին փոխելու ազատությունը (օրինակ՝ ավանդական ստրկացուցիչ աշխատանքը, կախյալ վիճակ ենթադրող աշխատանքը, ճորտատիրական կախվածություն ենթադրող աշխատանքը, հարկադիր աշխատանքը և ծիսական կամ կրոնական նպատակներով ստրկությունը):

Տե՛ս նաև կախյալ վիճակ ենթադրող աշխատանք, երեխայի աշխատանք, պարտքի պատճառով ստրկություն, անազատ վիճակ, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր

սփյուռք (diasporas)

Սփյուռքը լայն առումով բնորոշվում է որպես անհատներ և անդամներ կամ խմբեր, միություններ ու համայնքներ, որոնք մեկնել են իրենց ծագման երկրից, սակայն պահպանում են կապերը հայրենիքի հետ: Այս հասկացությունը տարածվում է արտաբնակ և առավել բնակեցված համայնքների, արտերկրում ժամանակավոր հաստատված միգրանտ աշխատողների, հյուրընկալող երկրի քաղաքացիությունն ունեցող արտաբնակների, երկքաղաքացիություն ունեցող անձանց և երկրորդ/երրորդ սերնդի միգրանտների վրա:

Տե՛ս նաև գաղթ, մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացի

Վ

«վանող–ձգող» գործոններ (push-pull factors)

Միգրացիայի երևույթը հաճախ վերլուծության է ենթարկվում «վանող–ձգող մոդելի» տեսանկյունից, որը մի կողմից ներառում է «վանող» գործոնները (ինչպես, օրինակ՝ տնտեսական, սոցիալական կամ քաղաքական խնդիրներ), որոնք ստիպում են մարդկանց լքել իրենց երկիրը, և մյուս կողմից՝ «ձգող» գործոնները, որոնք գրավում են մարդկանց դեպի նպատակակետ երկիր:

վավերացում (ratification)

Վավերացումը վերաբերում է պայմանագրի «ընդունմանը» կամ «հաստատմանը»: Միջազգային իրավական համատեքստում՝ «վավերացում» նշանակում է. «նման անվանում ունեցող միջազգային գործողություն, որի միջոցով պետությունը միջազգայնորեն հաստատում է իր համաձայնությունը պայմանագրի պարտադիրության վերաբերյալ» (*«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 2(1)(բ) հոդված*): Վավերացման փաստաթղթային գործիքները, որոնցով սահմանվում է պետության համաձայնությունը, ուժի մեջ են մտնում պայմանավորվող պետությունների միջև փոխադարձ փոխանակման, ավանդապահին դրանք ի պահ հանձնելու կամ պայմանավորվող պետություններին կամ ավանդապահին դրանց մասին ծանուցման պահից, եթե այդպես են պայմանավորվել (16–րդ հոդված): Ներպետական համատեքստում դա վերաբերում է այն գործընթացին, որի միջոցով պետությունն ինքնին արտահայտում է իր դիրքորոշումը՝ պայմանագրում ամրագրված պարտավորությունների ընդունման մասին: Մի շարք պետությունների սահմանադրությունների համաձայն, նախատեսվում են ընթացակարգեր, որոնք պետք է պահպանվեն՝ մինչև կառավարությունը կկարողանա ընդունել պայմանագրի պարտադիր բնույթը:

Տե՛ս նաև միացում, փաստաթղթային գործիք, վերապահում պայմանագրի դրույթներից, պայմանագիր

վարչական կալանք (administrative detention)

Անձին իր ազատությունից զրկելու նպատակով պետության իրավասու վարչական մարմնի կողմից իրականացվող միջոց: Մի շարք երկրների օրենսդրությամբ նախատեսվում է՝ անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտներին վարչական կալանքի տակ վերցնելը նրանց կողմից համապատասխան տարածք ժամանելու պահին կամ նրանց արտաքսելու նպատակով:

Տե՛ս նաև կալանք, անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ

վերաբնակեցում (resettlement)

Մարդկանց (փախստականների, ներքին տեղահանման ենթարկված անձանց և այլն) տեղափոխումը սովորաբար երրորդ երկրում գտնվող այլ աշխարհագրական տարածք և միջավայր, ինչպես նաև նրանց ինտեգրումը տվյալ տարածքում և միջավայրին: Փախստականների համատեքստում՝ փախստականների փոխանցումն այն երկրից, որտեղ նրանք ապաստարան են փնտրել այն պետությունում, որը համաձայնել է նրանց ընդունել: Փախստականներին սովորաբար տրամադրվում է ապաստան կամ որևէ այլ տեսակի երկարաժամկետ կացության իրավունքներ և, շատ դեպքերում, նրանք հպատակագրվելու հնարավորություն ունեն:

Տե՛ս նաև երկարաժամկետ լուծում, հարկադիր վերաբնակեցում, ինտեգրում, մշտական բնակություն հաստատող անձինք, փախստական (մանդատի ներքո), հայրենադարձություն

վերադառնալու իրավունք (right to return)

Դա ազատ տեղաշարժվելու իրավունքի մեկ այլ հայեցակետ է: *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թվական) 13(2) հոդվածի համաձայն.* «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի վերադառնալու իր երկիրը»: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի 12(4) հոդվածը սահմանում է՝ «Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից»:

Տե՛ս նաև տեղաշարժվելու ազատություն, մարդու իրավունքներ, հայրենադարձություն, կամավոր հայրենադարձություն

վերադարձ (return)

Ընդհանուր իմաստով, վերաբերում է հետ դառնալու գործողությանը կամ գործընթացին դեպի այն վայր, որտեղից մեկնել է անձը: Այն կարող է տեղի ունենալ երկրի տարածքային սահմաններում, ինչպես՝ ներքին տեղահանման ենթարկված անձանց (ՆՏԵԱ–ներ) և զորացրված մարտիկների դեպքում, կամ հյուրընկալող (տարանցման կամ նպատակակետ) երկրի և ծագման երկրի միջև՝ ինչպես միգրանտ աշխատողների, փախստականների, ապաստան հայցողների և մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացիների դեպքում: Գոյություն ունեն վերադարձի ենթատեսակներ, որոնց միջոցով կարելի է բնութագրել, թե ինչպես է վերադարձն իրականացվում,

օրինակ՝ կամավոր, հարկադիր, աջակցվող և ինքնաբուխ վերադարձ, ինչպես նաև այնպիսի ենթատեսակներ, օրինակ՝ հայրենադարձություն (փախստականների դեպքում), որոնց միջոցով բնութագրվում են, թե ովքեր են մասնակցում վերադարձի գործընթացին:

Տե՛ս նաև աջակցվող կամավոր վերադարձ, վտարում, արտաքսում, հետընդունման [ռեադմիսիայի] մասին համաձայնագիր, ռեէմիգրացիա [վերարտագաղթ], անձին վերադարձնելու թույլատրելիություն, վերաինտեգրում, վերաինտեգրում (մշակութային), վերաինտեգրում (տնտեսական), վերաինտեգրում (սոցիալական), հայրենադարձություն, կամավոր հայրենադարձություն, կամավոր վերադարձ

վերադարձ ենթադրող միգրացիա (return migration)

Իր ծագման երկիր կամ սովորաբար բնակվելու վայր վերադարձող անձի տեղաշարժը, սովորաբար՝ առնվազն մեկ տարի այլ երկրում անցկացնելուց հետո: Այս վերադարձը կարող է կամ չի կարող կամավոր լինել: Վերադարձ ենթադրող միգրացիան ներառում է կամավոր հայրենադարձությունը:

Տե՛ս նաև շրջանառու միգրացիա, հարկադիր վերադարձ, վերաինտեգրում, վերաինտեգրում (մշակութային), վերաինտեգրում (տնտեսական), վերաինտեգրում (սոցիալական), կամավոր վերադարձ

վերաինտեգրում (reintegration)

Անձի կրկին ընդգրկվելը խմբի կամ գործընթացի մեջ կամ կրկին միավորվելը խմբին կամ գործընթացին, օրինակ՝ միգրանտի կրկին ընդգրկվելն իր ծագման երկրի կամ սովորաբար բնակվելու վայրի հասարակությունում կամ կրկին միավորվելն այդ հասարակությանը:

Տե՛ս նաև ասիմիլյացիա (համաձուլում), ինտեգրում, վերաինտեգրում (մշակութային), վերաինտեգրում (տնտեսական), վերաինտեգրում (սոցիալական)

վերաինտեգրում (մշակութային) (reintegration (cultural))

Վերադարձ ենթադրող միգրացիայի համատեքստում, վերադարձող միգրանտի կողմից նրա ծագման երկրի հասարակության արժեքները, ապրելակերպը, լեզուն, բարոյական սկզբունքները, գաղափարախոսությունը և ավանդույթները կրկին որդեգրելը:

Տե՛ս նաև ինտեգրում, վերաինտեգրում, վերադարձ, վերադարձ ենթադրող միգրացիա

վերաինտեգրում (սոցիալական) (reintegration (social))

Վերադարձ ենթադրող միգրացիայի համատեքստում՝ միգրանտի կրկին ընդգրկվելն իր ծագման երկրի սոցիալական կառույցներում: Մի կողմից, դա ներառում է ան-

ձնական կապերի ստեղծումը (ընկերներ, ազգականներ, հարևաններ), իսկ մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակության կառույցների (միավորումներ, ինքնաաջակցման խմբեր և այլ կազմակերպություններ) ձևավորումը:

Տե՛ս նաև ինտեգրում, վերաինտեգրում, վերադարձ, վերադարձ ենթադրող միգրացիա

վերաինտեգրում (տնտեսական) (reintegration (economic))

Վերադարձ ենթադրող միգրացիայի համատեքստում՝ գործընթաց, որի միջոցով միգրանտը կրկին ընդգրկվում է իր ծագման երկրի տնտեսական համակարգում և հնարավորություն է ստանում հոգալու իր ապրուստը: Զարգացման տեսանկյունից՝ տնտեսական վերաինտեգրման նպատակն է նաև օտար երկրում ձեռք բերված «նոու հաուի» օգտագործումը՝ իր ծագման երկրի տնտեսական և սոցիալական զարգացումը խթանելու նպատակով:

Տե՛ս նաև «ուղեղների ներհոսք», ինտեգրում, վերաինտեգրում, վերադարձ, վերադարձ ենթադրող միգրացիա

վերականգնում (restitution)

Որևէ առանձնահատուկ իրի վերադարձ դրա օրինական սեփականատիրոջը կամ դրա կարգավիճակի վերականգնում, փոխհատուցում կամ հատուցում մեկ ուրիշին պատճառված վնասի դիմաց, փոխհատուցում մեկ ուրիշի նկատմամբ ոչ իրավաչափ արարքի կատարումից ստացված օգուտների համար:

վերապահում պայմանագրի դրույթներից (reservation to a treaty)

«Պայմանագրի ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու ժամանակ ցանկացած ձևակերպմամբ և ցանկացած անվանումով՝ պետության կողմից արված միակողմանի հայտարարություն, որի միջոցով նա ցանկանում է բացառել կամ փոփոխել պայմանագրի որոշակի դրույթների իրավական ուժը դրանք տվյալ պետության նկատմամբ կիրառելիս» (*«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 2(1)(դ) հոդված*):

Տե՛ս նաև վավերացում, պայմանագիր

վիզա (visa)

Տվյալ պետության տարածք մուտք գործել, այդ տարածքը լքել կամ այդ տարածքով անցնել ցանկացող՝ քաղաքացի չհանդիսացող անձի անձնագրում կամ ինքնությունը հաստատող վկայականում կատարվող հաստատում պետության իրավասու մարմինների կողմից, որը վկայում է այն մասին, որ, վիզայի տրամադրման պահին, տվյալ մարմնի համոզմամբ՝ փաստաթղթերի տերը համապատասխանում է քաղաքացիություն չունեցող այն անձանց

կատեգորիային, ովքեր, տվյալ պետության օրենսդրության համաձայն, կարող են մուտք գործել տվյալ պետություն, լքել կամ տարանցել այդ պետությունով: Վիզայով սահմանվում են տվյալ պետություն ընդունման չափորոշիչները: Միջազգային գործելակերպում առկա է միտում դեպի մեքենայաընթեռնելի վիզաների տրամադրումը, որոնք համապատասխանում են ԻԿԱՕ (Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության) ստանդարտներին, և տպված են պաշտպանիչ հատկանիշներ պարունակող պիտակների վրա:

Տե՛ս նաև դիմող, կենսաչափություն, գործարարական նպատակով այցելու, ինքնությունը հաստատող վկայական, կարգավիճակի փոփոխություն, ելքի վիզա, անձնագիր, թույլտվություն, ժամանակավոր ճամփորդական փաստաթղթեր, տարանցման վիզա, ճամփորդական փաստաթղթեր (Կոնվենցիա), վիզայի մերժում

վիզայի մերժում (visa refusal)

Ազգային իրավասու մարմինների կողմից կայացված որոշում՝ վիզայի համար դիմումը մերժելու վերաբերյալ: Մերժման համար հիմք կարող է լինել, այդ թվում՝ հանրային կարգի, հանրային առողջության պահպանման նկատառումներով կամ դիմողի մոտ ոչ բավարար միջոցների առկայության պատճառով և այլն:

Տե՛ս նաև վիզա

վկա/վկա լինել (witness)

Անձ, որը որոշ իրադարձությունների կամ փաստերի մասին ունի տեղեկություններ, քանի որ անմիջականորեն ներկա է եղել դրանց: Իրավական համատեքստում՝ այդպիսի տեղեկություններ ունեցող անձ, որը, իրավական տեսանկյունից, ունի այդ տեղեկությունները ընդհանուր իրավասության դատարանում ներկայացնելու հնարավորություն: Ականատես լինել որևէ իրադարձության կամ գործողության: Իրավական համատեքստում՝ ականատես լինել որևէ գրավոր փաստաթղթային գործիքի, ինչպես, օրինակ՝ համաձայնագրի կամ պայմանագրի կատարմանը:

Տե՛ս նաև երդում

վճիռ/դատավճիռ (judgment)

Գործում ներգրավված կողմերի իրավունքների և պարտավորությունների մասին դատարանի կողմից կայացվող վերջնական որոշում:

Տե՛ս նաև արդար դատաքննություն

վստահելիության գնահատում (credibility assessment)	Վիզա կամ իմիգրացիոն [ներգաղթային] այլ կարգավիճակ ստանալու համար ներկայացվող դիմումի վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում ձեռնարկվող միջոց՝ նպատակ ունենալով որոշելու դիմողի ներկայացրած տեղեկությունների համապատասխանությունն ու վստահելիությունը:
վտարման հրաման (deportation order)	Հեռացման մասին հրաման պարունակող վարչական կամ դատական որոշում կամ ակտ: *Տե՛ս նաև վտարում, արտաքսում*
վտարում (deportation)	Պետության կողմից՝ իր ինքնիշխանության իրականացմանն ուղղված գործողություն, որը կատարվում է քաղաքացի չհանդիսացող անձին այդ պետության տարածքից դեպի նրա ծագման երկիր կամ երրորդ երկիր հեռացնելով՝ նրան իր երկրում ընդունելը մերժելուց կամ մնալու թույլտվությունը դադարեցնելուց հետո: *Տե՛ս նաև արտաքսում, անձին վերադարձնելու թույլատրելիություն, հեռացում*

Տ

տարածաշրջանային խորհրդատվական գործընթացներ

(regional consultative processes)

Պարտադիր բնույթ չկրող խորհրդատվական համաժողովներ, որոնցում տարածաշրջանային մակարդակով համախմբվում են պետությունների, քաղաքացիական հասարակության (հասարակական կազմակերպությունների (ՀԿ–ների)) և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները՝ միգրացիայի հետ կապված հարցերը համատեղ քննարկելու նպատակով: Որոշ տարածաշրջանային խորհրդատվական գործընթացների (ՏԽԳ–ների) կարող են մասնակցել նաև այլ շահագրգիռ կողմեր (օրինակ՝ հասարակական կազմակերպություններ կամ քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներ):

Տե՛ս նաև միգրացիայի կառավարում

տարածքային ապաստան

(territorial asylum)

Տե՛ս նաև ապաստան (տարածքային)

տարածքային իրավազորություն

(territorial jurisdiction)

Իրավազորություն որոշակի սահմանված տարածքում առկա կամ այնտեղ բնակվող անձանց մասնակցությամբ տեղի ունեցող դեպքերի նկատմամբ: Դա նաև այն տարածքն է, որի նկատմամբ տվյալ կառավարությունը, դրա դատարաններից կամ ստորաբաժանումներից մեկն իրավազորություն ունի:

Տե՛ս նաև իրավազորություն, ինքնիշխանություն

տարածքային ծով

(territorial sea)

Ծովի առափնյա շերտ, որի վրա տարածվում է ափամերձ պետության ինքնիշխանությունը: Տարածքային ծովի լայնությունը չի կարող գերազանցել տասներկու ծովային մղոնը:

Տե՛ս նաև հարակից գոտի, միջազգային ջրեր

տարանցման երկիր

(country of transit)

Երկիր, որի միջով տեղի են ունենում միգրացիոն հոսքերը (կանոնավոր կամ անկանոն):

Տե՛ս նաև տարանցման պետություն, տարանցում

տարանցման պետություն

(State of transit)

Ընդհանուր իմաստով՝ պետություն, որի տարածքով ուղևորվում է անձը դեպի նպատակակետ երկիր կատարվող իր ճամփորդության ընթացքում: «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» 1990 թվականի միջազգային կոնվենցիայի 6 (գ) հոդվածի

համաձայն՝ «տարանցման պետություն» նշանակում է. «-ցանկացած պետություն, որի միջով անցնում է տվյալ անձը աշխատանք տրամադրող պետություն մեկնելիս կամ աշխատանք տրամադրող պետությունից իր ծագման կամ սովորաբար բնակվելու վայրի պետություն ուղևորվելիս:

Տե՛ս նաև տարանցման պետություն, երրորդ երկիր, տարանցում, տարանցող ուղևորներ, տարանցման վիզա

տարանցման վիզա
(transit visa)

Դեպի երրորդ նպատակակետ՝ իր ճանապարհին գտնվող երկրի տարածքով անցնող քաղաքացի չհանդիսացող անձին տրամադրվող վիզա: Տարանցման վիզա, որը թույլ է տալիս այն ունեցող անձին անցնել վիզան տրամադրող պետության տարածքով կամ այնտեղ գտնվել շատ կարճ ժամանակահատվածի՝ սովորաբար 24 կամ 48 ժամվա ընթացքում:

Տե՛ս նաև տարանցման պետություն, տարանցում, տարանցող ուղևորներ, վիզա

տարանցող ուղևորներ
(transit passengers)

Անձինք, որոնք օդով կամ նավով մեկ պետությունից ժամանում են երկրորդ պետության օդանավակայան կամ նավահանգիստ, և որոնց միակ նպատակը իրենց ճամփորդությունը դեպի երրորդ պետություն շարունակելն է:

Տե՛ս նաև տարանցման պետություն, տարանցում

տարանցող փախստական
(refugees in transit)

Փախստականներ, որոնք ժամանակավորապես ընդունվում են որևէ պետության տարածք՝ որևէ այլ վայր վերաբնակեցվելու պայմանով:

Տե՛ս նաև փախստական, վերաբնակեցում, տարանցում

տարանցում
(transit)

Ուղևորության ընթացքում կատարվող տարբեր տևողության կանգառներ՝ երկու կամ ավելի երկրների միջև ճամփորդելու ժամանակ:

Տե՛ս նաև տարանցման երկիր, տարանցող փախստականներ, տարանցման երկիր, տարանցող ուղևորներ, տարանցման վիզա

տեխնիկական համագործակցություն
(technical cooperation)

Երկու կամ մի քանի մասնակիցների միջև տեղի ունեցող համաձայնեցված գործողություն, որի ընթացքում կատարվում է տեղեկատվության և փորձի փոխանակում որոշակի թեմայի վերաբերյալ՝ սովորաբար կենտրոնանալով պետական կառավարման ոլորտի գործառույթների (օրինակ՝ օրենսդրության և ընթացակարգերի մշակման, ենթակառուցվածքների նախագծման և

ներդրման հարցում աջակցության տրամադրման կամ տեխնոլոգիական առաջընթացի ապահովման) վրա։

Տե՛ս նաև լավագույն (արդյունավետ) գործելակերպեր, կարողությունների զարգացում

տեղահանված անձ

(displaced person)

Անձ, որը փախուստի է դիմում իր պետությունից կամ համայնքից՝ այնպիսի երկյուղի կամ վտանգի առկայությունից դրդված, որոնց հիմքում ընկած են փախստական դառնալու պատճառներից տարբեր այլ պատճառներ։ Տեղահանված անձը հաճախ հարկադրված է լինում փախուստի դիմել ներքին հակամարտությունների, բնական կամ մարդածին աղետների պատճառով։

Տե՛ս նաև դե ֆակտո փախստականներ, էկոլոգիական պատճառներով տեղահանված անձ, արտաքին տեղահանման ենթարկված անձինք, հարկադիր տեղահանում, ներքին տեղահանման ենթարկված անձինք, փախստական

տեղահանում

(displacement)

Անձի հարկադիր տեղափոխումն իր տնից կամ երկրից՝ հաճախ զինված ընդհարումների կամ բնական աղետների պատճառով։

Տե՛ս նաև տեղահանված անձ

տեղաշարժվելու ազատություն

(freedom of movement)

Երեք հիմնական տարրերից բաղկացած մարդու իրավունք՝ երկրի տարածքում տեղաշարժվելու ազատություն *(Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թվական) 13(1) հոդված. «Յուրաքանչյուր ոք ունի տեղաշարժվելու ազատության և բնակության վայր ընտրելու իրավունք յուրաքանչյուր պետության սահմաններում։»)*, ցանկացած երկրից դուրս գալու իրավունք և իր երկիր վերադառնալու իրավունք *(Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թվական) 13(2) հոդված. «Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, այդ թվում՝ իր երկրից դուրս գալու և իր երկիր վերադառնալու իրավունք։»)։ Տե՛ս նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12–րդ հոդված։* Տեղաշարժվելու ազատությունը վերաբերում է նաև տեղաշարժվելու ազատության համատեքստում պետությունների միջև տարածաշրջանային մակարդակում ձեռք բերված պայմանավորվածություններին (օրինակ՝ Եվրոպական միություն)։

Տե՛ս նաև մարդու իրավունքներ, երկրից դուրս գալու իրավունք, երկիր վերադառնալու իրավունք, Շենգենյան համաձայնագիր և կոնվենցիա

տեղափոխություններ ենթադրող միգրացիա

(replacement migration)

Ներքին միգրացիա, որը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մեկ ուրիշ երկիր մեկնող աշխատողների ստեղծած թափուր աշխատատեղերը համալրվում են երկրի մյուս հատվածներից եկած աշխատողներով, կամ միջազգային միգրացիա, որի անհրաժեշտությունը կարող է զգացվել որևէ երկրում՝ ցածր ծնելիության և մահացության ցուցանիշների հետևանքով բնակչության թվի նվազեցմանը և բնակչության ծերացմանը հակակշռելու համար:

«տեղում» (in situ) փախստականներ

(refugees in situ)

Տե՛ս «տեղում» (sur place) փախստականներ

«տեղում» (sur place) փախստականներ

(refugees sur place)

Անձինք, ովքեր փախստականներ չեն իրենց ծագման երկրից դուրս գալու ժամանակ, սակայն ավելի ուշ փախստական են դառնում (այսինքն, նրանց մոտ առաջանում է հետապնդման զոհ դառնալու հիմնավորված երկյուղ): «Տեղում» (sur place) փախստականների մոտ հետապնդման զոհ դառնալու հիմնավորված երկյուղ կարող է առաջանալ նրանց մեկնումից հետո հայրենիքում տեղի ունեցած պետական հեղաշրջման, բռնաճնշման կամ հետապնդման քաղաքականության ներդրման կամ դրա խստացման հետևանքով: Այս կատեգորիային դասվող հայցերը կարող են հիմնվել նաև կացության կամ ապաստարան տրամադրող երկրում ձեռնարկված բարեխիղճ քաղաքական գործունեության տեսակների վրա:

Տե՛ս նաև հետապնդում, փախստական

տնտեսական միգրանտ

(economic migrant)

Անձ, որն իր ծագման երկրից դուրս բնակություն հաստատելու համար լքում է իր սովորաբար բնակվելու վայրը՝ իր կյանքի որակը բարելավելու նպատակով: Այս տերմինը հաճախ մոտավոր իմաստով գործածվում է անձանց տարբերակելու համար այն փախստականներից, որոնք փախուստի են դիմում հետապնդումից խուսափելու համար, ինչպես նաև համանմանորեն գործածվում է այն անձանց առնչությամբ, որոնք փորձում են երկիր մուտք գործել առանց օրինական թույլտվության և (կամ) ապաստան հայցելու ընթացակարգերի՝ առանց բարեխիղճ հիմքի կիրառման: Տերմինը հավասարապես կարող է կիրառվել նաև այն անձանց նկատմամբ, որոնք իրենց ծագման երկիրը լքում են աշխատանք գտնելու նպատակով:

Տե՛ս նաև սահմանակից պետությունում աշխատող, միգրանտ աշխատող, սեզոնային աշխատող

տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ

(economic, social, and cultural rights)

Իրավունքներ, որոնք հավասարության և խտրականության բացառման սկզբունքներին համապատասխան, կոչված են ապահովելու մարդկանց տնտեսական, սոցիալական, մշակութային, նյութական և մտավոր բարեկեցությունը: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների արդյունավետ իրականացման համար հաճախ պահանջվում է պետության ակտիվ միջամտությունը: Միջազգային հանրային իրավունքում այդ իրավունքները թվարկված են *«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին»* 1966 թվականի *միջազգային դաշնագրում.* դրանք են՝ աշխատանքի իրավունքը, աշխատանքի արդար և բարենպաստ պայմանների իրավունքը, արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը, գործադուլի իրավունքը, սոցիալական ապահովության իրավունքը, ընտանիքի պաշտպանության իրավունքը, բավարար կենսամակարդակի իրավունքը, բնակարանի իրավունքը, առողջության իրավունքը, կրթության իրավունքը:

Տե՛ս նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, մարդու իրավունքներ

տոհմ

(lineage)

Նախնիներ և հետնորդներ. ընտանիք՝ վերընթաց կամ վայրընթաց գծով ազգականներ

տվյալների պաշտպանություն

(data protection)

Ինստիտուցիոնալ, տեխնիկական և ֆիզիկական բնույթի մի շարք երաշխիքների կանոնավոր կիրառումը, որոնք ուղղված են գաղտնիության իրավունքի պահպանմանը՝ անհատական տվյալների հավաքման, պահման, օգտագործման և հրապարակման առնչությամբ:

Տե՛ս նաև տվյալների սուբյեկտներ, անհատական տվյալներ

տվյալների սուբյեկտներ

(data subjects)

Անհատներ, որոնց ինքնությունը կարելի է ուղղակիորեն կամ անուղղակիորեն հաստատել որոշակի հատկանիշի կամ հատկանիշների մատնանշմամբ: Նման հատկանիշները կարող են ներառել անուն, նույնականացման համար, նյութական հանգամանքներ և ֆիզիկական, հոգևոր, մշակութային, ինչպես նաև սոցիալ–տնտեսական բնութագրիչներ:

Տե՛ս նաև տվյալների պաշտպանություն, անհատական տվյալներ

տևական լուծում

(durable solution)

Ցանկացած միջոց, որով փախստականների դրության հետ կապված հարցը կարող է բավարար և մշտական լուծում ստանալ՝ նրանց հնարավորություն ընձեռելով ապրելու բնականոն կյանքով: Ավանդաբար, որպես այդպիսին դա կարող է լինել կամավոր հայրենադարձությունը, տեղական ինտեգրումը կամ վերաբնակեցումը:

Տե՛ս նաև ինտեգրում, փախստական (ճանաչված), հայրենադարձություն, վերաբնակեցում, կամավոր հայրենադարձություն

Ց

ցեղասպանություն (genocide)

«Հետևյալ գործողություններից որևէ մեկը, որը կատարվել է ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խումբ լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ, ինչպես օրինակ՝ այդ խմբի անդամների սպանությունը, այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ հոգեկան վնաս պատճառելը, կյանքի այնպիսի խմբային պայմանների վրա միտումնավոր ազդեցություն գործելը, որը կարող է հանգեցնել լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, այդ խմբի շրջանակներում մանկածնությունը կանխելուն միտված միջոցներ սահմանելը, երեխաներին մի խմբից մյուսը հարկադիր տեղափոխելը *(«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թվականի կոնվենցիայի II հոդված, Միջազգային քրեական դատարանի՝ 1998 թվականի Հռոմի կանոնադրության 6–րդ հոդված)*:

Տե՛ս նաև հանցագործություն՝ միջազգային, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, համընդհանուր իրավազորություն

Ու

ուժի մեջ մտնելը
(entry into force)

Այն պահը, երբ պայմանագրի բոլոր դրույթները իրավաբանորեն պարտադիր են դառնում պայմանագրի կողմերի համար: *«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 24–րդ հոդվածի* համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն կարգով և ժամկետում, որը նախատեսված է դրանով կամ համաձայնեցված է բանակցող պետությունների կողմից, կամ, նման դրույթի կամ պայմանավորվածության բացակայության դեպքում՝ այն պահից, երբ բանակցող բոլոր պետությունների կողմից համաձայնություն է հայտնվում պայմանագրով պարտավորված լինելու մասին: Եթե պետությունը միանում է կողմերի շրջանակին պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող ամսաթվով, ապա, եթե պայմանագրով այլ բան չի նախատեսվում, այն տվյալ պետության համար ուժի մեջ է մտնում այդ ամսաթվին: Ժամանակավոր կիրառությունը կարող է թույլատրվել պայմանագրով սահմանված պայմանների ուժով, օրինակ՝ ապրանքների մասին պայմանագրերի դեպքում, կամ երբ դեռևս ուժի մեջ չմտած պայմանագրին միացած մի քանի կողմ որոշում են պայմանագիրը կիրառել այնպես, ինչպես ուժի մեջ մտած լինելու դեպքում: *(«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թվականի կոնվենցիայի 25(1)հոդված)*

Տե՛ս նաև պայմանագիր

ուղարկող երկիր
(sending country)

Երկիր, որը մարդիկ լքում են արտերկրում մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու նպատակով:

Տե՛ս նաև ծագման երկիր, ծագման պետություն

«ուղեղների արտահոսք»
(brain drain)

Պատրաստված և տաղանդավոր անհատների էմիգրացիա (արտագաղթ) ծագման երկրից մեկ այլ երկիր, ինչը հանգեցնում է ծագման երկրում հմուտ կադրերի կրճատմանը:

Տե՛ս նաև «ուղեղների ներհոսք», էմիգրացիա (արտագաղթ), մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացի, «ուղեղների հակադարձ արտահոսք»

«ուղեղների հակադարձ արտահոսք» **(reverse brain drain)**	*Տե՛ս «ուղեղների ներհոսք»*
«ուղեղների ներհոսք» **(brain gain)**	Պատրաստված և տաղանդավոր անհատների իմիգրացիա (ներգաղթ) դեպի նպատատակետ երկիր։ Կոչվում է նաև «ուղեղների հակադարձ արտահոսք»։ *Տե՛ս նաև «ուղեղների արտահոսք», իմիգրացիա (ներգաղթ), վերաինտեգրում (տնտեսական)*
ուղևոր **(passenger)**	Անձ, որը տեղափոխվում է որևէ փոխադրամիջոցով (նավ, ավտոբուս, ավտոմեքենա, օդանավ, գնացք և այլն), սակայն անձամբ չի վարում այն։ *Տե՛ս նաև փոխադրողի պատասխանատվության մասին օրենսդրություն*
ուսանող **(student)**	Անձ, որն ուսումնական դասընթաց է անցնում որևէ հաստատագրված հաստատությունում։

Փ

փախստական (refugee)

Այն անձը, որը. «ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական հայացքի հարելու պատճառով հետապնդվելու հիմնավորված երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ, նման երկյուղի պատճառով, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից»: (*«Փախստականների կարգավիճակի մասին» 1951թվականի կոնվենցիայի 1(Ա)(2) հոդված՝ փոփոխված 1967 թվականի արձանագրությամբ*): Ի լրումն *«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի 1 (2) հոդվածով* սահմանված «փախստական» հասկացության սահմանման՝ *Աֆրիկյան միասնության կազմակերպության (ԱՄԿ)* 1969 թվականի կոնվենցիայով «փախստական» հասկացությունը սահմանվում է որպես ցանկացած անձ, որին հարկադրել են լքել իր երկիրը. «արտաքին ագրեսիայի, օկուպացիայի, օտարերկրյա գերիշխանության կամ այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնք լրջորեն խախտում են հասարակական կարգը նրա ծագման կամ քաղաքացիության երկրի մի մասում կամ ամբողջ տարածքում»: Նմանապես, 1984 թվականի Կարթագենի հռչակագրում նշվում է, որ փախստականներ են համարվում նաև այն անձինք, որոնք փախուստի են դիմում իրենց երկրից. «քանի որ նրանց կյանքին, անվտանգությանը կամ ազատությանը վտանգ է սպառնում համընդհանուր բռնության, օտարերկրյա ագրեսիայի, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ այնպիսի հանգամանքների պատճառով, որոնցով լրջորեն խախտվել է հասարակական կարգը»:

Տե՛ս նաև դիմող, դե ֆակտո փախստական, տեղահանված անձ, հարկադիր միգրացիա, առերևույթ (prima facie), շրջիկ փախստական, փախստականի կարգավիճակի որոշում, տարանցող փախստականներ, «տեղում» (sur place) փախստականներ, արմատներից կտրված մարդիկ

փախստական (առերևույթ) (refugee (prima facie))	Անձինք, ովքեր պետության կամ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ճանաչվել են որպես փախստականներ իրենց ծագման երկրում, առկա հանգամանքներով պայմանավորված՝ օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա, որոնցով արդարացվում է այն կանխավարկածը, որ նրանք համապատասխանում են «փախստականի» կիրառելի սահմանման չափորոշիչներին:
փախստականի կարգավիճակի որոշում (refugee status determination)	Գործընթաց (պետությունների և (կամ) ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից իրականացվող), որի նպատակն է որոշել, թե արդյոք անձը պետք է ճանաչվի որպես փախստական՝ կիրառելի ազգային և միջազգային իրավունքին համապատասխան: *Տե՛ս նաև ապաստան, փախստական*
փախստական (մանդատի ներքո) (refugee (mandate))	Անձ, որը բավարարում է Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) կանոնադրությամբ սահմանված չափորոշիչները և հավակնում է Միավորված ազգերի կազմակերպության գերագույն հանձնակատարի կողմից տրամադրվող պաշտպանությանը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ անձը գտնվում է այնպիսի երկրում, որը *«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիային* կամ *«Փախստականների կարգավիճակի մասին» 1967 թվականի արձանագրությանը*, կամ արդյոք այդ անձը հյուրընկալող երկրում, նշված փաստաթղթային գործիքներից որևէ մեկի համաձայն, ճանաչվել է որպես փախստական, թե ոչ: *Տե՛ս նաև փախստական*
փաստաթղթային գործիք (instrument)	Պաշտոնական կամ իրավական գրավոր փաստաթուղթ, ինչպես օրինակ՝ համաձայնագրերը կամ պայմանագրերը: Պայմանագրի վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու դեպքում, դա այն փաստաթուղթն է, որով հաստատվում է պետության համաձայնությունը պայմանագրով պարտավորված լինելու մասին: *Տե՛ս նաև վավերացում*
փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ աշխատողներ	*Տե՛ս փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ աշխատող/անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ աշխատողներ*

(non-documented migrant workers)	
փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ **(undocumented migrant)**	Քաղաքացիություն չունեցող անձ, որը մուտք է գործում երկիր կամ մնում է այնտեղ առանց համապատասխան փաստաթղթերի: Փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ է համարվում նաև այն անձը, որը՝ ա) չունի երկիր մուտք գործելու համար պահանջվող օրինական փաստաթղթեր, բայց ով կարողանում է այնտեղ մուտք գործել լատենտային եղանակով, բ) մուտք է գործում երկիր և մնում այնտեղ՝ օգտագործելով կեղծ փաստաթղթեր, գ) օրինական փաստաթղթերով երկիր մուտք գործելուց հետո այնտեղ մնացել է թույլատրված ժամկետից ավելի կամ որևէ այլ կերպ խախտել է մուտքի պայմանները և զրկվել թույլտվությունից: *Տե՛ս անօրինական մուտք, անկանոն միգրացիա, չթույլատրված/ապօրինի մուտք/ընդունում*
փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ աշխատողներ/անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ աշխատողներ **(undocumented migrant workers/migrant workers in an irregular situation)**	Միգրանտ աշխատողներ կամ նրանց ընտանիքների անդամներ, որոնց չի թույլատրվում որևէ պետության տարածք մուտք գործել, այնտեղ գտնվել կամ աշխատել: *Տե՛ս նաև օրինական փաստաթղթեր ունեցող միգրանտներ, անկանոն կարգավիճակով միգրանտ, միգրանտ աշխատող, կանոնավոր միգրացիա*
փոխադրամիջոց **(conveyance)**	Օդանավի, նավի, գնացքի, ավտոմեքենայի կամ այլ ավտոտրանսպորտային միջոցի կամ ջրային փոխադրամիջոցի ցանկացած տեսակ, որը կարող է օգտագործվել անձանց՝ դեպի պետություններ կամ պետություններից հետ փոխադրելու համար: *Տե՛ս նաև փոխադրող, փոխադրում*
փոխադրող **(carrier)**	«Փոխադրողը»՝ փոխադրամիջոցի առնչությամբ նշանակում է փոխադրամիջոցի սեփականատեր կամ վարձակալ: «Փոխադրող» հասկացությունը սովորաբար վերաբերում է ավիաընկերությանը, ավտոբուսային կամ երկաթուղային ընկերությանը կամ ծովային ճանապարհորդություններ իրականացնող ընկերությանը: Որոշ պետությունների օրենքների համաձայն՝ այս տերմինը նշա-

նակում է նաև փոխադրամիջոցի ցանկացած սեփականատեր, որն ուղևորներ է փոխադրում իր տարածքում։

Տե՛ս նաև փոխադրամիջոց, փոխադրում

փոխադրողի պատասխանատվության մասին օրենսդրություն (carrier liability law)

Միգրացիայի համատեքստում՝ մի շարք վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցների, այդ թվում՝ տուգանքների կամ այլ պատժամիջոցների նշանակում այն փոխադրողների նկատմամբ, որոնք պետության տարածք են բերում մուտքի վավեր փաստաթղթեր չունեցող անձանց։

Տե՛ս նաև սահմանների կառավարում, ուղևոր, ճանապարհորդող

փոխադրում (transportation)

Ապրանքների և անձանց տեղաշարժը մեկ վայրից մյուսը ցանկացած տեսակի փոխադրողի կողմից։

Տե՛ս նաև փոխադրող, փոխադրամիջոց

փոքրամասնություն (minority)

Թեև «փոքրամասնություն» հասկացության համար միջազգային իրավունքում չկա համընդհանուր ճանաչում գտած սահմանում, փոքրամասնություն կարող է համարվել այն խումբը, որի անդամների թիվը զգալիորեն զիջում է պետության բնակչության մնացած մասի թվին, և որը գտնվում է ոչ գերիշխող դիրքում, որի անդամների էթնիկական, կրոնական կամ լեզվական հատկանիշները տարբերվում են բնակչության մնացած մասի նույն հատկանիշներից և որոնք, առնվազն անուղղակիորեն, համերաշխություն են դրսևորում իրենց մշակույթը, ավանդույթները, կրոնը կամ լեզուն պահպանելու հարցում։

Տե՛ս նաև փոքրամասնությունների պաշտպանություն, խոցելի խմբեր

փոքրամասնությունների պաշտպանություն (protection of minorities)

Իրավական նորմեր, որոնցով փոքրամասնություն կազմող խմբերին և այդպիսի խմբերի առանձին անդամներին առաջարկվում է պաշտպանություն՝ երաշխավորելով այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են իրենց մայրենի լեզուն ազատորեն օգտագործելու իրավունքը, իրենց կրոնն ազատորեն դավանելու իրավունքը և այլն։ Տե՛ս նաև *«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի 27–րդ հոդվածի դրույթները։*

Տե՛ս նաև մարդու իրավունքներ, փոքրամասնություն, խոցելի խմբեր

փրկարարական աշխատանք ծովում

(rescue at sea)

Իրավիճակ, երբ ջրային փոխադրամիջոցն օգնություն է տրամադրում ծովում աղետալի իրավիճակում հայտնված անձին կամ նավին: Ծովում աղետալի իրավիճակում հայտնվածներին փրկելու պարտականությունը խիստ սահմանված է ինչպես պայմանագրով, այնպես էլ միջազգային սովորութային իրավունքով: Փրկարարական աշխատանքների համակարգման համար պատասխանատու պետությունը բանակցում է դեպի անվտանգ վայր ափհանելու հարցի շուրջ: Աջակցություն տրամադրող պետությունը կարող է մերժել նավից մարդկանց իջեցումը և կարող է պահանջել, որ անձնակազմը լքի իր տարածքը: Այն կարող է նաև ափհանման համար սահմանել պայմաններ, ինչպես օրինակ՝ վերաբնակեցման, հարցազրույցի, վերադարձի և այլ առումներով, որոնք պետք է բավարարվեն դրոշի պետության, երրորդ պետության կամ միջազգային որևէ կազմակերպության կողմից:

Տե՛ս նաև դրոշի պետություն, ջրային փոխադրամիջոց

Ք

քաղաքական հայացք
(political opinion)

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայով սահմանված հիմքերից մեկը, քաղաքական հայացքի հիմքով հետապնդման դեպքում ենթադրվում է, որ անձն ունի կամ նրան վերագրվում է մի կարծիք, որն արտահայտվել կամ որն արտահայտելու համար նա մեղադրվում է, և որը հայտնվել է իշխանությունների ուշադրության կենտրոնում: Այդ հիմքը վերաբերում է նաև այն ենթադրությանը, որ կարծիքը, որը թեև դեռևս չի արտահայտվել, կարտահայտվի, և արտահայտվելու դեպքում իշխանությունները հանդուրժողականություն չեն դրսևորի:

Տե՛ս նաև փախստական

քաղաքականություն
(policy)

Ընդհանուր սկզբունքներ, որոնցով կառավարությունը ղեկավարվում է իր հանրային գործերը կառավարելիս:

Տե՛ս նաև միգրացիայի կարգավորում, միգրացիայի կառավարում

քաղաքացի
(citizen, national)

Անձ, որը ծնունդով կամ հպատակագրմամբ, քաղաքական համայնքի անդամ է, ունի այդ համայնքի հպատակություն և բոլոր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից և պաշտպանությունից օգտվելու իրավունք. այդ պետության անդամ է՝ օժտված դրա բոլոր արտոնություններից օգտվելու իրավունքով:Տվյալ պետության քաղաքացիությամբ օժտված անձ:

Տե՛ս նաև քաղաքացիություն, հպատակագրում, երրորդ երկրի քաղաքացի

քաղաքացիական և քաղաքական իրավունքներ
(civil and political rights)

Սովորաբար գործածվում է «*Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին*» 1966 թվականի միջազգային դաշնագրում պարունակվող տարբեր իրավունքների նկարագրության համար (օրինակ՝ ինքնորոշման իրավունքը, բնական հարստությունների և ռեսուրսների ազատ տնօրինման իրավունքը, խտրականության բացառումը, տղամարդկանց ու կանանց հավասար իրավունքները, կյանքի իրավունքը, խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու ազատությունը, ստրկության կամ անազատ վիճակի մեջ չլինելու ազատությունը, կամայական ձերբակալման կամ կալանավորման չենթարկվելու ազատությունը, պետության տարածքում ազատ տեղա-

շարժվելու ազատությունը, անձի ազատության և անվտանգության իրավունքը, դատարանների առջև հավասարությունը, քրեական մեղադրանքների մասով անկողմնակալ տրիբունալի կողմից արդարացի ու հրապարակային լսումների իրավունքը, հետադարձ քրեական պատասխանատվության արգելքը, ընտանեկան կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության իրավունքը, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, արտահայտվելու ազատությունը, խաղաղ հավաքների իրավունքը, միավորումներ կազմելու և պետական գործերին մասնակցելու իրավունքը)։

Տե՛ս նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, մարդու իրավունքներ, շեղում, մարդու անքակտելի իրավունքներ

քաղաքացի չհանդիսացող անձ

(non-national)

Տվյալ պետության քաղաքացի չհանդիսացող անձ։

Տե՛ս նաև օտարերկրացի, երրորդ երկրի քաղաքացի

քաղաքացիության ձեռքբերում

(acquisition of nationality)

Պետության քաղաքացիություն ձեռք բերելը ծնունդով տվյալ երկրի քաղաքացի չհանդիսացող անձի կողմից՝ անձնական կարգավիճակի փոփոխությունից հետո անձի դիմումի հիման վրա կամ մեկ պետության կողմից մեկ այլ պետությանը տարածք զիջելու արդյունքում։

Տե՛ս նաև քաղաքացիությունից զրկելը, քաղաքացիությունը կորցնելը, քաղաքացիություն [nationality]

քաղաքացիություն (citizenship, nationality)

